

ԵԿԱՆ ՄԱՆՈՒԵԼԱՆ

ଫୋଟୋଗ୍ରାଫ୍ସ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

891 99, 09

11-27

Բ Ե Տ Լ Ի Ա
Տիգրանական մատ. Ն. Աղավելիսից, Պօլից. 7
1911

100p.

1132-46

891	99.09	Музыкальный
V-28	Проводник	группы.
	артистический	V-5

ELOS MUL 45

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՑԵԱՆԻ № 69

891.99.09

Ա-27
Կ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆ

ԱՌԱՍՎԱԿԱՎԱՅՐ ԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



24 JUN 2013

64.477

13 APR 2011

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ վիպագրութիւնը կը տափ հինգերորդ պրակում: Վեցումն, իբրեւ յաւելած, կտանք հին գրականութեան եւ Մխիթարեանների գործունէութեան համառօս տեսութիւնը:

L. U.



1132
46

80-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐԸ

ԱՄԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Մենք տեսանք իր տեղում, թէ ինչ խոր և անբուժելի վէրք էր բացւել հայերի մէջ, երբ 61-ը յօդւածը, որ խոստանում էր Տաճկահայոց կեանքի, գոյքի և պատի ապահովութիւն, բոլորովին ոչինչ չը տւեց, և ընդհակառակ՝ առաջին յեղափոխական շարժումը գրգռեց սուլթանի զայրոյթը, որ առիթ տւեց վրէժինդրութեան և նորանոր ճնշումների։ Այդ համազգային ընդհանուր վշտին միացան ուրիշ դժբախտութիւններ։ Մինչև այդ ժողովուրդը տէրութեան հովանաւորութեան ներքոյ՝ իր բոլոր հոգեկան կարուրողութիւնը նւիրել էր խաղաղ կուլտուրական աշխատանքի, բայց այժմ նա զգաց, որ իր գոյութեանը, իբրև առանձին ազգութեան, վտանգ է սպառնում։ Եւ հայի մէջ ընականաբար ծնունդ առան երկիւղը և ինքնապաշտպանութեան զգացմունքը։ Իսկ վհատութիւնը կաշկանդում և սպառնում է ոչ միայն անհատական, այլ և ամբողջ ազգի ստեղծագործական ոյժերը։

Այդպէս էլ եղաւ մեզնում։ Եւ ահա ի՞նչու 80-ական թւականները նշանաւոր եղան իրանց կատարեալ ամլութեամբ։

1881 թ. մայիսի 26-ին կովկասի փոխարքայ Միւ Հայերի խալի Նիկալաևիչը բարձրաստիճան անձանց ներկայութիւններ կարդաց իր հրաժարականը, ընդհանուր ցաւ-

պատճառելով ունկնդիրներին: Հետևեալ օրը Թիֆլիզը ներկայացնում էր մի տխուր տեսարան: Ժամը 10-ին զանգակների ձայները և թնդանօթների որոտումները յայտարարում էին, որ նորին բարձրութիւնը մեկնում է Թիֆլիզից, նա, որ ընդհանուրի սիրելին էր: Փոխարքայի հեռանալը զգալի էր մանաւանդ հայերի համար, որովհետեւ նրա օրով էր ծաղկել հայերի մտաւոր անդաստանը: Հետևեալ 1882 թ. ժամանեց Թիֆլիզ Կովկասի կառավարիչ իշխան Դանգուկով-Կարսակովը: Նոյն այդ տարւայ օգոստոսի 20 մինչև սեպտ. 12 տեղի էին ունենում ուսուցչական ժողովներ, որոնց նպատակն էր հայոց ծխական դպրոցների բարեկարգութիւնը: Ի՞նչ ճառախօսութիւններ, ինչ ուղեւորութիւն, ինչ հրաւերներ և ճաշկերոյթներ Թիֆլիսի հասարակութեան կողմից:

Բայց աւագ, սա առաջին և վերջին ժողովն էր, այլ ևս չը կրկնեց: Ժամանակը փոխւել էր: Այսուհետեւ հայի բազգի անիւր շուրջ եկաւ, և տեղի ունեցան մի շարք անակնկալ բարոյական հարւածներ: 1882 թ. դեկտ. 6-ին վախճաննեց Գէրգ Դ հայոց կաթողիկոսը: Հայերի գլուխը խառն էր նոր կաթողիկոսի ընտրութեամբ: Առաջին թեկնածուն կ. Պօլսի ներսէս պատրիարքն էր, որ յամառ կերպով հրաժարում էր, պատճառ բերելով իր հիւանդութիւնը—շաքարախտը, և վերջը մեռաւ: Ահա մի այսպիսի ժամանակ, երբ Հայրապետական Աթոռը թափուր էր մնացել, հրաման է գալիս փակել հայոց ծխական դպրոցները: Դպրոցների թիւը համառ էր 700-ի, ուսուցիչներ 900, մի տասնեակ հազար աշակերտներ: Դպրոցը զիսաւոր սիւնը և յենարանն էր հայի կրթութեան: Դպրոցը հայի համար երկրորդ եկեղեցու նշանակութիւն ունէր, ինչպէս ասել է ուու-

սաց շրջանապին տեսուչը: Հասկանալի է, թէ որ աստիճանի սարսափելի հարւած էր դա հայերի համար: Մի ուրիշ անախորժութիւն կրեց ժողովուրդը, երբ տեսաւ, որ ազգից ընտրւած թեկնածուներից հաստատւել է երկրորդը, Մակար արքեպիսկոպոսը: Զնայած, որ նոր կաթողիկոսը, ազատասերների սրտովը չէր, բայց նա արդարացրեց ժողովրդի յոյսերը: Մի տարուց յետոյ 1886 թ. սեպտեմբերին վերաբացւեցին փակւած զպրոցները, բայց որոշ սահմանափակումներով: 1886 թ. հայ ազգը տեսաւ երկու մեծ կորուստ: Նշանաւոր վիպասանները՝ Բաֆֆին և Ծերենցը, վախճանւեցին՝ սուղի մէջ ձգելով համայն ազգը: Անմխիթար գրութեան մէջ էին և մամուլը, և գրականութիւնը և թատրոնը:

ՄԱՐԴՈՒԼ

Մի տարտամ գրութիւն էր ներկայացնում լրապրութիւնը: Լրադրի ծնունդը և մահը յաջորդում էին միմեանց: 1882 թ. դադարեցին «Փարոս «Հայաստանի» Մօսկւայում» և «Առողջապահական թերթ» երևանում: Մի քանիսն էլ մի երկու տարի քաշ տալով իրանց գոյութիւնը, անհետանում էին ասուպի պէս: «Վարժարանը» սկսւելով 1882 թ., քիչ յետոյ 1884 թ. այլ ևս չկար: Նոյն տարին դադարեց երևանի «Պատկը»: Ա. Հախումեանի «Գործը» երկու տարւայ ընթացքում տւեց ընդամենը երկու գիրք և դադարեց 1884 թ. Դա մի դժբախտ տարի էր և «Մշակի» համար: Խմբագրի ահազին ապարանքը իր գեղեցիկ պարակով և թատրոնով ձեռքից գուրու եկաւ, շնորհիւ ահազին պարտքերի: Այսուհետև Արծըունին ուղեղորւեց արտասահման իր յոգնած ոյժերը կազդու-

բելու նպատակով։ Այդ տարին ներքին գործոց մինիստրի հբամանով դադարեց «Արձագանքը»։

Նրա հրատարակութիւնը վերականգնեց ուժ ամսից յետոյ։ «Մեղւի» մահը և «Մշակի» վերածնունդը կատարեց միաժամանակ։ 1887 թ. անհետացաւ նաև «Մանկավարժանոցը», որ հրատարակում էր Խորէն ծ. վ. Ստէփանէն։

Մամուլի այս անկայուն գրութիւնը այնպիսի տպաւորութիւն էր գործում, կարծես մի վարակիչ ախտ էր երկացել և բնաջինջ արել բոլոր լրագիրները։ Բայց համաճարակը բոլորին չտարաւ։ Այդ տարիներում հիմնած մի քանի պարբերական հրատարակութիւնները աւելի կենսունակ էին և աւելի երկար կեանք ունեցան։

Մակայն ութսունական թւականները ունեին և իրանց պայծառ կողմերը։ Միաժամանակ զարգացան, եւրօպական մտքով, գեղարւեստի երկու ճիւղերը՝ նկարչութիւն և երաժշտութիւն, որ սերտ կառւած էր երգի և առաջինի ներկայացուցիչն էր Բաշինջաղեանը, իսկ երկրորդինը՝ Կարա-Մուրզան։ Պայծառ կողմերից էր և այն, որ նոյն 80-ական թրւականներին ծնունդ առաւ մեզնում մանկական դրականութիւնը և մշակւած հերթակը, շնորհիւ Աղայեանի։ Այդ մասին աւելի մանրամասնօրէն կը խօսենք քիչ յետոյ։

«Աղբիւր»։ 1883 թ. Տ. Նաղարեանը հիմք դրեց «Աղբիւր» մանկական ամսագրին, որ նորութիւն էր մեզնում և եկաւ լրացնելու մեր գրականութեան մի պակասը-մանկական բաժինը։ «Աղբիւր» ամսագիրը, ի միջի այլոց, ունեցաւ այն նշանակութիւնը, որ միջոց տւեց Դ. Աղայեանին ասպարէզ գալ իր իսկական կոչումով։ Բացի Աղայեանից, աշխատակցում էին

Ռաֆֆի, Պոօշեան, Գ. Բարխուդարեան, Յ. Յովհաննիսեան և այլն։ «Արձագանքը», որ վերսկսւեց 1885 թ. նոյնպէս երկար կեանք ունեցաւ և դադարեց 1898 թ. սկզբում ոչ իր բնական մահով։ Իր գոյութեան ընթացքում երեք անգամ փոփոխութեան ենթարկվեց։ Սկզբում սոսկ շաբաթաթերթ, յետոյ մի տարի պատկերագր, այնուհետեւ դարձաւ—ամենօրեայ և հասարակական օրգան։ Արձագանքին աշխատակցում էին շատ գրողներ՝ Թաֆֆի, Երիցեան, Բալասանեան, Սիւլիւլ (Պատկանեան) Գ. Բարխուդարեան, Զմշկեան, Կ. Կոստանեան և այլն։

Այսուեղ առաջին անգամ ասպարէզ եկան Շիրվանզադէն իր անդրանիկ մէպերով, նոյնպէս և Փափազեան, Մուրացան և Նար-Դոսը։

1883 թ. հիմնեց «Նոր Դարը» Ա. Սպանդաւ-Նոր-Դար։ Իմբագրութեամբ։ Պատկանում էր պահպանողական կուսակցութեան, կազմելով հակադիր բանակ «Մշակի» դէմ։ «Նոր Դարը» այն նշանակութիւնն ունեցաւ, որ համախմբեց իր շուրջը այն դրողներին, որոնք իրանց հայեացքներով հակառակ լինելով աղատամիտ գաղափարներին, տեղ չունեին գրելու։ «Նոր Դարի» հանդէս դալով ասպարէզ եկան աշխատակիցներ, որոնք կազմում էին լրագրի սիւները։ Դրանք են Մուրացան և Նար-Դոս։ Երկու կուսակցութիւնների մէջ մի առանձին բանակ էր կազմում Աբ. Յովհաննիսեանը։

«Նոր Դարի» և «Արձագանքի» մէջ այն տարբերութիւնը կար, որ երկրորդի խումբը կազմւած էր գանք։ մեծ մասամբ բարձր կրթութիւն ստացած անձերից, իսկ Նոր Դարի աշխատակիցները միջնակարգ կրթութեան տէր անձերից։

Սպանդարեանը յոխորտանքով ասում է, որ իր

շուրջը տիրում էր «մեռելային լուսթիւն», և ինքը եկել է զարթեցնելու թմբած ոյժերը, առաջ՝ մղելու ժողովրդի մէջ առողջ ձգտումներ:

«Նոր Դարը» աշխարհ եկաւ մեծաղղորդ խօսքերով: Խմբագիրը սկզբից և եթ յայտարարեց, որ եկել է պաշտպանելու լեզուն, եկեղեցին, պատմական յիշատակարանները, աւանդութիւնները և այն, և այդ մտքով իր լրագիրը համարում է «ազանպանողական»: Բայց նա միենայն ժամանակ պէտք է արմատախիլ անէ, հարւածէ այն ամենը, ինչ որ գէմ է հասարակութեան շահերին, ինչ որ թունաւորում է ժողովրդի մտաւոր բարոյական զարգացումը: Այդ մըտքով նա «ազատամիտ» է, «արմատական» է: Խղճի, մտքի ազատութիւնը ընդունելով, հասարակութեան և եկեղեցու կենսական շահերի պաշտպանութիւնը՝ իրեն սզգունք է ընդունում «Նոր Դարը»:

Այստեղից հետեւում է, որ «Նոր Դարը» թէ ազանպանողական էր թէ ազատամիտ և թէ արմատական, բարիկալ:

Բանակուիր վարում էին ամենակատաղի կերպով, առանց խնայելու հակառակորդի ինքնասիրութիւնը: Փոխադարձ վիրաւորանքները անպակաս էին: Արծրունին նրանց կնքում էր տիրամար, տալիկար, տգէտ, ապուշ, իգիոս մականուններով:

«Մեղու» «Մեղուն» աշխատում էր իր հակառակորդին ներշայասահայցնել իրքի վնասակար գործիչ, որովհետեւ քառոպում էր կօսմօպօլիտութիւն, հայ եկեղեցին աղանդ էր համարում, անւանարկում էր հիմնարկութիւնները և նրանց վարիչներին:

«Արաքս» 1877 թ. Ս. Գուլամիրեանը Պետերբուրգում սկսեց հրատարակել «Արաքս» ամսագիրը: Բացի բազմաթիւ ինքնուրոյն և թարգմանական բանաստեղծա-

կան գրւածքներից, այստեղ կարելի էր գտնել հարուստ տեղեկութիւններ՝ վերաբերեալ Հայաստանի վիճակին, գաւառների գրութեան, հայերի ընթացիկ կեանքի խոշոր երևոյթներին և այլն: «Արաքս» սիրալիր ընդունելութիւն գտաւ հասարակութեան կողմից, չնայած բաժինների խառնիխուռան դասաւորութեան, երկար ապրեց և մեռաւ հրատարակչի հետ միասին: Յիշատակելու արժանի է նաև Մ. Բարխուդարեանի խմբագրութեամբ հրատարակւող վեցամսեայ հանդէսը, «Հանդէս գրականական և պատմական», որ սկսեց Մօսկվայում գեռ և նրա ուսանողութեան տարիներում (1888—1890 թ. թ.), երեք տարւայ ընթացքում նա տւեց 4 խոշոր հատորներ, որոնց մէջ զետեղւած են Պատկանեանի, Պոօշեանի, Ազայեանի Շահազիզեանի, Նալբանդեանի, Յովհաննէսեանի, Ծատուրեանի, Մանսուէլեանի բանաստեղծութիւնները. նոյնպէս Նազարեանի, Նալբանդեանի անտիպ գրութիւնները և նամակները:

Գրականութեան մէջ ևս չէր նկատւում կենդանութիւն: Բանաստեղծութիւնը նշանաւոր գործեր չարտագրեց, բացի Պատկանեանի «Ազատ երգերից»:

80-ական թւականներին թատերագիրներ այլ թատրոն ևս չկային, բացի Սունդուկեանից որ ոչինչ նոր բան չարտադրեց: Համեմատաբար աւելի բեղմնաւոր էր Ռաֆֆին, որ տւեց «Սամւէլլը», «Պարոյր Հայկացն» և այլն: Անշուշտ նա աւելի մեծ արդիւնք ցոյց կտար, եթէ մահը չփանգարէր (1888):

Խղճալի գրութեան մէջ էր և քննադատութիւնը:

Իսկ նոր սերունդը գեռ պատրաստ չէր: Գրաքննադատութիւնը կան ասպարեզին նա տիրացաւ միայն 90—թւականներին: Նոր և ապագայ խոստացող երիտասարդ գր-

բողներ հանդէս եկան: Շիրվանդադէն հրատարակում է «Գործակատարի յիշատակարանը» և իր առաջին վէպիկները՝ «Օրիորդ Լիզա», «Հրդեհ նաւթահանքում»: «Մեղուն» համակրութեամբ է խօսում «Նորերից մէկը» պատմւածքի մասին, հեղինակի մէջ տեսնելով գրելու ձիք:

Մուրացանի «Բողոքականի ընտանիքը» տենդենցիօք վէպը մեծ աղմուկ է առաջացնում, դրզուելով ազատամիտների զայրոյթը:

Համարեա միենոյն ժամանակ սկսում են յայտնել մի քանի վիպագիրներ, որոնք հետեւալ դարեւշը անուն հանեցին: Այդպիսի սկսնակներ էին Փափագեան և Նար-Դոս:

Չատ նշաններից երեսում էր, որ բանաստեղծութեան համար էլ շուտով պիտի բացւի մի նոր շըջան: «Աղբիւրի», «Արաքսի», Բարխուդարեանի «Հանդէսի» մէջ արդէն երեսում էին նոր բանաստեղծներ, որոնք մինչ այդ անյայտ էին:

Բանաստեղծներից ամենից առաջ ասպարէզ եկաւ Յ. Յովիաննէսեան, որ դեռ ևս Մօսկուայի պատմակեղութական ֆակուլտետի ուսանող էր, և նրա առաջին փորձերը հրատարակւեցին 1887 թ. ուսանողների գրական ընկերութեան նախաձեռնութեամբ և ծախսով:

Նոյն այս տարիներում սկսում է հետաքրքրութիւն գէպի ժողովրդական բանահիւսութիւնը: Նաւասարեանը մէկը միւսի ետևից լոյս էր ընծայում «Հայ ժողովրդական հէքիաթների» ժողովածուներ: Քամալեանը սկսում է մշակել այդ հէքիաթները: Մ. Աբեղեանը հրատարակում է «Դաւիթ—Մհերի» վարեանտը և տալիս է նրա գնահատութիւնը:

Այս գրական շըջանի մասին խօսք կինի իր

տեղում: Այժմ հարկաւոր է խօսել և այն ժամանակւայ գեղարւեստի և թատրոնի մասին:

ԹԱՏՐՈՆ

Խխճալի դրութեան մէջ էր նամանաւանդ թատրոնական գործը: 1882 թ. աշնան Թիֆլիսում այլ ևս ոչ մի պօլսեցի գերասան չկար: Ասպարէզը մնաց տեղական ոյժերին: Կազմւեց մի նոր խումբ Զմշկեանի զեկավարութեամբ հետեւեալ անձերից. Շամիրամ Փաշայեան-Տէր Գրիգորեան, օր. Վարդուհի, օր. Հովհաննէս, օր. Անուշ: 1882/83 սէզօնի ընթացքում խումբը աւեց Արծրունու թատրոնում մի շարք ներկայացումներ՝ Ակամայ բժիշկ, Պեպօի տկնուրը, Քանդածօջախ, Նկարիչներ, Ընտանեկան փոթորիկ, Պատիւ և փող (դրամա Զմշկեանի), Աշնանային երեկոյ, Շէյլօկ, Գիշերայ սաբրը խէր է, Աղքատութիւնը արատ չէ (Աստրօվսկու), Սիրոյ փոխարէն սէր, Վայ իմ կորած 50 ոսկի, Արշակ Բ, Շուշանիկ, Թուղթ խաղացողի կեանքը, Փարիզի աղքատներ, Աւազակներ, Արշակ Բ., Էլի մէկ զոհ, Տարտիւֆ և այլն: Խմբի կազմը շարունակ ենթարկւում էր փոփոխութիւնների՝ կամ նոր անդամներ էին աւելանում կամ հեռանում էին և անշախ ներկայացումներ տալիս:

1883 թ. Զմշկեանի խմբին աւելացաւ պօլսեցի գերասան Թուրեանը, որի կօմիկական տաղանդը գնահատութեան արժանացաւ: Նա իր հետ բերած ըէպերատուրից մի քանիսը բեմ հանեց (Դօն-Գրիգօրիօ, Խենթերու բժիշկը, Աստղագէտ):

1884 թ. Զմշկեանի խմբին միացան Սաֆրազեան և տ. Ալմա, նրա ամուսինը: Զնայած այսպիսի լաւ կազմի, որի մէջ աւելացան նոր ոյժեր,

թատրոնը այնուամենայնիւ չվերականգնեց: Ամենքը դժողոն էին՝ թէ իրանք գերասանները և թէ հասարակութիւնը: «Մեղուն» գանգաւում էր, թէ ահա երկու տարի է Թիֆլիսը զուրկ է կանոնաւոր ներկայացումներից: «Արձագանքը» յարձակւում էր Զմշշկեանի խմբի վրա: Զմշկեանը իր պատասխանի մէջ խոստովանում է, որ, յիրաւի, թատրոնը հոգեարքի մէջ է:

Ս. Արծրունին 1885 թ. «Մեղք» մէջ ողբում է թատրոնի ներկայ վիճակը, որովհետեւ հասարակութիւնը մնացել է շւարած, դերասանները աղքատութեան մասնած, տաղանդները կորչում են, զրոյների ձեռքից զրիչը վայր է ընկել, կեանքի մէջ տաղտկալի դատարկութիւն է աիրում: Աննախանձելի էր խմբի և առհասարակ դերասանների դրութիւնը: Ներկայացումից այնքան եկամուտ չէր լինում, որ իւրաքանչիւր անդամ իր օրւայ պարէնը հայթայթէր:

Ուստի ամեն մէկը աշխատում էր իր գլխի ճարը տեսնել, ներկայացումներ տալ:

Այս վատ ժամանակ ասպարէզ եկան նոր սկսնակ բասաններ դերասաններ՝ Վրոյր, Պարոն-Մարգսեան, Արտաշէս, Սարգսեան ամուսիններ և այլն: Բայց թատրոնը, ինարկէ, նրանց չէր տալիս և օրւայ հացը:

Արծրունու թատրոնը թանգ լինելով՝ անմասչելի էր: Այնտեղ ներկայացումներ տալիս էր միայն Զմշշկեանը իր խմբով:

Ամառը ներկայացումները տեղի էին ունենում այդիներում: Վրոյրը ներկայացումներ տալիս էր Եւրոպա այգում, Աղայեանը «Էմմէյնի» այգում: Ներկայացման համար ծառայում էր և Ամատունու տունը (Արհեստաւորաց ժողովարան):

Յաջող ներկայացումներ ունենալու համար դե-

րասանները դիմում՝ էին զանագան միջոցների: Աշխատում էին բազմակողմանի դարձնել, մտցնելով ծըրագրի մէջ երգ, նւագ, կենդանի պատկերներ: Ութուունական թւականները նշանաւոր էին նրանով, որ գրեթէ միաժամանակ ասպարէզ են զալիս Գ. Բաշինջաղեան և Կարա-Մուրզա. առաջինը նկարչութեան ներկայացուցիչ, երկրորդը ժողովրդական երգի և երաժշտութեան: Եւ զա այդ ամլութեան շրջանի միիթարական երկոյթներից մէկն էր:

Դերասանների առաջ, սակայն, կար և մի ուրիշ ելք:

Քանի որ Թիֆլիսը անտարբեր էր գէպի դերասանները, մնում էր բախտ որոնել գաւառներում: Սարգարեանը ներկայացում է տալիս Եկատերինադարում, տիկին Փաշայեան Տէր-Գրիգորեանը Բագւում, ուր անյաջողութեան հանդիպելով՝ ուղիորւում է Ախալցխա: Վրոյր և Զարէլ զնում են Ալեքսանդրապոլ: Մանաւանդ գրաւիչ էր Բագուն:

Ահա գէպի այդ հարուստ քաղաքը սկսեցին արշաւանք գործել հայ դերասանները: Նախ Զմշշկեանը, յետոյ Տէր-Դաւթեան, Սաֆրազեան ամուսինները և Աղայեանը: Վերջինիս ներկայացումը շատ անյաջող անցաւ: Ներկայացրեց «Մէր և նախապաշարմունք» և «Կարմիր բրիւկ»: Թատրոնում ընդամենը 10—15 հանդիսական է եղել: Ծախոր ծակելու համար դիմել են ժողովարարութեան, որ պատիւ չէ բերում դերասանին, թէև միւս կողմից՝ հացի խնդիրը գորեղ է և առաջադրում է քաղցած դերասանների առաջ իր, անողոքելի պահանջը: Հասարակութեան անտարբերութիւնն էլ պակաս դեր չէր կատարում դերասանների խեղճութեան մէջ:

Միակ երջանիկը հոչակաւոր Աղամեանն էր, որ

Ներկայացումներ էր տալիս նախ՝ գաւառում (Շուշի,
Ալէքսանդրապոլ, Բագում, և ապա Մօսկվայում, Օդե-
սայում, Պետերբուրգում։ Ամեն տեղ մեծ յաջողութիւն
էր ունենում, քաղում էր գավիճներ, և նրա փառքը
օրէցօր մեծանում էր։

Թիֆլիսում թատրոնը կենդանութիւն էր ստանում միայն այն ժամանակ, երբ Աղամեանը ներկայացնում էր իր բեպերտուարը՝ Համլետ, Կոռուպդօ, Մասկարադ, Օթէլլօ, Լիր արքայ, Ուրիէլ Ակօստա, «Քին:» Զպէտք է կարծել, որ թատրոնը բարձիթողի էր արած: Թատրոնի բարգաւաճման նախանձախնդիր անձինք փորձեր էին անում և միջոցներ առաջարկում ունի կանգնեցնելու Մելազօմենէի ընկած տաճարը: Հէնց առաջինը իրանք գերասանները: Նրանք աշխատում էին ներկայացումը դարձնել աւելի հետաքրքրական և բաղմակողմանի: Այժմ գերասանները աշխատում են վերականգնել 60-ական թւականների վարքագրական և պատմական բեպերտուարը: Երևում էին նաև ինքնուրոյն պիէսներ: Երևում էին բաղմաթիւ թարգմանական պիէսներ: Դերասանները, բացի այդ, աշխատում էին միանալ և մի ուժեղ խումբ կազմել: 1885 թ. Սաֆրազեանը և Տէր-Դաւթեանը ի գիմացնորակազմ խմբի գիմում են ցրւած գերասաններին և ինչպում միանալ: Խմբի մէջ պիտի լինէր և Աղամեանը:

Այնուհետև նորակաղմ խումբը տալիս է մի շարք ներկայացումներ:

Թատրոնի վերանորոգման փորձեր անում էին և առանձին անհատներ: 1884 թ. «Արձագանքի» մէջ կարդում ենք, որ սեպտ. 2-ին տեղի է ունեցել Հայոց Դրամատիկական ակումբի նախապատրաստական ժողովը, որ ընտրել էր մասնագործ թատրոնական գործը

կազմակերպելու համար։ Նախագահ ընտրւած է Արքայի անդամնեան, անդամներ՝ գեներալ Տէր-Ասատրեան, վ. Մութաֆեան, կ. Ամիրաղեան, Գուրգէնբէղեան։ Ներկայացումների կառավարիչ ընտրւում են՝ իշխան Ամատունի, գանձապահ Գ. Սունդուկեան, զրադարձ նազեա Քիշմիշեան։

Բագուն ևս, Թիֆլիսի օրինակին հետևելով, մտածում է թարսնական ակումբ հիմնել, որի օգտին սկսում են ներկայացումներ տալ: Նոյնը տեղի է ունենում և Թիֆլիսում:

Բայց իդուք: Այդ միտումները իրանց նպատակն չը հասան, թատրոնը մնաց իր նախկին դրութեան մէջ: Միայն 1885] 1886 թ. սեպտեմբերից սկսում է Թրամատիկական ակումբի գործունէութիւնը: Նորակազմ խմբի համար հրաւիրում են Պօլսից դերասան-դերասանուհիներ: Բայց որովհետեւ նրանք մեծ ռոճիկ-ներ էին պահանջում, ուստի համաձայնութիւն չկայցաւ: Խումբը կազմում է տեղական ոյժերից մասնակցութեամբ Աղամեանի և մի պօլսեցի դերասանուհու:

Ղեկավարները հազիւ մի տարի կարողացան
պահպանել խումբը, և գործը վերջացրին 3000 ր.
դեֆիցիտով: Եւ այսպէս, հս ոց ներկայացումները
թիվինսում մի առ ժամանակ կեն, հութիւն են ստա-
նում: 80-ական թւականների ըեպերտուարը տարբեր-
ւում էր նախորդ շրջանից: Ֆրանսիական մէլօդրա-
ման համարեա բոլորովին բացակայում է: Միայն եր-
բեմն երևում են բեմի վրա Մի կնոջ տանջանքը,
կատարին Հոռւարդ, Փարիզի առքաններ:

Սյսմ սկսում են տիրապետել պատմական ողբերգութիւնները, վարքագրական կօմեդեաները և

Վարքագրական կոմիտեան
1-132 ԱՄԵՐԻԿԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀՕ. ՌԱՎԱԼ. ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

վոդկիները։ Թարգմանական ըեպերտուարը նոյնպէս
մեծ տեղ բռնում։

Խնքնուրոյն պիեսներից, որոնք յաճախ ներկա-
յացնում էին և մեծ հաճոյք պատճառում հանդիսա-
կաններին, կարելի է յիշել հետևեալները՝ Մադաթ-
եանի «Կոթ-Կոթ»-ը, որ ամենայաջողն է և մնայուն
իր զանազան տիպերով, Սարդարեանի «Օթաճաճալի
քէֆը» և է. Տէր-Գրիգորեանի «Խէչօի թուզը»։ Ինք-
նուրոյն պիեսներից պէտք է յիշել Պարոն-Բէգեանի
երկու գրւածքները՝ «Քամու բերածը քամին կը տանի»
և «Օյինբազ»։ Առաջինի ներկայացման ես ներկայ եմ
եղել և անբաւական մնացի: Գլխաւոր պակասութիւն-
ներից մէկն այն էր, որ կեղտոտ ճանապարհով հարս-
տացած վաճառականը պատժւում է ոչ թէ բնական
ճանապարհով, այլ հեղինակի կամքով։ Իրդեհը այրում
է նրա բոլոր կայքերը, և այսպիսով ապացուցւում է
պիեսի գաղափարը՝ «Քամու բերածը քամին կտանի»:
«Օյինբազ» գրւած է «Պէպօ»-ի հետևողութեամբ և
վերին աստիճանի թոյլ է։

ԳԵՂԱՐԻԵՍ

Նկարչութիւն, երաժշտութիւն, ժողովրդական երգ

Հայ նկար- Հայաստանում նկարչութիւնը իր ծագումն առ-
չութեան նում է ամենահին դարերից։ Հովիւը, որ իր սրնգի
անցեալը վրա մի խաչ կամ աստղ է փորագրում, այդ ժամա-
նակից սկսւում է գեղարւեստը։

Միջնադարեան նկարչական արեսար կրում էր
զուտ կրօնական բնոյթ։ Նիւթերը վերցնում էին
Քրիստոսի կեանքից և հրաշագործութիւններից, կամ
այս կամ այն սուրբի կեանքից։ Միջնադարեան նը-
կարչութեան գլուխ—գործոցը կազմում է մանրա-

նկարը, որով հայոց ազգը կարող է պարծենալ օտարի
առաջ։ Գեղեցիկ ծաղկանկարները, նրանց ճոխ, նուրբ
գոյները, նրանց մէջ թագնւած սիմւոլիզմը—այս բո-
լորը սքանչելի է։ Այդ ծաղկանկարները ցըւած են
բազմաթիւ աւետարանների և այլ կրօնական մա-
տեանների մէջ։ Ծաղկանկարներ ժողովելու գործը
ստանձնել է Գարեգին վարդապետը, որ քըքրելով
բազմաթիւ ձեռագիրներ զանազան գլուխարաններում,
այժմ իր ձեռքի տակ ունի մի պատկառելի թիւ ման-
րանկարների։ Հայր սուրբը դրանց ընդօրինակութիւնը
յանձնել է մի տաղանդաւոր մանրանկարչի, որ կա-
տարում է իր գործը ամենայն վարպետութեամբ,
հարազատութեամբ պահպանելով մանրանկարի ամե-
նանուրը մանրամասնութիւնը և գոյները։ Գարեգին
վարդապետը մտադիր է այդ է ծաղկագրերը հրատա-
րակել, որի համար իր ձեռքի տակ ունի հինգ հազար ը։

Այդ գումարը նրա տրամադրութեան տակ դրել
է ամենայն յարգանքի արժանի տիկին Ադամեանը։

Նկարներ պատահում են եկեղեցիներում։ Ներ-
քին Ագուլիսի մի եկեղեցու պատի վրա նկարւած
էին զանազան տեսարաններ հին ուխտից։ Մի կող-
մում չարի և բարւոյ ծառը իր պտուղներով։ ծառի
տակ մերկ կանգնած են Աղամ և Եւա։ Օձը գլուխը
մօտեցնում է Եւային։ Միւս պատի վրա Գաբրիէլ
հրեշտակապետը փշում է ահազին փողը, և մեռել-
ները յարութիւն են առնում։ Նոյն պատի վրա կըշ-
ուում են հոգիները։ Ամենից սարսափելին գժոխքն է
իր գեհենով։ Դա սատանայի ահազին բերանն է, որից
դուրս են գալիս բոցեր և սատանաները մեղաւորներին
զցում են կրակը։ Տէր-Յակոբ քահանան, որ իր ժա-
մանակի կրթւած մարդկանցից էր և ժողովրդից յարգ-
ւած, ջնջել տւեց դժոխքը, որ սարսափ էր ազգում

ժողովրդի վրա, մանաւանդ մանուկների, որոնց գլուխը ծնողները լցնում էին դժոխային չարչարանքների նըլկարագրութեամբ:

Նկարչութեամբ Նկարչութիւնը սկսում է զարգանալ XIX-րդ դ. զացումը Երկրորդ կիսում:

Առաջին հայ նկարիչը, ակադեմիա աւարտած և բարձրագոյն կրթութեամբ Ստեփանոս Ներսիսեանն է: Նրա քանքարի մասին պատմում են Ստ. Նազարեան, Կրթւած Պոօշեան և Երիցեան: Զնայած իր տաղանդին, նա արտադրեց շատ սակաւ և մեռաւ աղքատութեան մէջ հիւանդանոցում, ծանօթ լինելով մի փոքրիկ շրջանում, չդնահատաւած մեծամասնութիւնից և ներկայ սերնդի համար միանդամայն անծանօթ: Այնքան մոռացւած էր, որ Պոօշեանը հարկ համարեց յայտաբարել «Տարագի» մէջ Ներսիսեանի մասին: Նա, յիշ շելով առաջին հայ նկարչի ձիրքը և մոռացւած լինելը, հրաւիրում էր ամենքին տաղանաքար դնել նրա դամբարանի վրա և յարգել նրա յիշատակը:

Ներսիսեանը ծնւել է Տաճկահայստանում: Սկզբնական ուսումն ստացել է Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում, մի քանի բարերար անձանց հաշով գնում է Պետերուրդ և մտնում գեղարվեստական ճեմարանը, աւարտում և վերադառնում է հայրենիք նկարչի վկայականով: Շուտով նրան հրաւիրում են Շուշւայ դպրոցը: Այնուհետև նա վերադառնում է Թիֆլիս և անձնատուր լինում իր սիրած արևեստին:

Մինչև կեանքի վերջը նա մնաց ամուրի: Մեռաւ 1884 թ. Միքայէլեան հիւանդանոցում: Նրա թաղման ծախսերը հոգացին մի քանի անձինք: Իր շրջանում նա մի յարգւած անձնատորութիւն էր: Գ. Խատիսեանը իր դամբարանական ճառում դրւատում

է նրա ընգունակութիւնը և ազնիւ հոգին: Ստ. Նազարեանը նրան անւանում է «գիտական և հմուտ արևեստագէտ»: Հարց է տալիս նրան, ինչ ծառայութեան մէջ է, արքունի թէ մասնաւոր, որքան են յառաջադիմում նրա ճարտարական գործերը: Յետոյ աւելացնում է «ցաւիմ», զի կոյլ ազգ մեր ոչ կամի ճանաչող լինել արժանաւորութեան հայկազնեայ արանց, և զոր ընդ իս առնեն, ի հարկէ, և ընդ ձեզ առնել ոչ գանդաղեսցին»:

Մի ուրիշ տեղ նրա մասին կարդում ենք: «Նա մեռաւ իր ընդունակութիւնների և ազնիւ հոգու համար, յատուկ չքաւորութեան մէջ: Նա մեռաւ, ինչպէս կվայելէր մի բանաստեղծի՝ նիւթապաշտ և փայլ սիրող ժողովրդի մէջ»:

Նրան կարողացան հասկանալ և գնահատել շատ սակաւ մարդիկ, որոնց թւում շուշեցի հարուստ Համբարձում Հախումեանը: Վերջինիս օժանդակութեամբ նա նկարել է սքանչելի պատկերներ: Նրա վերջին աշխատութիւնները՝ Ս. Սահակ և ս. Մեսրոպ, որոնց պատճէնները տարածւել են ամեն տեղ, զնել է գանձակեցի Ն. Տէր-Ներսիսեանը: Բայց այդ տեսակ օգնութիւնը մասնաւոր էր և պատճական: Նկարիչ ներսիսեանի սիրած ճիւղն էր պատճական նկարչութիւնը:

Նա մտադիր էր վերաստեղծել մեր պատճական անցեալն իր արժանաւոր ներկայացուցիչներով, տալ մի շարք նշանաւոր անձանց կենդանագրեր՝ Գր. Լուսաւորիչ, Վուամշապուհ, Սահակ, Մեսրոպ և այլն: Եթէ յաջողւէր նրան իրագործել իր ծրագիրը, մենք այժմ կունենայինք մեր նշանաւոր նախնեաց խնկելի գէմքերի մի ամբողջ պատկերահանդէս: Այն ինչ նա թողել է միայն սահմանափակ թւով պատկերներ՝ Սա-

հակ և Մեսրոպ և «Ներսէս Վ», որ կախւած է Ներսդպրոցի խոհըրդարանում։ Ստեփաննոս Ներսիսեանի կորուստը խիստ զգալի է մանաւանդ այն պատճառով, որ նա մեր պատմական նկարչութեան միակ ներկայացուցիչն էր՝ և է մինչև այժմ։ Այս անբախտ նկարիչը ժամանակից առաջ էր ընկել, Աքովեանի նման, և երկուսն էլ նման են այն տարափոխիկ թրոշուններին, որոնք ընկերներից առաջ են հեռանում և գալիս են մի երկիր, ուր ձմեռը դեռ ևս իր կատարեալ իշխանութեան մէջ է, և միայն մօտալուտ գարնան նշաններ են երկում։

Բաշինջաղեան Նոյն այն միջոցին, երբ մեռան մէկը միւսի ետեից մեր վետերանները, մեր գեղարւեսաի աշխարհում սկսում են փշել նոր հովեր։ Գ. Բաշինջաղեանը հասարակութեան առաջ դնում է Կովկասի բնութեան գեղեցիկ տեսարանները, իսկ Կարա-Մուրզան բեմից թնդեցնում է իր համերգը և առաջին անգամ զգալ է տալիս քառաձայն երգեցողութեան բոլոր հրապոյրը և ժողովրդական երգի բոլոր քաղցրութիւնը։

Գործի սկիզբը դրւեց և այլ ևս կանգ չառաւ։ Գնալով աճեց, ընդարձակեց իր ծաւալը, և այժմ մենք կարող ենք պարծենալ մի քանի տասնեակ շնորհալի, մինչև անգամ տաղանդաւոր նկարիչների և երաժիշտների անուններով։

Նկարչական ցուցանիշների մասին 1883 թ. Բաշինջաղեանը բաց է անում իր առաջնական ցուցանիշները, ուր ցուցադրւած էին հայի սրտին այնքան մօտ Կովկասեան բնութեան սքանչելի տեսարանները՝ Մասիս, Սևանայ լիճ, Արարատեան դաշտը և Վրաստանի նշանաւոր Ալազանը։ Մամուլը գովասանքով խօսեց ցուցահանդէսի մասին։ Հասարակութեան մէջ շարժւեց մեծ հետաքրքրութիւն, և յա-

ճախորդների թիւը օր աւուր աւելանում էր։ Իսկ երիդասարդներից մի քանիսը այնքան ոգեսորւմ էին, որ բանաստեղծութիւններ էին նւիրում նկարչին։

Առաջին յաջողութիւնը քաջալերեց նկարչին, և նա եռանդով սկսեց շարունակել իր գործը։ Արդէն 1883 թ. նա ցուցադրեց Թիֆլիսում 30 նկար և նոյն տարի Բագւում 40։ Դրանից յետոյ համարեա ամեն տարի ցուցահանդէսներ էր սարքում մեծ մասամբ Թիֆլիսում, յետոյ Բագւում, Հիւսիսային Կովկասում՝ Ռօստովում, Նօւչերկասկում և Բաթումում։ Բաշինջաղեանը ընդհանրապէս վայելել է համակրութիւն մամուլի և հասարակութեան կողմից, չը նայած երբեմն երկացող թեր ու դէմ կարծիքների։ Կովկասեան ցուցահանդէսներում նա ունեցել է իր պատւաւոր տեղը և գրաւել է նաև օտար լրագիրների ուշադրութիւնը։ Բաշինջաղեանը գնահատւած է նաև Կովկասից դուրս։ 1890 թ. Պետերբուրգում բացւած մի նկարահանդէսում դրւած էին նրա երեք սպատկերները («Լուսնեակ գիշեր Թիֆլիսում», «Դեբետ գետը», «Գիշերը», «Լեռան գագաթներ») սպատկերները մեծ հաւանութիւն գտան ըեցենզենտների կողմից և երեքն էլ գնւեցին։ Ահա ինչ է գրում մի ըեցենզենտ Բաշինջաղեանի սպատկերների մասին։ «Մեզ վաղուց չէր յաջողւել տեսնել հարաւային սե, բայց տաք գիշերւայ ու բարձր ամպի վրա ոսկեցող լուսնի փայլի այսպիսի բանաստեղծական և ճիշտ արտայատութիւնը, որպէս այս նոր սկսող երկրանկարչի վրձինն է սպատկերացնում։ Այս թաւշեայ խաւարի շացնող գեղեցկութիւնը, գոհարեղէն աստղերից և լուսնի ոսկեցոյն թույցքներից շողշողող գետի օձապտոյտներում, այնպէս է արտայայտւած, որ մենք չենք տեսնել մինչև անգամ հմուտ նկարիչների գործերում։»

1900 թ. Բաշխնջաղեանը իր արհեստանոցը տեղափոխում է Պարիզ, ուր նա արտադրեց մի քանի նոր պատկերներ, որոնք համաշխարհային ցուցահանդէսում տեղ գտան և մի քանի լրագիրների ուշադրութեան արժանացան:

Նկարներից «Արարատը» Բաշխնջաղեանը նւիրեց պարսից շահին, որի համար ստացաւ Առիւծի ասպետի շքանշան: Մի քանի տարի առաջ նա ստացել էր ոսկի մեղալ կովկասեան ցուցահանդէսում:

Բաշխնջաղեանը գիտէ բնութեան գեղեցիկ տեսարանները վերաստեղծել: Նա հմուտ վարպետ է ամեն անգամ, երբ իր վրձինով կենդանազրում է կտակի վրա պարզկայ կամ ամպշող, խաղաղ գիշեր ձորի մէջ կամ գետի ու լճի վրա: Հիանալի է ջրի փայլուն ծփանքը լուսնի շողերի տակ («Արագան», «Դեբետ» «Սևան») Ոչ պակաս վարպետութեամբ նա գիտէ ներկայացնել լեռների վեհութիւնը աննման գեղեցկութեան հետ միացած («Մասիսը արևածագին») և ծառաստանը իր խաղաղ դրութեան մէջ («Անտառը աշնան»):

Բաշխնջաղեանը սիրում է ընտրել բնութեան մէջ այն վայրկեանները, որոնք համապատասխանում են նրա խաղաղ տրամադրութեան: Նա սիրում է լուսնկայ գիշեր, խորհրդաւոր անդորրութիւն, լեռները արևածագին, արտը անձրկից յետոյ: Նա հմուտ վարպետութեամբ նկարում է և լեռու, և գետ և լիճ:

Բաշխնջաղեանի ծառայութիւնը հայկական գեղարւեստին մէծ է: Նա կենդանադրեց մեր մայրենի բնութիւնը: Բացի այդ, նրա օրինակը խրախուսիչ նշանակութիւն ունեցաւ շատերի համար, և այժմ մենք կարող ենք թւել մի քանի տասնեակ նկարիչների անուններ:

Մեզ համար ամենից սիրելին է Բաշխնջաղեանը, որովհետև տալիս է մեր մայրենի բնութեան տեսարանները: Կան և ուրիշ տաղանդաւոր նկարիչներ, ինչպէս Մահատեսեան, Մախոխեան, Էդգար Շահէն և այլն: Բայց նրանք նկարում են օտար երկրի տեսարաններ, և նրանք աւելի արժէք ունին օտարների համար:

Բաշխնջաղեանը նոյն նկարիչն է և իր «Նկարչի յիշողութիւններ» խորագրով գրքոյի մէջ:

Բաշխնջաղեանի հետ միաժամանակ առաջ եկաւ Կարա-Մուրզան, գեղարւեստի նոր առաքեալը:

Բոլոր հոգով նւիրւած իր սիրած արւեստին, որի Կարամոլեսանդ երկրպագուն էր, օժտւած անխորտակելի կամքով և զարմանալի տոկունութեամբ, պատանու պէս ոգերւած ապագայի հեռանկարով, անվիատ, անխոնջ 15 տարւայ ընթացքում ծառայեց իր սուրբ գործին և իրագործեց իր ծրագիրների գէթ մի մասը:

Ունենալով կազմակերպողի տաղանդ, նա փշում էր տիրապետող նախապաշարմունքը և հայ օրիորդին նեղլիկ խցից հանում էր լոյս աշխարհ, բեմի վրայից երգել էր տալիս հասարակութեան առաջ:

Քրիստափոր Կարա-Մուրզան զրիմցի հայ կաթողիկ էր: Սակայն դաւանական խորութիւն չը կար նրա համար: Հայ լուսաւորչական, հայ կաթողիկ նրա համար միենոյն հայերն են: Երաժշտութեան և երգի սէրը նրա մէջ զարգանում է գեռ ևս մանկական հասակում: Այդ սիրոյ սաղմը զարգացաւ մօր և մի հայ երաժշտի ազդեցութեամբ: Մի որոշ նշանակութիւն ունեցել է ժամասածութիւնը: Սովորելով Ղարա-Բաղարի գարոցում, միենոյն ժամանակ սովորում էր և երաժշտութիւն: Տասը տարեկան նա ձայնագրում էր և նւագում դաշնամուրի վրա:

Հօր նպատակն էր որդուն նւիրել հոգեոր կոչման: Երբ այդ չը յաջողւեց, մտցրեց իր վաճառականական գործի մէջ, բայց գրասենակում հաշիւներ գրելու տեղ, նօտաներ էր զրում: Հայրը վերջապէս ձեռք քաշեց որդուց:

80-ական թւականների սկզբում նա արդէն թիֆուսումն էր և զբաղւած էր խմբի պատրաստութեամբ:

1887 թ. նա տւեց իր առաջին համերգը: Խումբը բաղկացած էր 15 հոգուց, ծրագիրը կազմւած էր ընտիր երգերից: Խրախուսւած առաջին յաջողութիւնից, նա տւեց երկրորդ համերգ, այս անգամ աւելի մեծ խմբով (20 հոգի): Յետոյ Բաշինջաղեանի աջակցութեամբ տալիս էր խառն երեկոյթ: Նկարիչը ցոյց էր տալիս կենդանի պատկերներ, երաժիշտը կառավարում էր երգեցիկ խումբը:

Այնուհետև Կարա-Մուրզան շարունակեց իր գործունէութիւնը՝ և աւելի մեծ խմբով: Եւ այսպէս, ազնիւ գործը սկսում է տարէցտարի աճել և տարածւել Կովկասի հայերի մէջ:

90-ական թւականների սկզբում նա էջմիածնի Գէորգեան ճեմարանում երգեցողութեան և երաժշտութեան ուսուցիչ էր: Հայոց մայր տաճարում առաջին անգամ թնդացին քառածայն երդի քաղցր հընչիւնները, որով նա զրաւում էր ժամաւորների ահագին բազմութիւն:

1893 թ. Կարա-Մուրզան ստացաւ բախտի առաջին հարւածը: Նորընտիր կաթողիկոսը, որ ազգի Հայրիկն էր, հրաժարեցրեց նրան անժամանակ, տարւայ մէջ, և այսպիսով ստեղծւեց Կարա-Մուրզայի համար անելանելի զրութիւն: Դրա պատճառը նախայն էր, որ նա կաթոլիկ էր, թէև աւելի լաւ ազգաւոր, քան թէ այն վանականներից շատերը, որոնք շրջա-

պատել էին վեհափառէն: Երկրորդ պատճառն այն էր, որ կաթողիկոսը կրօնի դէմ էր համարում քառաձայն երգեցողութիւնը, իբր թէ Աստւած տւել է մի ձայն և մի ձայնով էլ պէտք է երգել:

Զրկելով պաշտօնից, Կարա-Մուրզան, որ յուսահատւել չգիտէր, անսպառ եռանդով շարունակեց իր գործունէութիւնը: Բայց անագորոյն մահը խլեց ազգից նրա արժանի գաւակին և վերջ տւեց նրա օգտակար գործունէութեան: Նա մեռաւ սրտի պայթիւնից:

Կարա-Մուրզայի կատարած դերը անգնահատելի է: Նա առաջինն է, որ ցոյց տւեց ժողովրդական երգի համն ու հոտը: Առաջինն էր, որ մտցրեց քառաձայն երգեցողութիւնը հայոց եկեղեցիներում, և այսպիսով նախկին միօրինակ, ձանձրալի երգեցողութիւնը դարձաւ դուրեկան: Բայց այդ, նա ստեղծեց շկոլա, որ շարունակեցին նրա աշակերտները: Նրա ձեռքի տակ զարգացան շատ երգիչներ, որոնք քիչ թէ շատ անուն հանեցին, օր. Շահլամեան, Վարդիկեան և այլն: Կարա-Մուրզայի աշակերտներից է նաև Կոմիտասը, որ ներկայումս աչքի ընկնող կօմպօգիտօր է: Նրա աշակերտներից շատերը դարձան խմբապետներ, որոնք ուսումնարաններում աւանդում են երգեցողութիւն:

Նոյն այն տարիներում, երբ Կարա-Մուրզան թնդեցնում էր ժողովրդական երգը, մի ուրիշ տաղանդաւոր երաժշտագէտ, վաղաթառամ եկմալեանը, երգեցողութեան ուսուցիչ էր ներսիսեան դպրոցում: Նրա ամենաերեկելի գործը ձայնագրած պատարագն է: Երբ աշակերտական խումբը ուսուցչի զեկավարութեամբ թնդեցնում էր վանքի կամարները, հասարակութիւնը զմայլում էր երդի ներդաշնակ, քացր հըն-

Հիւններով։ Բնածին տաղանդով նա աւելի բարձր էր կարա-Մուրզայից, որ ինքն էլ խոստովանում էր, ասելով, թէ իր գլուխը խոնարհում է Եկմալեանի առաջ։ Տարբերութիւնը նրանց մէջ կայանում էր նրանում, որ կարա-Մուրզայի գործունէութեան ասպարէզը աւելի ընդարձակ էր, տոգորւած էր հասարակական գաղափարներով և քառածայն ու ժողովրդական երգը տարածեց ամբողջ Կովկասում։ Եկմալեանի ասպարէզը շատ նեղ էր, դասարանից և վանքից գէնը չէր անցնում։ Նա համեստ ուսուցիչ էր, բայց մեղսի պէս մեղը էր պատրաստում։ Նրա պտուղները հասնում էին շատ ուշ, բայց աւելի համեղ էին։

Ա Ղ Ա Յ Ե Ա Ն

Ն Ր Ա Կ Ե Ա Ն Ք Ը

Աղայեանը ծնւել է 1840 թ. Խաչէն գիւղում, որ գտնւում է Թիֆլիսից գէպի հարաւ 60 վերստ հեռաւորութեան վրա։ Նրա հայրը Աղանց Ստեփանն էր, մի առողջ, յաղթանդամ մարդ։ Այդ յատկութիւնները ժառանգեց որդին։ Սկզբնական ուսումն Աղայեանը ստամում է Շամշուլդա գիւղի քահանայի մօտ։ Նրա գասընկերները հասակակից աղջկերք էին։ Փոքրիկ մանուկը սիրահարւում է մի եօթնամեայ աղջկայ վրա, որի անունն էր Մայիկօ։ Քահանան այդ նկատում է և սկսում յանդիմանել։ Լուրը հասնում է հօր ականջին։ Երբ Աղայեանը գալիս է տուն, հայրը նրա երեսին էլ չէ նայում։ Տուժում է միայն մայրը, որ որդու պատճառով մի քանի անգամ ծեծում է։ Մակայն մանուկի մէջ սէրը դարձաւ մի տեսակ հոգեկան ցաւ և սկսեց մաշւել։ Ախորժակը կորցնում է, որի պատճառով նւազում է մնունդը։

Երբ Աղայեանը մեծացաւ, նրա մէջ մանկական սէրը տեղի տւեց ուսման սիրոյն։ Նրան յաջողւեց 1863 թ. մտնել Ներսիսեան դպրոցի նախավերջին դասարանը։ Դա Շամշեանի օրով էր։ Վերադառնալով հայրենիք, տոգորւած աղատամիտ գաղափարներով, Աղայեանը անկարող էր հաշտել հօր հետ, որին նա նա համարում էր տգէտ, նախապաշտամ, բռնակալ։ Հայրը չը կարողանալսվ տանել ըմբոստ որդու

յանդզնութիւնը, դուրս է անում անից: Այնուհետև Աղայեանը սկսում է վարել անկախ և թափառական կեանք: Եօթ տարուց յետոյ նա մտնում է Հ. Էնֆիաճեանցի ձուլարանը, իբրև աշակերտ: «Ձուլարանն ինձ համար դրախտի փոխարկողն եղաւ նրա տէրը» (Էնֆիաճեան), ասում է Աղայեանը «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» վերնագրով ինքնակենսագրութեան մէջ: Էնֆիաճեանը նրա մի քանի ստանաւորները շատ հաւանում է: Աղայեանի խելքը և ընդունակութիւնները գրաւում են նրա ուշադրութիւնը: Տեսնելով, թէ ինչ տեսակ երիտասարդի հետ գործունի, նա ջնջում է պայմանագրի մէջ նշանակւած Աղայեանի տարեկան ոռճիկը, որ 50 ը. էր, և գրում է 600: Դա մի ապահովութիւն էր Աղայեանի համար: Բացի այդ, նրա գործը թեթևացնելու համար, Էնֆիաճեանը տալիս է նրան աշակերտներ, որոնք շարում էին Աղայեանի համար, իսկ ոսճիկը տալիս էր ձուլարանի տէրը: Աշակերտներ ունենալով, Աղայեանը ժամանակ էր վաստակում ընթերցանութեամբ պարապելու: Հայրը, իմանալով որդու համբաւը, գալիս է որդու մօտ և հաշտուում:

Աղայեանը իրան շատ պարտաւոր է համարում Էնֆիաճեանի առաջ: Նրա շրորհիւ էր, որ հայրը հաշտւեց: Նրա շնորհիւ էր, որ մօտեցաւ լաւ մարդկանց շըջանի հետ: Աղայեանը, «Կոունկ» ամսագիր շարողն էր: Աղաբեկեանը, ամսագրի խմբագիրը, շատ լաւ էր վերաբերում դէպի Աղայեանը, հաւանում էր նրա ոտանաւորները, գուշակում էր մեծ ապագայ և խորհուրդ էր տալիս գնալ Ռուսաստան և ուսումը շարունակել:

Իր ընկերի հետ միասին փոստի կառքով ճանապարհեն ընկնում: Հիւսիսային կովկասում նրանց փոս-

ղը հատնելու վրա էր: Նրանք մի լաւ բան են մտածում: Վճռում են գնալ Թէոդոսիա և Խալիպիան ուսումնարանի տպարանում աշխատել: Ինչպէս վճռում են, այնպէս էլ անում են: Ամբողջ ամառը անց են կացնում Թէոդոսիայում: Ստանալով 50 ը. և 10 ը. պարտք, գնում է Մօսկա: Աղայեանին յաջողւում է դառնալ գրաշար Լաղարեան ճեմարանի տպարանում և ստանում էր այնքան, որ կարող էր լաւ սնունդ ունենալ և լաւ հագնել:

Աղայեանը միայն մի ամիս ծառայեց ճեմարանի տպարանում:

Այնուհետև նրան տեսնում ենք Պետերբուրգում, ուր նա գրաշար էր գիտութիւնների ճեմարանի տըպարանում: Պետերբուրգում եղած ժամանակ նա մի տարու չափ մնաց նկարիչ Յ. Պատկանեանի տանը, որտեղ ապրում էր և Ռափայէլը:

Իմանալով, որ նազարեանը վերսկսում է «Հիւսիսափայլը», Աղայեանը գնում է Մօսկա և տեսսակցում նրա հետ: Մօսկայում նա մնում է 1663 թ. վերջերից մինչև 1864 թ. վերջերը, և այդ փոքր ժամանակամիջոցը, ասում է հեղինակը, եղել է նրա մտաւոր զարգացման ոսկեդարը: Նրա հետ պարապում էին լեհացի ուսանողներ, որոնց շնորհիւ նա ծանօթացաւ զանազան գիտութիւնների հետ: Աղայեանը մեծ համակրութեամբ է խօսում այդ ուսանողների մասին:

Իսկ հայ ուսանողների հետ նա գրեթէ յարաբերութիւն չունէր: Նրանց չէր սիրում, որովհետեւ ընկած էին փուչ գւարեճութիւններ ետևից:

Մօսկայում նա շարում էր «Հիւսիսափայլը»: «Աւոնի Վիշտը» շարելուց յետոյ, նա թողնում է Մօսկան և ուղեռուում Պետերբուրգ: Պետերբուրգում

նա տեղ է գտնում նոյն տպարանում, որտեղ ծառայել էր: Այստեղ սկսում է Աղայեանի զարգացման նոր շրջանը, որին նպաստում են ուսանողական ժողովները, որոնք տեղի էին ունենում Եղեանի տանը: Մի այդպիսի ժողովում Աղայեանը կարգում է իր «Յարութիւն և Մանւէլ» վէպիկի առաջին մասը, որից յետոյ սկսում են բուռն ծափահարութիւններ, կեցցէներ և համբոյրներ: Դա մեծ քաջալերութիւն էր Աղայեանի համար: Պետերբուրգում նա շարունակում էր իր ինքնակրթութեան գործը, ձեռքի տակ ունենալով հասարակաց զրադարանի ցանկացած զրքերը: Երգում էր եկեղեցում, որի համար ստանում էր ամսական 30 ր.: Նրա առաջին ընթերցման եկեղեցում ներկայ էր Լազարեանը իր տոհմի վերջին շառաւիրը: Աղայեանը գիրքը կարգում է գեղեցիկ ընթերցանութեամբ, որ շատ դուք է գալիս Լազարեանին, որ նրան տալիս է մի ծրագ՝ մէջը դրած 25 ր.:

Այդ ժամանակ Գէորգ կաթողիկոսը գալիս է Պետերբուրգ և իջնում Լազարեանի տանը: Երբ կաթողիկոսը յայտնում է իր մտադրութիւնը կարգի բերել էջմիածնի տպարանը, Սանասարեանը և Եղեանը մատնացոյց են անում Աղայեանի վրա: Այդ գործի մասին վեհափառը անձամբ խօսում է Աղայեանի հետ, խոստանում է լաւ ոռճիկ և պատվիրում է գնալ Թիֆլիս և այնտեղ իրան սպասել:

Պետերբուրգից դուրս է գալիս 1667 թ. վերջում: Եօթ տարի էր, որ ծնողներին չէր տեսել: Այժմ ըշտապում է գնալ իր ծննդավայրը, ի մեծ ուրախութիւն ծնողների:

Էջմիածնում նա կարգի է բերում տպարանը և խմբագրում է երկրորդ տարւայ «Արարատը», որ նա վարում էր վարպետութեամբ: Նոյն իսկ տպա-

րանական ժողովում Գրիգոր Եպիսկոպոսը զովում է Աղայեանին, որ բարձրացրեց «Արարատը»: Մանկունու և Աղայեանի մէջ տպարանի պատճառով միշտ կոխներ էին տեղի ունենում: Ունենալով այնպիսի կարող պաշտպան, ինչպէս Գէորգ Դ կաթողիկոսն էր, Մանկունին թոյլ էր տալիս իրան ամեն տեսակ կամայականութիւն: Ցանկանալով զրաւել Աղայեանի տեղը՝ տպարանի կառավարութիւնը, նա մարդ է ուղարկում առաջարկելու Աղայեանին հրաժարւել իր պաշտօնից:

Աղայեանը իր համաձայնութիւնը տւեց:

Էջմիածնին գնալուց առաջ Աղայեանը ամուսնացած էր: Էջմիածնից հեռանալով, նա գնաց սարը իր ընտանիքը տեսնելու: 1870 թւականի սեպտեմբերից սկսում է Աղայեանի գործունէութիւնը ուսուցչական ասպարիզում: Սկսեց Ախալցխայից: Ուսումնարանը գտնուում էր ողորմելի դրութեան մէջ: Ուսուցիչները կանգնած չէին իրանց կոչման բարձրութեան վրա: Աղայեանը ազատ ժամերին այցելում էր միւս ուսուցիչների դասերը և ի՞նչ է տեսնում: Նախակրթարանում կանգնած է մի տիրացու՝ երկայն ճիպոտ ձեռին՝ մէկի զլիկն էր խփում, միւսի ձեռներին: Ֆրանսերէնի ուսուցիչը շարունակ հարբած էր լինում նոյն իսկ դասարանում: Ի՞նչ օյիններ և կատակներ ասես, որ աշակերտները չէին խաղում նրա գլխին: Եւ այսպիսի կուրիօգներով լի էր դպրոցը: Աղայեանը սկսեց «Հարազագանով սրբել, մաքրել մէր կրթութեան տաճարները բարոյական աւազակներից»:

Հետևեալ տարին նա հեռանում է Ախալցխայից: 1871 թ. նա ուսուցիչ էր Ալէքսանդրապոլում: Այստեղ շարունակեց պաշտօնավարութիւնը ըն-

դամենը 5 տարի։ Ալէքսանդրապոլից հեռացաւ շատ գոհ իր վիճակից, սիրւած, յարգւած և մխիթարւած ամեն կողմից։ Նա գնում է Թիֆլիս և Արգար Յովհաննիսեանի խնդրանոք գառնում է «Փորձ» խմբագրի օգնական։ Այնուհետև մի տարի ուսուցիչ էր Երևանում. յետոյ տեղափոխւեց Շուշի։

Թեմական դպրոցի գործերը խառնավինթոր դրութեան մէջ էին։ Աղայեանը կարգի է բերում դպրոցը Սեղմակեան վարդապետի աջակցութեամբ, որ Շուշւայ գաւառի յաջորդն էր։ Սկզբում Աղայեանը բոլոր դպրոցական գործերը տնօրինում էր ըստ իր բարեհայեցողութեան, ի հարկէ, յաջորդի հաւանութեամբ։

Նրա ուսուցչութեան օրով յաջորդաբար տեսչութիւն են արել Զաւադ-բէկ Իշխանեանց (ձրի), Քժիշկ Բախիշ-բէկ Աղասարեանց (ձրի), Ս. Մանդինեան, Հ. Առաքելեան։

Աղայեանի և Մանդինեանի մէջ շարունակ ընդհարումներ էին պատահում, որոնց պատճառը մանկավարժական ինդիքներն էին։ Աղայեանը չէր հաւանում նրա մետօղը, իսկ Մանդինեանը Աղայեանի մետօղ։ Աղայեանը թողնում է Շուշին շատ դժգոհ թէ ազգաբնակութիւնից թէ Մանդինեանից և ուղերւում է Թիֆլիս։ Այդ ժամանակ ա. Խօֆիա Բաբայեանը հիմնել էր մանկական պարտէզ։ Նրա ամուսինը, Աւետիքը, առաջարկում է նրան ուսուչցութիւն իր ամուսնու հիմնած դպրոցում։ Նա ցանկանում էր, որ Աղայեանը «ազգային — ժողովրդական ողի մայնէր նրա պարտէզի մէջ, ազգային ծաղիկներ բուսցնէր»։ Աղայեանը մնաց մանկական պարտէզում մի տարի, որ եղել է շատ արդիւնաւոր թէ սաների և թէ նրա համար։ Նրա պաշտօնը առիթ տւեց մանկական եր-

գեր գրելու։ Նա սկսեց աւելի սիրել մանուկներին, որոնց համար զրեց բազմաթիւ գեղեցիկ երգեր և հեքիաթներ, որոնք տպւում էին «Աղբիւրի» մէջ։ Իսկ այդ երգերը բարերար ազդեցութիւն ունեցան մանուկների հոգեկան աշխարհի վրա։ Սեղբակեան սրբազնը, նշանակւելով Թիֆլիսի թեմի առաջնորդ, Աղայեանին տւեց թեմական տեսչի պաշտօն։

90-ական թւականների սկզբում Աղայեանը գրլիաւոր վերակացու էր ձեմարանում։ Նա մեռաւ սրտի պայթիւնից 1911 թ. 20-ին յունիսի և թաղւեց 26-ին Խօջիվանքի գերեզմանատանը։

ԱՂԱՅԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹԻՒՆԸ

Աղայեանի անդրանիկ աշխատութիւնն է «Օգնեցէք խեղձերին» գրւածքը։ Այնուհետև լոյս տեսաւ «Յարութիւն» և Մանուէլ վէպի առաջին մասը։ 1878 թ. տպւեց «Անահիտը»։ Ցպւեցին և «Երկուքոյը», «Աէրը արտաքսւած»։ 1883 թ., երբ սկսւեց «Աղբիւրի» հրատարակութիւնը, Աղայեանը դարձաւ նրա ամենամօտ աշխատակիցը։ «Աղբիւրի» մէջ սկսեցին լոյս տեսնել մէկը միւսի ետևից համով — հոտով հեքիաթներ և մանկական երգեր։ Այժմ միայն Աղայեանը գտաւ իր խակական կոչումը։ Նա կազմեց և «Մայրենի լեզու» վերնագրով դասագիրք, որ յաջող մրցում էր Տէր-Ղենդեանի դասագրքի հետ։ «Մայրենի լեզու» տարածւեց ուսումնարաններում և մեծ նշանակութիւն ունեցաւ հայոց լեզուի տարածման գործում։

ԱՂԱՅԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Յարութիւն եւ Մանուէլ
«Յարութիւն» և Մանուէլ վէպը ամբողջացրած

հրատարակւեց 90-ական թւականներին։ Բովանդակութիւնը վեցցրած է նրա ծննդավայրի կեանքից։ Հերոսը և նրա ընկեր Մանուէլը հեղինակն է և Միքայէլը, որի հետ միասին գրաշարութիւն էին անում Մօսկուայում և Պետերբուրգում։ Վէպի մէջ դուրս է բերւած և հայրը իր ընտանիքով։ Վէպը, մի կողմից, կենսագրական նշանակութիւն ունի։ Միւս կողմից, նա հետաքրքրական է, իբրև մի վէպ, որտեղ դուրս է բերւած առաջին ռահւիրան, որ լոյս է տարածում խաւար անկիւններում։ Վէպը մի ուրիշ նշանակութիւն էլ ունի։ Այստեղ հանդէս է գալիս զիւղական ժողովուրդը իր տուն ու տեղով, իր բարք ու վարքով։ Հայրը դուրս է բերւած, իբրև աղէտ, նախաւաշարւած և բոնակալ։ Բացի այդ, լեզուն օրինակելի է և դարձաւ հիմք այժմեան գրական լեզւի։

Ա ն ա հ ի տ

Աղայեանը իր սիւժեաը վեցցրել է Թաղեադեանի «Վէպ վարսենկան» վերնագրով հեղինակութիւնից։ Նոյն անունները, նոյն վայրերը։ Միայն Վարսենիկը դարձել է Սնահիտ, իսկ սանդարձմեաը մի քիչ ուրիշ կերպ է նկարագրւած։ Բացի այդ, Աղայեանի վէպի մէջ բարձրացրւած է արհեստի նշանակութիւնը, իսկ Թաղիադեանը բարձրացնում է առնասարակ աշխատանքը, որ աւելի ընդարձակ հասկացողութիւն է։

Ահա «Սնահիտի» համառօտ բովանդակութիւնը։

«Անա- Աղւանից աշխարհի Վաշագան թագաւորի որդին հիտի» բու- միշտ տիսուր էր, տանը չէր նստում, թափառում էր սար վանդա- ու ձորում։ Ծնողները հասկանում են նրա վշտի պատ- կութիւնը ճառը, ուստի առաջարկում են հարսնացուներ ամենա- հարուստ տներից։ Բայց նա մերժում է։

Մի անգամ, երբ արքայազնը զրօնում էր մի աղբիւրի մօտ, այստեղ պատահում է մի օրիորդի, որից խնդրում է ջուր։ Դա Սնահիտն էր, որ կուժը օղողելուց յետոյ ջուր է տալիս։ Արքայազնը շնորհակալութիւն է յայտնում։ Այդ զոյգի մէջ ծագում է բուռն սէր։ Արքայազնը յայտնում է ծնողներին այդ գէպքը և ասում, թէ այն աղջիկը իր հարսնացուն է։ Ծնողները, իմանալով, որ նրա ընտրածը հովկ աղջիկ է, շատ զարմանում են, բայց և այնպէս տալիս են իրանց համաձայնութիւնը։ Երբ զիմում են աղջկայ հօր համաձայնութիւնը խնդրելու, Անահիտը առաջարկում է մի պայման, որ արքայազնը արհեստ սովորի։ Նա, ինարկէ, շուտով սովորում է, որից յետոյ կատարւում է հարսնակը արքայավայել շուրջով։

Բայց նոր զոյգի երջանկութիւնը շուտով խանգարւում է մի դէպքի պատճառով։ Մի անգամ, երբ արքայազնը գնում է շուկայ, նրա առաջ երկում է մի ալեսր, որ նրան տանում է սանդարձմետ։ Այնտեղ սովորութիւն կար. ով գիտէր արհեստ, նա պիտի բանեցնէր իր արհեստը։ Ով չը գիտէր, նրան սպանում էին։

Արքայազնը հնար է գտնում ազատւելու։ Իզուր չէր սովորել արհեստ, որ այժմ դարձաւ նրա վիրկողը։ Նա պատրաստում է մի սիրուն գորգ և մի արհեստաւորի ձեռքով ուղարկում թագաւորին։ Անահիտը բացատրում է գորգի վրա գործած նշանագրերը, որից յայտնում է արքայազնի տեղը։ Թագաւորը զօրքի օգնութեամբ վեցնում է սանդարձմետը, կործանում, վլատակ դարձնում, իսկ վլատակների վրա կառուցում է շքեղ ապարանքներ։ Ծովի յատակից հանում է ահազին գանձեր, որ նա գործադրում է պանազան բարեգործական հիմնարկութիւններ կա-

սուցանելու վրա: Եւ այսպիսով, բազմաթիւ աղքատներ, հիւանդներ պատսպարւում էին սնկելանոցներում և հիւանդանոցներում:

«Անահիար», թէև գրւած է հետևողութեամբ, բայց և այնպէս իր այդ հրաշալի հէքիաթի մէջ հեղինակը մտցնում է իր ինքնուրոյն, զուտ Ազայեանական գիծը: Գաղափարը, ինչպէս վերև ասացինք, արհեստի մեծարանքն է:

Տորք-Անգեղ

Այժմ դիմենք «Տորք-Անգեղի» քննութեան: Տորքը մի առասպելական վիթխարի հսկայ է, որ դաւագանի տեղ գործ է ածում ահազին գերան, որ աւելով սրբում է ամբողջ գիւղը և գետնի հետ հաւասարեցնում: Նա և անդրիագործ է: Ծանր մուրճով նա ժայռից կերտում է մի անդրի: Առաջ նրա վրա ծիծաղում էին թէ մեծը թէ փոքրը: Բայց երբ նա դայրացած՝ աւելով սրեց գիւղը, ամենքը սարսափեցին, և այսուհետեւ նրանից վախենում էին և պատիւը պահում:

Անա այդ աժդանան, որ ահազին ժայռեր սուկելով նետում է ծովը և խորտակում աւաղակներին և նրանց նաւերը, սիրահարւած է գեղեցիկ Հայկանուշի վրա: Բայց նրա ձեռքը խնդրողներ 150 հսկաներ են: Թագաւորը պայման է առաջարկում: Իր դուստրը պատկանում է վերջին յաղթողին: Վերջին յաղթողը Տորքն է, իսկ նախավերջին Աւագը: Տորքը ամուսնանում է Հայկանուշի հետ, Աւագը նրա քոյրերից մէկի հետ, և այսպիսով նրանք եղայրանում են:

Հեղինակի նպատակն է՝ ցոյց տալ սիրոյ վեհութիւնը և ոյժը: Տորք-Անգեղը թէև մարմնով տգեղ է, բայց հոգով գեղեցիկ է: Նրանց ժառանգը պիտի

միացնէ իր մէջ Հայկանուշի գեղեցիութիւնը և Տորքի ոյժը:

ՍԵՐԸ ԱՐՏԱՔՄԱՆԾ

Ահա բովանդակութիւնը:

Մի երիտասարդ՝ քսան տարեկան, զրկւում է իր հօրից և մօրից: Գիւլնազ աքօրը մտածում էր Մարկոսին պսակի, որ ինքը թեթևանայ գործից: Մարկոսը ինքն էլ ցանկանում էր ամուսնանալ:

Նրանց տանը հաւաքւում են գեղեցիկ աղջիկներ: Մարկոսին դուր է գալիս միայն մէկը: Դա սիրուն նաշխունն է: Նաշխունն էլ իր կողմից սիրում էր Մարկոսին:

Աղջկայ մայրն անհամբեր սպասում էր նշանդրէքին և պսակին: Նշանագրութիւնը և հարսանիքը տեղի են ունենում շատ շուտով: Այսուհետեւ անցնում է երկու տարի, և նրանք իրարից չեն կշտանում: Դա երջանիկ գոյգ էր: Ամեն անգամ, երբ Մարկոսը դուրս էր գալիս, նախ մի քանի անգամ համբուրում էր, պատահում էր, որ գոնից անցնելուց յետոյ, յետ էր զառնում և նորից համբուրում: Մի խօսքով, երկու տարակներ էին: Երկուսն էլ անշափ բարեպաշտ և աստւածանէր: Մի անգամ զնում են ուխտ Հաղբատի վանքը: Վանահայրը ընդունում է նրանց սիրալիր, տալիս է յարմար սենեակ: Նաշխունը յղի էր, և այդ գիշեր ցաւը բռնում է: Բարեխախտաբար, այստեղ կային մի քանի կանայք, որոնցից մէկը փորձւած տատմէր էր: Ծնունդը շատ յաջող էր, և երեխան ծնուռմ է տղայ: Անունը դնում են Մակար:

Երջանիկ ամուսինները մտածում են հեռանալ

իրարից։ Մէկը կամենում է դառնալ վանական, միւսը գնալ կուսական անապատ։ Նաշխունը մեղք է համարում իրանց երջանկութիւնը և ասում է. եթէ այս կեանքում մենք երջանիկ ենք, միւս կեանքում ոչքրախտ կը լինենք, դժոխքի բաժին կդառնանք։ Մի օր էլ Մարկոսը դուրս է դավիս և անյայտանում։ Նրա գիակը դանում են ձորում ընկած։

Այստեղ նկարագրւած է մի զոյգի երջանիկ սէլը իր բոլոր հրապոյրով։ Իւրաքանչիւր անձի պատկերը դուրս է բերւած մեծ վարպետութեամբ, նոյնպէս և Գիւլիազը։

Պատմութիւնը հետաքրիզրական է, կարդացւում է հաճութեամբ։

Այժմ մենք մանում ենք հէքեաթների կախարդական աշխարհը, որ իի է հիւրի-փերիներով, կախարդներով, հաւերժահարմներով։

Հէքեաթների շարքի մէջ ամենից յաշողն է «Արեգնապան», որ իր տեսակում «գլուխ-գործոց» է։

Ա Բ Ե Գ Ն Ա Զ Ա Ն

Մի պալատական, անունը Արման, ծառայում էր թագաւորչին։ Նա կամենում էր իր աղջկերանցից մէկին տղայի շորով տալ թագաւորին, որ իր տեղը բըռնէ։ Նա ունէր երեք զաւակ՝ մեծի անունը Զանազան, միշնակի անունը Զարմանազան, իսկ փոքրիկինը Արեգնապան, որի սեռը ողիները գաղտնի էին պահել։ Հայրը ամենից շատ սիրում էր Արեգնապանին։ Նա պայման է գնում գաւակների առաջ։ Ով կարող է հեծնել ձին, զէնք վերցնել, զնալ որսի և որս բերել, նրանն է ծառայութիւնը թագաւորի մօտ։ Մէծ աղջիկը զնում և անյաջողութեան հանդիպելով

վերադառնում է դատարկաձեռն։ Նոյնը պատահում է և Զարմանազանին։ Արեգնապանը գնում է և պատահում մի ձիաւորի, որ նրան հարցնում է, թէ՝

Այ տղա, սիրուն տղայ,

Ո՞ւր ես գնում այդպէս մենակ...

Արեգնապանը պատասխանում է.

Քեզ ի՞նչ, թէ ես ուր եմ գնում.

Ուր գնում եմ, այդ ես գիտեմ.

Ես չեմ գնում, որ քեզ նման

Խաղաղ մարդոց ճամբէն կտրեմ»։

Եւ նրան անւանում է աւագակ։ Զիաւորը սպառնում է նրան սպանել։ Արեգնապանը յարձակւում է նրա վրա և հրամայում, որ գիմակը վերցնէ։ Զիաւորն ընդդիմանում է վահանով պաշտպանւելով և թուրը ձեռքին յարձակւում է Արեգնապանի վրա։ Արեգնապանը պաշտպանում էր նոյն զէնքերով։ Մի ժամ տեսում է կոկւը, բայց ձիաւորի ոյժը հետզհետէ սկսում է թուլանալ։ Նա թուաւ ձիուց և այն էր, որ նրա գլուխը պիտի թուցնէր, երբ ձիաւորը հանեց զիմակը, և Արեգնապանը տեսաւ, որ իր հայրն էր։ Հայրը խոստացաւ իր տեղը նրան յանձնել, որովհետեւ աչքով տեսաւ նրա քաջութիւնը։

Արեգնապանը տղի շորով գնում է պալատը և ներկայանում թագաւորին, որը շատ ուրախանում է։ Թագաւորը մինուճար, գեղեցիկ աղջիկ ունէր՝ անունը Նունուֆար։ Նա վարագոյրի ետեկից տեսնում է Արեգին և զմայլում։ Թագաւորը որսի է գնում հազարաւոր մարդկանցով, բազմաթիւ գամփոներով և բազիներով։ Որսին մասնակցում էր և Արեգը, որին թագաւորը նւիրել էր ձիաներից լաւագոյնը, որի անունը Բազիկ էր։ Արեգնապանը մի քաջութիւն է անում։ Այն բոպէին, երբ արջը ետեկի ոտեր վ ըտ

կանգնած՝ բերանը բաց արաւ թագաւորին զիրկն առանելու, Արեգնազանը մի ակնթարթում նետի պէս սլացաւ իր ձիով և թրի մի հարւածով կէս արաւ արջի գլուխը և վայր զլորեց ամենի գազանին, և այսպիսով մի մատղահաս աղջիկ ազատեց թագաւորին արջի բերանից: Այս լուրը համուռմ է քաղաք, ամենքը ուշրախանում են, և ամեն տեղ Արեգնազանի գովին էին անում: Թագաւորը շնորհակալութիւն է յայտնում Արեգնազանին և ասում, թէ նա իրանից անբաժան կլինի:

Նունուֆարը սիրահարւած էր Արեգի վրա: Աղախնին ուղարկում է նրան իր մօտ կանչելու և իր հետ տեսնելու: Արեգը կարակի մերժում է, որ մեծ ցաւ է պատճառում արքայի դստեր: Սիրոյ տան-ջանքներից նա հալ ու մաշ է լինում, և արդէն մօտ էր գերեզմանին: Ոչ մի բժիշկ չէր կարողանում դարման անել, որովհետեւ նրա հիւանդութիւնը չէին հասկանում: Վէզիրի կինը երազում տեսնում է, որ թագուհին երևացել է և ասել, թէ նունուֆարի միակ դեղը «անմահական ջուրն» է: Թագուհին ասում է, որ անմահական ջուրը կարող է բերել միայն Արեգը: Թագաւորը Արեգին տալիս է բաղիկ ձին, ոսկիներ, մթերք և ճանապարհ գնում: Մի լճի մօտ նա տեսնում է, որ բազմաթիւ աղաւնիներ թոշելով հասնում են լճի ափը և, փետուրները հանելով, դառնում են աղջիկներ և նետում ծովը լողանում: Յետոյ բոլորը դուրս են գալիս, փետուրները հազնում և աղաւնիներ դառնալով թոշում հետանում են: Ափի վրա արեգը տեսնում է մի փետուր: Վերցնում է և տեսնում մի աղջիկ, որ ամօթից սուզւած էր ջրի մէջ, և միայն զլուխն էր երնոււ: Արեգը իննորում է իրան յայտնել, թէ որտեղ է գտնուում անմահական աղբիւրը: Աղջիկը

ասում է, թէ այդ կը յայտնի, եթէ իր թերը տայ, որ զարձեալ աղաւնի դառնայ թոչի հեռու:

Նա ասում է.

Անմահական ջուր ես ուղում...
Թերը տուր, թերը,
Թերը տուր, թոչիմ գնամ
Եւ իմ կացով բերեմ տամ:

Արեգը վերադարձնում է փետուրը: Աղջիկը թերը հազնելուն պէս՝ դառնում է աղունակ և թոչում գնում: Մի քանի րոպէ չանցած՝ մի փոքրիկ շիշ կացին, անմահական ջրով լիքը բերում է Արեգին տալիս և ինքը կրկին թոշում գնում:

Բազիկը մի ակնթարթում Արեգին հասցնում է քարացած քաղաքը: Մի քանի մարդիկ կանգնած էին անշարժ: Արեգնազանը հարցը:

«Ճղէք, ի՞նչ քաղաք է սա, և որտեղ են իջնում օտարականները:»

Մարդիկը ձայն չը հանեցին: Մէկ էլ կրկնեց: Դարձեալ լուս էին: Արեգնազանը կարծեց, որ դրանք ճարտար քանդակագործի շինած արձաններ են: Յետոյ նա հասկացաւ, որ աղաւնու ասած քարացած քաղաքումն է գտնուում: Շարունակելով ճանապարհը, մի փոքրիկ ծաղկոցում նա գտաւ մի քարացած մարդու գլուխ: Նրա հարցին, թէ ով է, գլուխը պատասխանեց «Ճնոր, Ճնոր»... Արեգը հանեց անմահական ջրի շիշը և մի կաթիլ կաթեցրեց նրա բերանը: Գլուխը կենդանացաւ, զովացաւ և ուրախ ասաց.

«Գու բարի հրեշտակ,

Ո՞րտեղից եկար,

Փախսիր, հեռացիր.

Մի առ ժամանակ»:

Կիսարձանը կենդանացաւ և սկսեց քայլել, յետոյ

սկսեց փախչել իր ետեից կանչելով արջին: «Ի՞նչի համար ես փախչում», հարցնում է Արեգնազանը: «Մի հրէշ պառաւից», պատասխանում է նա: Նա էքարացրել մեր քաղաքը». «Ի՞նչումն է նրա զօրութիւնը»:—«Նրա զօրութիւնը իր գաւազանի մէջն է»: Արեգնազանը ուզում է խլել գաւազանը պառաւի ձեռքից: Նրա ուղեկիցը ասում է, որ նրան չէ կարելի մօտենալ, քար կը դարձնէ: Պառաւը գնաց թագաւորի դիմացը (այդ մարդը քաղաքի թագաւորն է), ձեռն առաւ իր երեք գաւազաններից մէկը և սպառնալով ասաց.

«Այս ի՞նչ եմ տեսնում,
Այսուեղ ով եկաւ,
Այս կեանքն, այս հոգին
Սրան ով տւաւ»:

Գաւազանը ձեռքին յարձակւում էր պառաւը, որ զարկէր թագաւորին, այդ միջոցին Արեգը բռնեց նրա մազերից և այնպէս գետին տւեց, որ պառաւը կիսաշունչ եղաւ: Թագաւորը սրատապնդւեցաւ և մօտեցաւ պառաւին: Գաւազանները խլեցին և նրա ձեռք ու ոսր կապեցին: Արեգն հարցնում է. հիմա ի՞նչ պատժով քեզ պատժենք: Պառաւը պատասխանում է «Ի՞նչ պատիժ կուզէք, մէկ է ինձ համար»: Յետոյ նա շարունակեց.

«Ամպեր, գոռացէք,
Կայծակներ, զարկէք,
Զրեր, հոսեցէք,
Ծառեր, ծաղկեցէք,
Մարդ և անասուն,
Գազան ու թռչուն,
Հասաւ ձեր ժամը,
Հիմա վեր կացէք...»

Ու խորին լուութիւնը յանկարծ դղրդաց: Քաղաքը մտքի արագութեամբ կենդանացաւ: Ամենքն էլ այնպէս շարունակեցին իրանց գործերը, որ կարծես քարացած չեն եղել երբ և իցէ: Աքաղաղը, որ կանչի կիսումն էր քարացել, միւս կէսը ¹¹ հիմա տւարտեց: Զուռնաչին, որ գուռնան բերանումն էր քարացել, շարունակեց ածելը: Պար եկողն, որի ձեռքերը բարձրացած էր մնացել, շարունակեց իր պարը: Եւ այսպէս բոլորը:

Թագաւորը իր փրկութեան առիթով մի մեծ և ճոխ խնջոյք սարքեց, ուր ներկայ էին հազարաւոր անձինք: Երբ Արեգի կենաց բաժակը ձեռքն առաւ, սկսեց խօսել թագաւորը և ասաց. «Ի՞նչ էինք երէկ և ի՞նչ ենք այսօր»: Թագաւորի այս խօսքերի վրա հազարաւոր ձայներ միասին «կեցցէ» գոչելով թնդացըին ամբողջ ապարանքը: Աշուղներն էլ իրանց երգը երգեցին.

«Արի, բլբուլ, ուրախացէք,
Թո վարդն ահա բացւել է.
Վերադարձէր, էլ մի վախիր,
Թո թագուհին բացւել է:
Արեգն իջաւ երկրնքիցը,
Ամենայն տեղ կեանք սփռեց,
Թարերն ամեն հոգի առան,
Թո կարմիր վարդն էլ բացւեց...»

Երբ Արեգը վերագարձաւ, նունուֆարը հոգեւարքի մէջ էր: Բայց նա բժշկեց նրան անմահական ջրով: Այդ ժամանակ պարզւեց, որ Արեգը տղայ է եղել: Արեգն ու նունուֆարը միացան անխզելի կապերով: Նրանց օրհնեց թագաւորը, և շուտով վառահեղ հարսանիք կատարւեց:

Ամբողջ հէքեաթը հրաշալի է թէ իր ամբողջութեամբ և թէ մանրամասնութիւններով։ Հրաշալի նկարագրւած է Արեգը, որ ի բնէ օժտւած է ամենայն բարեմամութիւններով։ անհման գեղեցկութիւն, խելք, տղամարդու քաջութիւն, անհուն սէր, առաքինի, համարձակ և միենոյն ժամանակ համեստ։—Յաջող նկարագիրներ են նոյնպէս թագաւորը և միւս անձինք։

ԱՂԱՅԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐԸ

Աղայեանը զրել է մի շարք ոտանաւորներ, ուրոնք կազմում են մի ամբողջ հատոր։

Բանաստեղծութիւնների մի սերեան կազմում են մանկական ոտանաւորները, որոնց մէջ նա զրել է իր բոլոր տաղանդը։ Ոչ ոք նրա պէս չէ թափանցել մանուկների հոգեկան աշխարհը։ նա դիտէ, թէ ի՞նչը դուր կը գայ մանուկին։ Մանկական երգերի «Ճախարակ» մէջ զլուխ-զործոցն է «Ճախարակը»։ Մանուկ աշարքան կերտները այդ ոտանաւորը սերտում են անզիր և երգում։ Բնանիքի հայր վաստակում է ճախարակը։ նա տախու է և մանուկների շորը և կոշիկը։ Այստեղ դուրս է բերւած և այն չարիքը, որ պատճառ է լինում աշխատաւոր ընտանիքների կործանման։ Դա վաշխառուն է։

«Կարմիր օրս երբ սևայաւ
Եւ պարտք մնաց, թէև քիչ,
Պարտատիրոջ սիրան էլ սևաւ—
Եկաւ տարաւ ամեն ինչ»։
Հիանալի է և «Ուսումնարանը»։
Դաշտը սիրուն է դալար բոյսերով
Եւ անուշահոտ զոյն-զոյն ծաղկներով։

«Ուսումնարան»

Ուսումնարանը նոյնքան դալար է
իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով։

* * *

Յիրուն է ծառը կանաչ ճներով,
Փունջ-փունջ կախուած իր պտուղներով,
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
իր առաքինի, խելօք սաներով։

* * *

Կատւած, պահպանիր Դու շատ օրերով
Մեր անդաստանը իր մշակներով,
Եւ մենք նրանով զուգւենք, զարդարւենք
Գեղեցիկ ուսման գոյն-զոյն փունջերով։
Լաւ է և «Մանկական թոթովանքը», «Պառաւի հորթ», «Մանկութեան բարեկամներ»։

«Աշխարհիս վրա մէկը կար միայն,
Որ ինձ սիրում էր հոգով անարատ.
Նա իմ մայրիկն էր—իմ անուշ Ազին,
Հոգուս ու մարմնոյս ծնողն հարազատ։

«Մանկական թոթովանքը»
թոթովանքը

Յաջող ոտանաւորներից են և «Յիշողութիւնը»,
«Թոչնիկներ», «Աքաղաղ», «Արեգակ», «Օրհնութիւն»,
«Ճշանակ», «Ճռաւան», «Հնձւորներ», «Արի դու, արի»,
«Ծերը և Բազէն», «Մանուշակ»։

Մի շարք ոտանաւորների նիւթերը վերցւած են «Ոտանագիւղացու կեանքից», օր. «Պարտիզան», «Մերմնաւորներ գիւղ», որոնց մէջ գիւղացու յոյսը Աստծու վրա է, կեանքից» որը պատճառ է լինում լաւ բերքի։ Մինչդեռ ամառայ տօթին, երբ երկնքից կրակ է թափւում և ամենքը քաշւել, հով տեղ են գտել, պարտիզանն է միայն, որ արևի տակին «սոխն ու ձմերուկ» է հասցնում։ Յաջող են և «Տաւարածի ճաշը», «Հովկի անկողինը», «Զաղացպանի ննջարանը», «Առաւոտը գիւղում», «Գարունքի յաղթութիւնը» և այլն։

«Մի քանի ոտանաւորներ տողորւած են ազգա-
սիրական ոգով՝ «Առ Հայրիկն Խրիմեան», «Առ Դե-
ւոնդ հայր Ալիշան»»:

Աղայեանը գրել և փոխադրել է նաև առակներ:
Կովկասից՝ «Սոխակներ», «Էշ և Սոխակ», «Գառն ու
դայլը» և ինքնուրոյն առած «Լուսնահաչ»։ Աղայեանը
թարգմանել է Պուշկինի «Сказка о рыбаке и рыбке»
մեծ հմտութեամբ։

Դա բնագրի հարազատ թարգմանութիւնն է և գե-
ղեցիկ է թէ լեզւի և թէ տաղաչափութեան կողմից։

*Բնդիսա-
նուր ճա-
կացք*

Աղայեանի ազգին մատուցած ծառայութիւն-
ները մեծ են։ Ամենից առաջ նա տւեց մաքուր գրա-
կան լեզու։ Համեմատեցէք «Անահիտի» լեզուն, որ
տպւած է 1878 թ., «Զալալէգունի» լեզվի հետ։
Մինչդեռ թափփու լեզուն ազատ չէ ուստաբանու-
թիւնից, Աղայեանի լեզուն զաւած, մաքրւած գրա-
կան լեզու է։ Նրա այդ գեղեցիկ, կանոնաւոր լեզուն
տարածողը եղել է, բացի նրա վէպից և հէքիաթնե-
րից, «Մայրենի լեզուն»։ Չկայ մի մանուկաշակերտ,
որ Աղայեանի մի քանի ոտանաւորները և երգերը
անգիր չիմանայ։

Իր սրանչելի հէքիաթներսվ նա բաց արեց հայի
առաջ մի անյայտ, բայց հրաշալի աշխարհ, լի կա-
խարդներով, ոգիներով և աղջիկ-աղաւնիներով։ Մշա-
կելով ժողովրդական հում նիւթերը, նա տւեց մի
շարք գեղարւեստական հէքիաթներ։

Աղայեանը նշանաւոր է և նրանով, որ յանձին
Յարութիւնի դուրս է բերել և առաջին ուահւիրան,
որ մարտնչում է տգիտութեան դէմ և միւս կողմից՝
տարածում է լուսաւորութիւն։

ՅԱՌԱԶԱՐԴԻՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ե Ի

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԳԱՀԱՇՈՒԽ

(1889 – 1903 թ.)

Բաւական է մի թուռցիկ հայեացք ձգել այս
նորագոյն շրջանի վրա, և տարբերութիւնը ակներկ
կը լինի։ Սկսել էր մի եռուն աշխատանք թէ մտա-
ւոր կենարում և թէ գաւառներում։ Հայրենակ
քաղաքները և գիւղերը ծածկւած էին զպրոցների
ցանցով։ Հարիւրաւոր ուսուցիչներ տարածում էին
լոյս և կրթութիւն խաւար անկիւններում, տասնեակ
հազար աշակերտներ կրթութիւն էին ստանում։

Հին սերունդը, որ միահեծան իշխում էր և
անօրինում ժողովրդի մտաւոր և բարոյական պի-
տոյքները, այժմ ուժասպառ թողնում է սապարէզը,
որ գրաւում են յառաջադէմ երիտասարդու-
թեան շարքերը։ Ճեմարանը, ներսիսեան դպրոցը,
Շուշայ թեմական դպրոցը անցել էին երիտասար-
դութեան ճեռքը։ Նոյն այդ երիտասարդութիւնը
վանդում է հնաւանդներին ընկերութիւններից և ա-
մուր գիրք է բռնում նախ Հրատարակչական, ապա
Բարեգործական և այլ հաստատութիւնների մէջ։
Մամուլը մեծ մասամբ շարունակում էր իր հին ուղ-
ղութիւնը, բայց նշանաւոր էր մի քանի նոր երե-
ւոյթներով։ Դա «Մուրճի» երեալն է։ «Մուրճը»

լայնարձակ բաց էր արել իր էջերը այն անձանց
համար, որոնք շիտակ մտածողութեամբ, յառաջա-
դէմ գաղափարներով կարող էին պիտանի լինել:

Ակսում է ծաղկել նաև գրականութիւնը:

Առաջ է գալիս գրողների նոր սերունդ և գրա-
ւում է թափուր մնացած ասպարէզը: Տարի չէր
անցնում, որ չը յայտնւէր մի նոր բանաստեղծ կամ
վիպասան: Թատրոնը թէև ծաղկած չէր այնպէս,
ինչպէս 60-ական թւականներին կամ Աղամեանի
ժամանակւայ թատրոնը, բայց անհամեմատ բարձր
էր 80-ական թւականների թատրոնից:

Ս Ա Մ Ո Ւ Լ

«ՄՈՒՐՃ» ԱՄԱՍԳԻՐ

90-ական թւականների յառաջադիմական շար-
ժումը մասսամբ կապւած էր «Մուրճի» հետ:

Ամսագրի ղեկավարն էր Աւետիք Արասխանեանը,
որ միջնակարգ կրթութիւնը սատել էր Թիֆլիսի
րէալական դպրոցում, իսկ բարձրագոյն ուսումը
Գերմանիայում:

Իր բազմակողմանի զարգացմամբ, հրապարակա-
խօսի տականդով, իր շիտակ բնաւորութեամբ նա-
պատրաստ էր իր կոչման արժանապէս ծառայելու:

Երբ սկսւեց «Մուրճի» հրատարակութիւնը, այդ
ժամանակ գեռ ևս կենդանի էր Արձրունին, և շա-
րունակում էր «Մշակը»:

Նրա ստեղծած կուսակցութիւնը կազմում էր
մի մեծ կօնտինգենտ գործիչների, որոնք ամեն տեղ
ամուր դիրքեր էին բռնել՝ դպրոցական և բարեգոր-
ծական հաստատութիւնների մէջ: Շարունակում էին
նոյնպէս «Նոր Դարը», «Արձագանքը» և «Աղբիւր»—
Տարաղը»:

Մամուլի մէջ ստեղծւել էր մի վատ միջնորդ:
Գրական բարք ու վարքը ընկել էր: Կուսակցական
պայքարը տեղի էր ունենում ամենավատ հողի վրա:
Գաղափարը ետին տեղն էր բռնում: Փոխադարձ յար-
դանքի նշոյլ անգամ չը կար: Եղիք, որքան կուզես,
լաւ մարդ, մաքուր և աղնիւ, գու ազատ չես ոչ

հայոյանքից ոչ զբարտութիւնից: Կովում մղում
էր ոչ միայն խօսքով, այլ և գործով, դպրոցներում
և հասարակական հիմնարկութիւնների մէջ:

Այսպիսի ապականութիւն էր տիրում մամուլի մէջ,
երբ սկսւեց «Մուրճի» հրատարակութիւնը: Այդ նոր
օրդանի առաջին գործն էր մաքրել մթնոլորդը: Նոր
ամսագրի զեկավարը օժտւած էր այսպիսի ընդունա-
կութիւններով, որ յաջողութեամբ կարող էր մաքր-
ուել տիրապիտով ապականութեան դէմ: Խղճի և հա-
մոզմունքի հետ կօմպօմիս անել չը կար նրա հա-
մար: Մաքուր մատածողութեան առաջին օրինակ տւողը
ինքը խմբագիրն էր: Ամեն անդամ, երբ հարկ էր լի-
նում քննադատել այս կամ այն նոր գիրքը կամ բա-
նակու վարել այս կամ այն խմբագրի հետ, Արասխա-
նեանը իր գերը կատարում էր ամենայն վարպետու-
թեամբ:

Եւ այսպէս «Մուրճը» իր բարոյական կողմով
մի նոր երևոյթ էր ժամանակակից մամուլի մէջ և
իր այդ յատկութեամբ կատարեալ հակապատկեր էր
եղած օրդանների, բացառութեամբ «Մշակի»: Բոլոր
լրագիրները՝ սկզբից և եթ թշնամական դիրք էին
բռնել դէպի «Մուրճը»

Զնայած այն մեծ թշնամութեան, որ ահապին
խոչնոտներ էր դնում «Մուրճի» առաջ և նիւթա-
պէս փասում, այնուամենայնիւ ամսագրի նշանա-
կութիւնը ոչ միայն չէր նւազում, այլ աւելի և ա-
ւելի մեծանում էր, որի հետ միասին աճում էր աշ-
խատակիցների և ընթերցողների թիւը:

Մենք արդէն ասացինք, թէ ինչ էր «Մուրճի»
արժանիքներից մէկը: Կրկնենք. դա շիտակութիւնն
է, մտքի մաքրութիւնը: Բայց ոչ պակաս նշանակու-
թիւն ունէր զեկավարի մի ուրիշ յատկութիւնը: Դա

նրա անվիճակ հոգին է, նրա զարմանալի տոկունու-
թիւնը, նրա անսպառ եռանդը: Երբ 1898 թ. կա-
տարւեց «Մուրճի» տասնամեայ յօքելեանը, բոլոր
ուղերձների և զնորհաւորական նամակների մէջ շեշ-
տւած էին Արասխանեանի շիտակութիւնը և տոկու-
նութիւնը:

Ի՞նչումն էր կայանում Մուրճի ուղղութիւնը:
Արասխանեանի հայեացքները պարզում են այդ հարցը:
«Ամսագիրը, ասում է նա, վիսաւոր լծակն է գրա-
կան յառաջադիմութեան և դրա հետ միասին իբրև
մտաւոր գործօն ժամանակի մտաւոր շարժման: Դա մի
ժողովածու չէ զուտ գրական երկերի: «Ամսագիրը,
իր նշանակութեան լայն մտքով, պէտք է ներկայա-
ցնի ժամանակակից կեանքի և գաղափարների մի օր-
գան»: Այդպէս էր «Մուրճը» Նա եկել էր շարունա-
կելու այն յառաջադիմական հոսանքը, որ սկսել էր
«Հիւսիսափայլը» և շարունակում էր «Մշակը»:
«Մշակը» այդ ժամանակ նոր բան այլ ևս չունէր
ասելու: Նա իր գերը գերազանցօրէն կատարած էր
արդէն: Վերջապէս Արծրունու մահն էլ վերջ գրեց
«Մշակի» գոյութեան մի երկու տարուց յետոյ, որ
յետոյ անցաւ Ալեքսանդր Քալանթարի ձեռքը:

Այժմ այդ գերը պիտի կատարէր «Մուրճը»:

Մեր մտաւոր վերածնութիւնից յետոյ հայկական
միաքը անցել է երեք կուլտուրական շրջաններ: Առա-
ջինը ստեղծեց Ստ. Նազարեան իր «Հիւսիսափայլով»:
Երկրորդ շրջանը—«Մշակը»: Երրորդը սերտ կապւած
է «Մուրճի» հետ:

Այդ երեք օրդանների ընդհանուր գիծը լուսաւո-
րութիւն տարածեն էր գիտութեան և գրականութեան
միջոցով: Նազարեանը քարոզում էր, Արծրունին
մտրակում հայի պակասութիւնները, Արասխանեա-

նը քննադատում էր ժամանակակից հայ իրականութիւնը: Այսպէս տարբերում էին գաղափարները արծարծելու մէջ նազարեանը, Արծրունին և Արասխանեանը:

«Մուրճը» գործ ունէր նորագոյն սերնդի և հասարակութեան այն մասի հետ, որը գեռ ևս որոնում էր նոր օրդան. «Մուրճը» շատերի սպասւած օրդանն էր:

Ինչ կատարեց «Մուրճը» իր գոյութեան 12 տարւայ ընթացքում:

Դրա համար հարկաւոր է մի ակնարկ ձգել նախորդ շրջանի վրա:

«Մենք գտւար ենք երևակայում մի տւելի մեծ ամլութիւն, քան ինչ տիրում էր մամուլի և գրականութեան մէջ 80-ական թւականներին, գրում է Արասխանեանը: («Ինչ էինք ժառանգել»): Յետոյ Արասխանեանը ցոյց է տալիս, թէ ինչ էին ներկայացնում 80-ական թւականների մամուլը, բանաստեղծութիւնը, վիպասանութիւնը, գրաման և մանկական ու թարգմանական գրականութիւնը: Հրապարակախօսութեան մէջ մերթ ընդ մերթ երեւացող յաջող գաղափարները կամ կորչում էին միաժամանակ յայտնւող սխաների մէջ և կամ ամբողջովին կուլ դնում այն աղբակոյտին, որ առաջացնում էր անզուսպ կիրքը, յարմարեցը ընթերցող հասարակութեան գլխաւոր զանդւածի տգիտութեանը և թամաշայսիրութեանը:

Գալով գեղեցիկ գրականութեան, նա ասում է, որ այստեղ էլ տիրում էր ամայութիւն: «Բանաստեղծութիւնը կատարելապէս լւած էր: Իսկ նորերը չը կային: Վիպասաններից՝ Ծերենցը և Պոօշեանը ու չինչ չ'արտադրեցին: Միակ սկսնակը Շիրվանզադէն էր: Միւսները՝ Մուրացան, լէօ, Փափագեան միայն

փորձեր էին անում վիպական գրականութեան մէջ: Ոչինչ չարտադրեց և գրաման: 80-ական թւականների միակ լուսաւոր գիծը «Աղբիւր» ամսագիրն է, որով մեզանում սկիզբ գրւեց մանկական գրականութեան: Աղքատ էր և թարգմանական գրականութիւնը: Եւ ոչ մի բարձր գեղարեւսական գրւածք լոյս չը տեսաւ այդ տասնամեակում:»

«Մուրճը» սկսեց իր գործունէութիւնը նպաստաւոր պայմանների մէջ: «Հայ հասարակութիւնը, ասում է խմբագիրը, մի ամսագրի հրատարակութիւն կարեոր էր համարում, հայ գրական շրջանները նրան անհրաժեշտ էին համարում: «Մուրճը» իր ժամանակի օրինաւոր գտակին է. Նրան սպասում էին, նրան պահանջում էին»:

Կար մի առողջ սաղմ, մի ընտիր, թէ և փոքրիկ շրջան, որ զգւում էր իր ժամանակի ճահճացած մըթնոլորդից, որ պահանջ էր զգում մտքի նոր, թարմ հոսանքների առաջադիմական մտքով, որ գիտէր յարգել ծշմարիտը, բարին և ազնիւը:

«Մուրճի» կոչումն էր լինել, ինչպէս ասում է խմբագիրը, մի տեղ իբր գրգող, միւս տեղ մշակող ոյժ, երրորդ տեղում իբր գնահատող, չորրորդ՝ իբր խընդիրներ յարուցանող, մի այլ տեղ իբր ուղղութիւն տւող, իբր ընթերցանութեան նիւթ մատակարարող: Արասխանեանը հաւատացած էր, որ «Մուրճը» եկել է կատարելու առաքելական դեր, որի համար նա կոչւած էր:

Խօսենք այժմ «Մուրճի» բովանդակութեան մասին:

«Մուրճը» սկզբից և եթ յայտարարեց, որ նուկել է նպաստելու, զարկ տալու ինքնուրոյն գրականութեան զարգանալուն: Ահա ինչու ինքնուրոյն

գրւածքները անհամեմատ աւելի մեծ տեղ էին բլունում ամսագրի մէջ, քան թարգմանականը։ Բայց որ թարգմանական գրականութեան տրւած էր իր պատւառը տեղը, գրան ապացոյց այն երկասիրութիւններն են, որոնք թարգմանւած են Եւրօպական, ուստաց և կովկասեան ազգերի գրականութիւնից, ինչպէս, օրինակ, Գէօթէի, Հայնէի, Պուշկինի, Լերմոնտովի, Սենկիչի, Վրաց և թուրք հեղինակների գրւածքները։

Արախանեանը, ինքնուրոյն գրականութեան զարկ տալու համար, «Մուրճի» էջերը լայն բաց էր արել ոչ միայն անւանի հեղինակների առաջ, այլ և բոլորովին նոր, Երիտասարդ սկսնակների։ Նա սկզբից արդէն յայտաբարեց, որ անունների ետեից չէ ընկնելու։ Նրա խմբագրութեան գոները բաց էին ամենքի առաջ, որոնք կամենում էին անկեղծ սրտով որ և է գործ կատարել։

Այժմ հասկանալի է, թէ ինչու 80-ական թւականների գրական շարժումը, մանաւանդ բանաստեղծութիւնը և քննադատութիւնը, անխզելի կերպով կապւած է «Մուրճի» հետ։

Բովանդակութեան կողմից «Մուրճը» աչքի է ընկնում նախ, իբրև կենդանի օրգան։ Ժամանակակից հասարակական կեանքը և գրականութիւնը անդադարձել են ամսագրի էջերում։ Ով ցանկանում է ուսումնասիրել այդ գարեշընը, նրա համար «Մուրճը» թանգարին նիւթեր է ներկայացնում։

«Մուրճն» ունի բազմակողմանի բովանդակութիւն և լայն ծրագիր։ «Մուրճ»-ի հետ, տառւմ է Արախանեանը իր վերջին առաջնորդում, հայկական ամսագրութիւնը մտաւ մի նոր շրջան, ամսագիրը իր տանգական նեղ ծրագիրը փոխեց լայն ծրագրի։ Նո-

աշխատեց ընդգրկել այն ինդիրները, որոնք շօշափում են ժողովրդի հոգեկան և նիւթական կեանքը։

Մի առանձին խնամքով կազմւում էին այն բաժինները, որոնց համար աշխատում էր միայն ինքը խմբագիրը։ որոնք էին՝ առաջնորդողներ, քաղաքական տեսութիւն, ամսւայ քրօնիկ, զանազան լուրեր։ Գրում էր և գրախօսութիւններ։

Քաղաքական բաժնի միջոցով ընթերցողները կարող էին ծանօթանալ այն բոլոր անցքերի հետ, որոնք տեղի էին ունենում Եւրօպայում։

Աւելի հետաքրքրական էր ամսւայ քրօնիկը։ Այստեղ արտայայւում էր հասարակական կեանքը իր զանազան երեսյթներով։ Քաղաքային կամ հոգաբարձական ընտրութիւններ, գաղոցական կեանքի աչքի ընկնող երեսյթները, զանազան ընկերութիւնների գործունէութիւնը, թարոնի վիճակը և այլն։ Այս բոլորը տեղ էր գտնում այդ բաժնում։ Արախանեանը դնահատում ամեն մի երեսյթ, անաշառութեան ցոյց տալով նրա լաւ կամ վատ կողմերը, և ըստ այնմ խրախուսում կամ պախարակում էր։

Բանակոխմեր նա վարում էր մեծ վարպետութեամբ։ Նա կարողանում էր բոնել հակառակորդին նրա սեփական խօսքերով և ցոյց տալ նրա հակառութիւնները։

Հետաքրքրական է «Մշակի» վերաբերմունքը դէպի «Մուրճը»։ Արձրունին չէր կարող մոռանալ, որ Արախանեանը բարձր է դասում նրա զործունէութեան միայն առաջին տասնամեակը։ Արձրունին սկըզբից և եթ թշնամական դիրք բոնեց դէպի այն բանաստեղծները, որոնք աշխատակցում էին «Մուրճն»։

Ծաղրում էր Յ. Թումանեանին նրա մի ստանաւորի համար, իսկ այս տողերը գրողի մասին տառւմ

էր, որ նա բանաստեղծութեամբ է մղում բանակովւ:

Արասիանեանը նոյնքան հմտութեամբ էր վարում «Զանազան լուրեր» բաժինը: Այստեղ արտացոլում էին առօրեայ կեանքի բոլոր գէպքերը:

«Մուրճի» գլխաւոր բաժիններից մէկն էր բանաստեղծութիւնը:

«Մուրճում» տպւում էին բանաստեղծութիւններ, որոնց հեղինակն էր Յովհաննէս Թումանեանը, որ մի անդամից իր վրա գարձեց ամենքի ուշադրութիւնը: Գրում էին նաև Ծատուրեան, Լեռնյոց, Աւ. Իսահակեան, տողերիս զրողը և այլն:

Ոչ միայն «Մշակը», այլ և միւս բոլոր օրգանները՝ «Նոր-Դար», «Արձագանք», թշնամաբար էին վերաբերում գէպի նոր բանաստեղծները: Դրա պատճառը ուրիշ բան չէր, եթէ ոչ այն, որ բոլոր յայտնի և անյայտ գրողները իրանց զործերը տպւում էին «Մուրճի» մէջ և այդպիսով նախատում ամսագրի տարածւելուն:

«Մուրճի» մէջ աչքի էր քննկնում և քննադատական բաժինը: «Մուրճից» առաջ քննադատական բաժինը շատ չնշին տեղ էր բոնում լրագիրներում: Սակաւ էր պատահում գրախօսութիւն լոյս տեսած գրքերի մասին: «Մուրճի» մէջ գրական-քննադատութիւնները, գիտական հետազոտութիւնները դարձան մշտական և անհրաժեշտ բաժին: Լոյս տեսնող գրքերի մասին միշտ յայտնում էին կարծիքներ երբեմն կարճ գրախօսականով, երբեմն ընդարձակ: Ամեն մի հեղինակ կարող էր յուսալ, որ իր պաքի մասին «Մուրճի» մէջ տպւած կը լինի առաջառ կարծիք: Գրականագէտների շրջանում այդ բաժինը մեծ հաւատ էր ներշնչել գէպի ինքը: Բայց գրախօսութիւնից, ամսագրի մէջ երեսում էին լուրջ քննադատութիւններ: Քննադատաներից պէտք է յիշել եղիշէ Մագաթեանին, որի քննադատութիւնները Պատ-

կանեանի և Շահազիգեանի մասին տպւեցին «Մուրճի» մէջ: Այս քննադատութիւնների մէջ լուրջ և հիմնաւոր քննադատի բոլոր նշանները ակնյայտնի երեւում են: Նա խոստանում էր լինել լաւ քննադատ, բայց հոգեկան հիւանդութիւնը խոչնդու հանդիսացաւ: Նոյն այդ հեղինակների մասին քննադատութիւնները զրել է և կ. Կուսիկեանը:

Միւս հայ գրողներից քննադատութեան առարկայ եղած են Յովհաննիսեանի (Ս. Քալանթար), Թումաննեանի (Մանուէլեան), Պոօշեանի (Քարամեան), Իսահակեանի (Աղբալեան) մասին քննադատութիւններ: Իսկ օտար և ուռւ հեղինակներից Իրանէն, Հայնէ (Զօրաննեան), Լերմօնտով (Մանուէլեան), Բելինսկի (Աղբալեան): Գրական քննադատութեան հետ միասին «Մուրճը» հետեւում էր նաև ժամանակակից թատրոնին: Այդ բաժինը վարում էր նաև իմբագիրը, յետոյ այս տողերի զրողը:

Գեղարվեստի ճիւղերը՝ նկարչութիւն և երաժշտութիւն՝ նոյնպէս տեղ էին գտնում ամսագրի մէջ: Անպակաս էին նաև գլորցական, մանկավարժական յօդւածներ (Յ. Տէր-Միրաքեան, Յ. Բարխուդարեան):

Համեմատաբար աւելի թերի էր գաւառական բաժինը: Ճիշդ է, «Մուրճը» ձգտում էր տալ գաւառական կեանքի ուսումնասիրութիւններ, բայց գաւառական թղթակիցների սակաւութեան պատճառով, չէր կարողանում լրացնել այդ բաժինը:

«Մուրճում» երեսում էին նաև կենսագրութիւններ (Չմշկեանի՝ Սունդուկեանի կենսագր.) Աղայեանն՝ «Իմ կեանքի գլխաւոր գէպքերը»: Տպւում էին և ճանադարնորդական գրւածքներ լ. Սարգսեանի «Այց Թիւքքաց Հայաստանին», «Հինգ օր» Լէօի, «Զմիւռնիայից մինչև Ալէքսանդրապոլ» — Տէր-Միրաքեանի:

«Մուրճի» վերջին յօդւածում խմբագիրը փորձ է առնում ներկայացնել «Մուրճի» կատարած դերը:

«Այսքան լայն ծրագիր, դրում է Արամիսանեանը իրագործելու համար, հարկաւոր էլ ժամանակակից սերնդի արժանաւոր ոյժերից շատերի աջակցութիւնը, և կարող ենք ներքին գոհունակութեան զգացմունքով վկայել, որ այդ աջակցութիւնը մենք դաել ենք, և ինչ կատարւած է, —մի ամբողջ սերնդի աջակցութեամբ է կատարւած: Այդ ժամանակում վերակադմւեց հայոց բանաստեղծական գրականութիւնը, նոր արժանաւոր ոյժեր հաստատւեցին վիպագրութեան մէջ, հիմք դրւեց հանրամատչելի գիտական գրականութեան, և տնտեսական սօցիալական ինդիրները մուտք գործեցին գրականութեան մէջ:

Ահա «Մուրճի» մատուցած ծառայութիւնը:

90-ական թւականներին շարունակում էին նախորդ շրջանի լրագիրները «Մշակ», «Արձագանք», «Նոր-Դար» և «Աղբիւր» մանկական ամսագիրը:

Արծրունու մահից յետոյ «Մշակը» մի տարուչափ ընդհատւեց, յետոյ անցաւ Ալ. Քալանթարի ձեռքը: Նոր խմբագիրը սկզբից և եթ յայտարարեց, որ պիտի շարունակէ «Մշակի» նախկին ուղղութիւնը և և հետեւի նրա ծրագրին: Պահպանեց և մեծ ու տառի ուղղագրութիւնը: Քալանթարը գրում էր թէ տռաջ և թէ այժմ առաջնորդողներ ժամանակակից աչքի ընկնող ինդիրների մասին: Թարրոնական բեցենգիւան վարում է մեծ մասամբ ինքը՝ «Սիրող» ստորագրութեամբ: Գրում էր երգիծաբանութիւններ վրձին ստորագրութեամբ: Երբեմն տպւում էին նրա ճանապարհորդական տպաւորութիւնները: Քալանթարի օրով «Մշակի» մէջ մեծ տեղ բանեց գիւղատնտեսական բաժինը: Այստեղ տպւում էին բազմաթիւ յօդւած-

ներ, որոնց մէջ խմբագիրը շօշափում, արծարծում էր գիւղատնտեսութեան վերաբերեալ հարցեր: «Մշակի» նոր շրջանում գլխաւոր աշխատակիցն էր դարձեալ Հ. Առաքելեանը, որ Քալանթարի բացակայութեան ժամանակ վարում է խմբագրի պաշտօն: 90-ականների թւականների կէսից Լէօն պաշտօն ստացաւ «Մշակի» խմբագրատանը և դարձաւ նրա գլխաւոր աշխատակիցներից մէկը: Գրեթէ իւրաքանչիւր համարում երեսում էին նրա յօդւածները ժամանակակից ինդիրների մասին: Վերջին տարիները Լէօն ինչ ինչ պատճառով այլ ևս չէր աշխատակցում «Մշակի»:

«Արձագանքի» և «Նոր Դարի» մասին գլել եմ իր տեղում: Այժմ ոչինչ նոր բան չէ կարելի ասել նրանց մասին: Ինչ վերաբերում է «Աղբիւրին», նա երկար տարիների ընթացքում, մինչև «Հասկերի» երեալը, մնում էր միակ մանկական ամսագիրը, որի մէջ ամփոփուում էր և ժամանակակից մանկական գրականութիւնը:

90-թւականներին սկսեցին հրատարակել «Թարրուն» հանդէսը և «Լումայ», որոնց մասին կը խօսենք այժմ:

Թարրիաննեանը հրատարակում էր «Թարրոն» վերնագրով մի ալմանախ, որ ամբողջապէս նւիրւած էր թարրոնական գործին: Այստեղ գետեղում էր թէ Թիֆլիսի թէ գաւառական թարրոնների ներկայացումների ըեղիւմէն: Տպւում էին յիշողութիւններ թարրոնի անցեալի մասին, օր. Զմշկեան, Պոօշեան: Յաճախ երեսում էին թարրմանական պէտներ, օր. Մարիա Ստիւարտ: Հանդէսի մէջ երեսում էին նաև քննադատութիւններ:

90-ական թւականների թարրոնի գործունէու-

Թիւնը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ Թարխանեանի «Թատրոնը»:

1886 թ. սկսեց հրատարակւել «Լումայ» հանդէսը՝ սկզբում վեցամսեայ, յետոյ դարձաւ ամսագիր և շարունակում է մինչև օրս: Հրատարակիչ—Խմբագիրն է Գիւտ ք. Աղանեսնը: Ամսագրում տպւում էին ընթացիկ գրականութեան արտադրութիւնները՝ Մուրացանի վէպերը, Շիրվանզադէի գրամանները և մանր պատմւածքներ, Փափազեանի, Պոօշեանի, Ենդիբարեանի և ուրիշ գրողների երկերը:

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆ

90-ական թւականներին մամուլի հետ կենդանացաւ և բանաստեղծութիւնը: Մէկը միւսի ետեից յայտնուում էին նոր բանաստեղծներ՝ Յ. Յովհաննէսեան, Յովլ. Թումանեան, Ա. Ծառուրեան, Լ. Մանւէլեան, Ա. Խասհակեան և այլն: Մէկը միւսի ետեից լոյս էին ընծայում բանաստեղծական ժողովածուներ մէկ կամ երկու հատորով: Նրանք բոլորը համախըմբւած էին «Մուրճի» շուրջը, որից ստանում էին խրախոյս և քաջալերութիւն: Հասարակութեան կրթւած մասը ջերմ համակրութիւն էր ցոյց տալիս գէպի բանաստեղծները: Միայն մամուլն էր բոնել թշնամական գիրք, ոչ ոքի մէջ չնորհ չէր տեսնում և չէր ուզում ճանաչել: «Արձագանքը» նոր բանաստեղծներին անւանում էր «ուսանաւոր գրողներ»: Արծրունին ծաղրում էր Յովլ. Թումանեանին նրա մի ուսանաւորի համար, նոյնպէս և այս տողերի գրողի մասին գրեց, թէ մեր բանաստեղծը բանաստեղծութիւններով է մղում բանակոււ: Դա ասւած էր հետեւալ ուսանաւորի առիթով («Մեր բանաստեղծներին»)

Անվըհատ հոգով և միաբերան
Բարձր հնչեցրէք ձեր ազնիւ տաղեր,
Ինչպէս անառառում նորագարձ գարնան
Երգում են աշխոյժ նորեկ թոշուններ:

* * *

Ծառերի վրա սկ ագռաւները
Միասին խմբւած թող անվերջ կռուան.

Միթէ հնչական ձեր նւագները
Խոպոտ ձայներում պլիտի խլանան»:

Դրանց թշնամանքի պատճառն այն էր, որ բանաստեղծները զրում էին «Մուրճի» մէջ և այսպիսով նպաստում նրա տարածւելուն: Ահա ինչու հայի չար նախանձը իր գլուխը բարձրացրեց: Սակայն որովհեաւ բանաստեղծները շարունակում էին իրանց քաղցր երդը և արհամարում նախանձուների հայոյանքը, հակառակորդները կամաց կամաց սկսեցին հաշտել և էլ բերան չէին բաց անում: Ուրացողները դարձան հաւատացողներ:

Բանաստեղծների հետ միաժամանակ հանդէս եկան նաև վիպասաններ՝ Լէօ, Շիրվանզադէ, Փափազեան, Ահարոնեան և այլն, որոնց մասին խօսք կը լինի յաջորդ պըակում:

Նախկին շրջանի բանաստեղծութեան մօտիւները զլխաւորապէս ազգային էին: Բանաստեղծների ոգեւորութեան աղբիւրը ազգն էր իր անցեալով, ներկայով և ապագայով: Նրանք փառաբանում էին պատմական նշանաւոր անցքեր, Վարդան Մամիկոնեանին և նրա խնկելի զինակիցներին:

Մի առանձին պատկառանքով էին յիշում Սահակի և Մեսրոպի, Եղիշէի և Մովսէս Խորենացու անունները: Նրանք ողբում էին հայի դարաւոր տառապանքը, պարսաւում էին հայի սլակառութիւնները՝ տգիտութիւնը, նիւթավաշտ ողին և անտարբերութիւնը դէպի ազգային շահերը. բոլորեքեան տոգորւած էին վերածնութեան գաղափարով: Քարոզում էին լոյս և գիտութիւն, ցոյց էին տալիս փրկութեան ճանապարհներ:

Առաջին շրջանի ամենայաջող երգերը այնպիսիներն էին, որոնց մէջ փառաբանւում են ազգ, հայ-

բենիք, մայրենի բնութիւն: Օր. Պատկանեանի «Արաքսի արտասուքը», Նալբանդեանի «Մեր հայրենիքը», Շահազիզեանի «Լևոնի վիշտը»:

90-ական թւակսնների բանաստեղծութիւնը տարբերում է նախորդ շրջանի բանաստեղծութիւնից նրանով, որ նոր բանաստեղծութեան մէջ գրեթէ բացակայում է ազգային մօտիւր: Ազգային մօտիւր այլ ևս չէր ոգեսորում բանաստեղծներին: Նրանք գտել էին ոգեսորութեան նոր աղբիւրներ, որոնք աւելի ընդարձակ էին:

Յիրաւի, նորագոյն բանաստեղծների ոտանաւորների մէջ պատահում են և ազգային մօտիւներ, բայց շատ սակաւ: Իւրաքանչիւրը իր տուրքն էր տապիս ազգին, գրելով մի քանի ոտանաւորներ՝ տոգորւած ազգային ոգով, օր. Յովհաննէսեանի «Ճղմուտը», Ծատուրեանի «Հայրենիքը»: 90-ական թւակսնների բանաստեղծութեան մէջ մեծ տեղ են բռնում ժողովուրդը և անհատական զգացումները:



Յ Ա Վ Հ Ա Ն Ե Մ Ե Ա Ն

Նրա կեանքը *)

Յովհաննէս Յովհաննէսեանը ծնւել է 1864 թ.
ապրիլի 26-ին Վաղարշապատ զիւղում։ Հայրը այն-
քան միջոց չունէր, որ նրան իր ծախքով կարողա-
նար ուսում տալ. բայց նա յաջողեցնում է որդուն
Լազարեան ձեմարանի կանգիտատ ընդունել տալ

*) Յովհաննէսեանի մասին կենսագրական տեղեկու-
թիւնները, իմ խնդրանօք, ուղարկել է ինձ բանաստեղծը,
որի համար յայտնում եմ շնորհակալութիւնս։

Հեղինակ

Լազարեաննէրի հաշւով ուսում ստանալու համար։
Այնուհետև, ձեմարան կանչելու դէպքում համապա-
տասխան դասարանի պատրաստութիւն ունենալու
համար, նա որդուն տալիս է հանգուցեալ Վահան
վարդապետ Բաստամեանի բաց արած փոքրիկ դրա-
բոցը, ուր մի տարի սովորելուց յետոյ ընդունեց
երեանի պլոգիմնազիան։ Այսաեղ նա սովորեց մինչև
1877 թ. սեպտեմբերի վերջերը, երբ նրան կանչե-
ցին Մոսկվա: Լազարեան ձեմարանում ուսումն սկսեց
երրորդ դասարանից և յաջողութեամբ (արծաթի մե-
դալով), աւարաեց 1883 թ.: Նոյն թւին մտաւ Մոսկ-
ւայի համալսարանի պատմական-լեզւագիտական բա-
ժինը, որ աւարտեց 1888 թ.: Այդ տարւայ աշնա-
նից սկսեց մանկավարժական գործունեութիւնը, որ
անընդհատ տեսեց (ո. էջմիածնի ձեմարանում, Ներ-
սիսեան գլուխում և մի տարի Յովհաննէան ուսում-
նարանում) մինչև 190^{9/10} ուս. տարին։

1906 թ. նրա հանգուցեալ բարեկամ Նահապետ
Եպիսկոպոսը, որ այդ ժամանակ էջմիածնի Սինոդի
անդամ էր, համոզեց նրան ընդունել Սինոդի առե-
նադպրի պաշտօնը այն պայմանով, որ շարունակէ
գասերը Գէորգեան ձեմարանում։ Այդպէս շարու-
նակւեց մինչև 190^{9/10} թ., երբ ինչ-ինչ հանգամանք-
ներից ստիպւած հրաժարւեց գասերից, և այժմ կա-
տարում է միայն Սինոդի առենադպրի պաշտօնը։

Նրա զբական գործունեութիւնը սկսւել է շատ
վաղ։ Երբ չորրորդ դասարանի աշակերտ էր 15 տա-
րեկան, երբ մի կողմից ընթերցանութեան ազգեցու-
թեան տակ (մասնաւորապէս Պուշկին, Լերմօնտով
Բայրըն, Հայնէ), միւս կողմից՝ հայրենիքի կարօտով
վասւած՝ սկսեց իր մանկական զգացմունքները ու
մաքերը դրի առնել յանդաւոր տողերով։ Քիչ չէր

ազգում նրա վրա իր սիրելի ուսուցիչ Ամբատ Շահագիզեանը։ Առանձին եռանդով սկսեց զրել 1880 թւականից։ Գրում էր ինքն իրա համար, չէր սիրում ընկերներին ցոյց տալ, որոնք սակայն գիտէին, որ նա ոտանաւորներ է գրում։ Ճեմարանի մեծ դասարաններում աշակերտական թերթ էին հրատարակում «Յոյս» անունով։ Մէկ մէկ այնտեղ գրում էր։ Ուսանողութեան վերջին տարին էր, որ մի խումբ մօտիկ ընկերները նրանից ծածուկ հոգացել էին դրամի մասին և մի գիշեր, մի ընկերական հացկերոյթից յետոյ, ստիպեցին նրան խոստանալ թոյլ տալ իր ոտանաւորների հրատարակութիւնը, և այսպիսով 1887 թ. լոյս տեսաւ նրա գրւածքների փոքրիկ ժողովածուն։

1888 թ. վերջացաւ նրա ուսանողութեան անհոգ շրջանը։ Սկսւեց հոգսերով ու ցաւերով լի կեանքը։ Այդ ժամանակւանից սկսած միայն հազւագիւտ ովելութեան ժամերն են եղել բանաստեղծութեան նվիրւած։ Այն մթնոլորդը, այն կեանքը, որով ապրում էր, շատ ու շատ հեռու են զրական ստեղծագործութեան համար նպաստաւոր լինելուց։

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐԸ

Յովհաննէսեանը գրում էր բանաստեղծութիւններ, որոնց քննութիւնից երկում է, որ նա դեռ ևս նմանողութեան շրջանումն էր գտնուում։ Նրա բանաստեղծութեան մի քանի մօտիւների վրա ազդել է Շահագիզեանը, որի աշակերտն է եղել։ Նոյնպէս նրա վրա ազդել է Լերմօնտովը։ Նրա մի բանաստեղծութեան վրա իր գրոշմը դրել է Լերմօնտովը։ «26 ապրիլ» ոտանաւորի մէջ նա ևս անցած կեանքը համարում է «անպառզ»։ Լերմօնտովը ասում է. „Մы осушили умъ наукой безплодной“։ Յովհաննէսեանը ասում է. «Գիտութիւնն, ինչպէս մի թոյն դանդաղկոտ, վարակեց հոգիս»։ Մի ուրիշ տեղ՝ «Երբ թոյնը ճաշակեցի գիտութեան»։ Յովհաննէսեանի բանաստեղծութեան վրա ազդել է և նադսօնը, որ ուսանողների սիրած բանաստեղծն էր, շնորհիւ իր իդէալական վեհութեան։ Այն միտքը, թէ ձմեռը չէ կարող արգելել շքեղ, ծաղկաբոյր գարնան գալուստը, նադսօնի խօսքն է։ Նոյնպէս և այն խօսքերը, թէ բանաստեղծը չէ կարող իր բոլոր սէրը նոիրել իր սիրած աղջկան, այլ սրտի մէջ մի անկիւն պահել է թշւառների համար, բանաստեղծի բողոքը ժամանակակից չարիքի դէմ—այս բոլորը նադսօնի ասածն է։

Յովհաննէսեանի վրա ազդել է և Հայնէն։ Նա երկինքը համեմատում է որտի հետ, աստղերը սիրուհու աչքերի հետ, տիեզերքի անհունութիւնը իր սրտի անհունութեան հետ։ Այդ ոտանաւորի երկու

տունը Շահագիզեանը վերցրել է Հայնէլից և նոյնութեամբ մտցրել իր մի ինքնուրոյն ուսանուառի մէջ։ Յովհաննէսեանը անշուշտ ազդւել է իր ուսուցչից։ Սակայն չպէտք է կարծել, որ Յովհաննէսեանը եղել է լոկ հետևող։ Ոչ Նա ունի բազմաթիւ ինքնուրոյն ուսանաւորներ, ինչպէս «Տղմուալ», «Արտաւազգը» «Հատիկը», «Արագն եկաւ լափին աալով», «Ալագեօգի բարձր սարին» և այլն։

1908 թ. Յովհաննէսեանը լոյս ընծայեց լիակատար ժողովածու, որ կազմում է մի պատկանելի համար, որի մէջ մտել են բազմաթիւ նոր ուսանաւորներ։ Այժմ ծանօթանանք հեղինակի պօէգիայի հետ։

Մի ուսանաւորի մէջ բանաստեղծը յայտնում է իր հիասթափութիւնը, ասելով, որ արդէն ճաշակել է «սիրոյ թոյնը և մեղրը»։ Բայց Նա տակաւին կոյսին արժանացնում է իր սիրոյն։

Նա փափագում է ծծել գեղջկուհու շրթունքի «մեղրը», «քաղել թշերի վարդը», «շամամ ծծերի հոտն առնել»։ Աւելի մեծ երջանկութիւն չը կայ նրա համար, քան այդ կոյսի սէրը։ Նա պատրաստ է խեղդել իրան նրա ապրեշում մազերով։ Նա խոստանում է իր սրտի թագուհուն զոհ բերել իր բոլոր զգացումները, «արշալոյսի շողերից պսակ հիւսել», նրա կուրծքը ցողել վարդի բոյրով, նա կուզէր յաւիտեան «գերի մնալ» իր սիրուհու ձեռին, որովհետեւ այլ երջանիկ վիճակ չը կայ նրա համար։ Բանաստեղծը շատ երջանիկ է և խորհուրդ է տալիս պատանիներին, որ շտապեն ճաշակել կեանքի վայելչութիւնը, որովհետեւ կը ծերանան, և այն ժամանակ ուշ կը լինի, էլ չեն լինի նախկին կրքերը և պատանեկութեան եռանդը։

Բայց ահա մի շարք ուսանաւորներ, որոնց մէջ պօէտը բոլորովին ուրիշ մտքեր է յայտնում։ Այժմ

նա այլ ևս հեշտասիրութեան երկրպագու չէ, նա այլ ևս չէ երգում սիրոյ զւարձութեան մեղեղիներ, այլ ևս գարուն և վարդ չը կան նրա համար։ Նա պիտի դուրս գայ կուի ասպարէզ, թոյնով պիտի թաթախէ իր զրիչը, պիտի հանէ կեղծաւորի զիմակը, պիտի դատէ եղեռնագործին, մէծատան երեսը այրէ ամօթով։ Նա հրաժեշտ է տալիս այն բոլորին, ինչ որ բանաստեղծին երջանկութիւն էր պատճառում, — ծաղկաբոյր գարուն, համբոյր, սէր, չքնաղ կոյս, վայելչութեան ժամեր, քաղցր ժպիտ և մատաղ կեանք։ Նա թողնում է այդ ամենը և սիրում է աղքաներին։

«Աղքատութիւն ես սիրեցի,

և եղճի լացը, հառաչանք…

ես քնարս նւիրեցի

Վիշտ երգելու և տանջանք»։

Այս տողերից երեսում է, որ բանաստեղծի հոգում տեղի է ունեցել մեծ յեղաշրջում։ Նախկին հեշտասէրը դարձել է աղքատների պաշտպան և համակրող։ Մի ուրիշ ուսանաւորի մէջ պօէտը հաւատացնում է, որ այսուհետեւ իր զրօշակը պիտի պարզէ աղքատութեան երգի համար։ Նա պատրաստ է մեկնել ձեռը թշւառ ընկերին և միխթարելնրա տանձւած սիրալ։ Նա ունի սիրոյ առարկայ, բայց իր ամբողջ սիրալ չէ կարող նւիրել նրան։ սրտի մէջ կայ մի անկիւն թշւառութեան զոհերի և ճակատագրի խորթ զոհերի համար։ Այդ սէրը պիտի տանէ «հառաչանքի հովիտը»։

Ահա այսպիսի հակասական աշխարհում է տեղերում պօէտը։ Դեռ ևս կեանք չը մտած, գեռ ևս չը տեսած այն չարիքը, որի գէմ նա զինւում է իր «յանգաւոր տողերով», նա սկսում է մարտնչել չա-

ըիքի դէմ: Նա կեանքը ուսած էր միայն գրքերից, չէր տեսել դեռ ևս թշւառութեան զոհերին, ճակատագրի խորթ զաւակներին և հառաչանքի հովիտը: Այդ մատաղ տարիներում երկու տեսակ ձգտութիւներ ալեկոծում են բանաստեղծի հոգին-անձնական բարորութեան տենչը և մարդասիրութիւնը: Այդ երկու հակառակ հոսանքների մէջ տարուբերում է պօէտը:

Բանաստեղծը, կեանքի ծովը նետւելով, իրան յանձնում է բախտին, ալիքների վրա տարուբերուելով: Այս բոլորից յետոյ հասկանալի է, ինչու պօէտին այցելում են երբեմն յուետեսութեան բոսկներ, հոգեկան լքում և վճատութիւն: Այսպիսի մոայլ ըուպէներսւմ բանաստեղծը իրօք խղճալի է: Հազիւ քսան երկու տարեկան՝ նա արդէն ծերացած է, նա սարսափում է իր պատկերից, նա կորցրել է և սէր և ոգեորութիւն («Զ6 ապրիլի»): Գիտութիւնն է, որ թունաւորել է նրա հոգին, և նրա կասկածաւոր միտքը քաղել, խորտակել է կեանքի ծաղիկը: Հազիւ քսան երկու տարեկան՝ նա զգում է, որ հանգչում է հոգին, որ էլ չը կայ բոցը ոգեորութեան, որ սէրը կորցրել է իր նախկին հրապոյրը. և քաղցրութիւնը վառվուն կեանքի դեռ ևս ոչ մի ծաղիկ չը քաղած, նա ընկած է, ինչպէս մի մաշւած ծերուկ («Զգում եմ արդէն»): Ինչ վերաբերում է ոգեորութեան սառչելուն, դա համապատասխանում է իրականութեան, որովհետեւ, յիրաւի, ապրելով մի զիւզում, որտեղ ոչինչ չը կայ զբաղեցնող կուլտուրական մարդուն, նա յետ է մնում իր ժամանակից և ուղղակի թմրում: Բնական է, որ այդպիսի պայմաններում ոգեորութիւնը կարող է սառչել: Իրա հետեանքը եղաւ այն, որ երկար ժամանակ էլ ոչինչ չէր գրում, համարեա մոռացւած էր: Այդպէս էլ

կը մնար և աւելի ևս կընկնէր, եթէ նրան չը հրափրէին ներսիսեան դպրոցից ուսուցչի պաշտօնով: Թիֆլիսում, բնական է, նա նորից պիտի կենդանանար, որովհետեւ կեանքի պայմանները նպաստում են տաղանդի զարգացման և առատ նիւթեր է գտնում շրջապատող իրականութեան մէջ: Այնտեղ նա զուրկ չէ մնում էսթետիկական գւարճութիւններից, մըտաւոր աշխատանքից: Այս բոլորը վերականգնում է բանաստեղծի մէջ ստեղծագործական ոյժը և եռանդը: Եւ իրաւ, զրանից յետոյ նա սկսեց յօրինել նոր բանաստեղծութիւնները: Եւ զրա շնորհիւ էր, որ նա դարձեալ յայտնւեց և նրա մասին գրւեցին համակրական քննադատութիւններ, ինչպէս, օրինակ, Վանցեանը, որ նրան գերադասում էր միւս բանաստեղծներից:

Յովիաննէսեանը գրում էր և բանաստեղծի կոչ բանաման մասին: Մի ոտաննաւոր նւիրւած է Գամառ-Քաթիպային, որին յանդիմանում է, թէ ինչու քնարը կախել է պատից, ինչու նա չէ շարունակում մարդկանց սրտերը վառել սիրով, երգել բարին և կարեկցութիւն («Մի թողնիր, երգիչ, քնարդ կախւած») Այնտեղ պարզ երեւում է Պուշկինի ազգեցութիւնը («Глаголомъ жги сердца людей») Մի տեղ նա պահանջում է, որ պօէտը զարթեցնէ քնած զգացմունքը և վառէ մեր սրտերում ազնիւ կրքեր («Երգչին»): Մի ուրիշ տեղ հրաժեշտ է տալիս գարնան և վարդին և ուխտում է երգել միայն խեղճի լացը, վիշտը և տանջանքը: Ահա մի հակապատկեր այն բանաստեղծութիւններին, որոնց մէջ պատրաստ է իրան խեղճել ապրշումի մագերով, կամ այն ոտանաւորը, որ սկսում է այսպէս:

«Ախ, աւէք ինձ քաղցր մի քուն,
կեանքից հեռու ոլանամ,
Այն աշխարհը, ուր ինդութիւն
եւ սէրն է միշտ անթառամ»:

«Ասում են, պօէտ» ոտանաւորը յիշեցնում է Նալբանդեանի «Ասօրեայ աշխարհը»: Այստեղ հասարակութիւնը կամենում է լսել ոչ վիշտ, հառաչանք, այլ ուրախ տաղեր, մինչդեռ բանաստեղծը իր քնարը նորիել է մարդկային թշւառութիւնները երգելու: Նոյն այդ միտքը, որ արտահայտել է Նալբանդեանը միւս ոտանաւորի մէջ («Մանկութեան օրեր»), մենք գտնում ենք Յովհաննէսեանի ոտանաւորի մէջ («Ամենայն անգամ», երբ թեթևամիտ»)...

«Այստեղ, ուր արցունք, շղթայ և աւեր,
Ուր լուսում է լոկ հառաչք լալագին,
Քո քնարիցը թող ուրախ ձայներ,
Ով թշւառ երգիչ, բնաւ չը լուի»:
Նալբանդեանի ասածը.

Ներկայ օրերում, այլ ինչ սև քնար.
Սուր է հարկաւոր կտրիճի ձեռքին,
Արիւն ու ու սրով թշնամու վրա—
Այս պիտի լինի խորհուրդը կեանքի:

Յովհաննէսեանի լաւազոյն ոտանաւորներն են «Գեղեցիկ օրեր», «Գիւղի ժամը», Աւետարան, «Անլոյս խաւարը», «Ես քեզ սիրեցի», «Ամենայն անգամ», «Երբ մատաղ մուսաս», «Արագն եկաւ», «Ալագեազի բարձր սարին», որոնք հրաշալի ժողովրդական եղանակով երգում են և մի մի գորհարներ են հայկական պօէզիայի մէջ: Գիւղի ժամը մի սիրուն գիւղական պատկեր է: Այստեղ նկարագրուած են հայ գեղջուկի կեանքից մի քանի գծեր՝ ժամասիրութիւն, բարեպաշտութիւն, իսկ

բացասական կողմը՝ վաշխառութիւնը, որ գիւղացոց համար մի մեծ, կործանիչ չարիք է: «Հատիկը» նոյնպէս մի սիրուն գործ է, ուր շատ համակրելի գծերով նկարագրուած է երկրագործը, իրրե քրտնաշան աշխատաւոր և ջերմ հաւատացող, որի ուրախութիւնը առատ հունձն է, իսկ վիշտը անբերբիութիւնը:

Շատ յազող է «Արտաւազգը»: Արա նիւթը շատերն են նշակել՝ Շահազիզ, Բաֆֆի, բայց գեղարւեստական տեսակէտից նրանց ոտանաւորներից աւելի լաւ են: Յաջող է նոյնպէս «Ճղմուտը»: «Արտաւազգի» մէջ լեզուն և ոճն էլ ուժեղ է, տաղաչափական ձեն էլ աւելի եռանդուն: «Ճղմուտը» ամբողջապէս տողորուած է ազգասիրական ոգով: Իր բովանդակութեամբ յիշեցնում է «Արաքսի արտասուքը»: Այստեղ ևս հակագրուած են նախսկին փառքը և այժմեան թըշւառ վիճակը: Երկուսի մէջ ևս հեղինակները խօսում են կշտամբանքով: Երկուսի մէջ ևս հեղինակները տալիս են պատմական գետերի նկարագրութիւնը: Երկու գետերն էլ լցւած են վշառվ: Ոտանաւորը թարգմանւած է ուսւերէն և արտասանուում է բեմից:


Յովհաննէսեանը թարգմանել է օտար հեղինակներից, որոնք են՝ Շիլեր, Գէօթէ, Նադոն, Հերվեդ, Տենսիոն և այլն, բազմաթիւ բանաստեղծութիւններ, բալլագներ: Թարգմանութիւնները բաւականին յաջող են, մօտ են բնագրին:

Յովհաննէսեանը լերիկ բանաստեղծ է: Նրա ոտանաւորների զիսաւոր մօտիւներն են սէրը իր քաղցրութեամբ և գառնութեամբ: Առաջ ոչինչ չը կար նրա համար աւելի բարձր, քան սէրը, և կեանքի վայելչութիւնը, բայց յետոյ նրա մէջ մարդասիրութիւնը առաջնակարգ տեղ է բոնում: Նրա ոտանաւորները լցւած

Են ջերմ համակրանքով դէպի ժողովուրդը, դէպի գեղջուկը, որոնց նւիրել է բազմաթիւ երգեր։ Այդ երգերից ամենագեղեցիկն են «Արագն եկաւ և «Ալագեօզի բարձր սարին», որ ամեն տեղ երգւում է։ Նրա բանաստեղծութեան բնորոշ գծերից մէկն է յունետեսութիւնը, բայց նա մեղմոնում է ապագայի վառ յոյսերով։

Յովհաննէսեանի լեզուն և ոտանաւորները նոյնապէս գեղեցիկ են և պատկերաւոր։

Յովհաննէսեանը իր շնորհալի բանաստեղծութիւններով անմահացրեց իր անունը և պատւաւոր տեղ գրաւեց հայոց գրականութեան պատմութեան մէջ։



ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ն Ր Ա Կ Ե Ա Ն Ք Ը

Տեղեկութիւնները Թումանեանի կեանքի մասին քաղում եմ նրա ինքնակենսագրութիւնից, որ տըպւած է «Ընտիր հատւածների» մէջ։

Թումանեանի տոհմը ծագում է հին ազնւականներից։

Յովհաննէս Թումանեանը ծնւել է 1869 թ. Դսեղ գիւղում, որ գանւում է Լոռու ձորում։ Նրա հայրը, տէր Թագէոսը, գիւղի քահանան էր։ Իմանալով ուս-

ման արժէքը, նա սովորեցնում է որդուն գրագիւտութիւն։ Յետոյ նրան տալիս է տիրացու Սհակի մօտ, որ մի սենեակում հաւաքել էր մի խումը երեխաներ՝ աղայ և աղջիկ միասին։ Սհակ վարժապետ կառավարում էր «գաւազանաւ երկաթեայ»։ Տար տարեկան հասակում գնում է Զալալօղի, ուր մեծ և օրինակելի ուսումնաբան կար Տիգրան վարժապետի հակողութեան տակ։ Այնուհետեւ նա մտաւ Ներսիսեան գպրոցը, բայց չաւարտեց։ Նա սկսել է զրել ոտանաւորներ շատ վաղ։ Ոտանաւորները երգիծարանական, հայրենասիրական և սիրային բնոյթ ունէին։ Սիրային ոտանաւորներից մէկը (1882 թ.), մի գէպքի պատճառով, տարածւեց նրա ընկերների մէջ ու մնաց մինչև օրս։

Նրա ոտանաւորներից ամենավաղ զրածը «Շուննու կատուն» է (1886)։ Ամուսնացել է 1888 թ.։ Ծառայել է մի քանի տեղ։ Բայց ոչ մի տեղ երկար չէ մնացել։ Բանաստեղծը ծառայելու հակում չունէր։

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

90-ական թւականների սկզբում լոյս տեսաւ թումանեանի բանաստեղծութիւնների ժողովածուն, ուր զետեղւած էին նրա անդրանիկ ոտանաւորները։

Առաջին տեղում դրւած են մանր ոտանաւորները «Երգեր» վերնագրով։ Այստեղ քնարական բանաստեղծութիւնների հետ միասին կան և զուտ ժողովրդական երկեր։ Վերջին տեսակի գրւածքները տւելի յաջողւած են։ Նրանց մէջ նկարագրւած են բնութիւնը և ժողովրդական կեանքից զանագան տեսաբաններ։

Ահա մի շարք այդպիսի բանաստեղծութիւններ՝ «Հին օրնութիւն», «Համերգ», «Արերում»։

«Հին օրնութիւն» մէջ համարէս է բերւած երկու սերունդ, մէկը պասին է, միւսը թոռը։ Մի գեղեցիկ իդիլիա և միհնոյն ժամանակ բնութեան նըկարագրութիւն—առւակի խոխոջը ձայնակցում է ծերունու երգին, իսկ մուայլ ժայռը՝ մաքի ետեից ընկածականջ է գնում։

«Հին օրնութիւնը» մի սքանչելի գիւղական իդիլիա է։ Կանաչ, վիթխարի ընկուղենու տակ ծալապատիկ նստառած են պատերը, քէփ են անում։ Ժիր մանուկները նրանց առաջ գլխաբաց և խոնարհ կանգնած՝ սպասում են մեծերի հրամանին որ տաղ տահն։ Տաղն ասում են։ Պապերից մէկը, հիացած օրնում է և ասում. «Ապէքը, բալէքս, ապրէք, բայց ոչ մեզ պէս ապրէք»։ «Արերում» վերնագրով ոտանաւորը շատ յաջող է։ Վերին աստիճանի կենդանի նկարագրւած է գիշերային փոթորիկը լեռներում և մի բնորոշ պատկեր հովական կեանքից։ Գողերը վրա են տալիս տաւարի վրա, շունը հաշում է, և հովիւնները մհակներով վագում են խոիկ տալու աւագակներին, չնայած, որ սաստիկ անձրե էր դալիս և փոթորիկ էր, որումունքը և կայծակները տկանջ էին խացնում։

Նոյն այս սերիային է վերաբերում «Գութանի երգը»։ Այստեղ պօէտը նկարագրում է գիւղացոց դաշտային աշխատանքը և նրանց ցաւերը՝ պարտքեր, կոռ ու բէկեար։

Քնարերգական երգերի մէջ բանաստեղծը արտայայտում է իր զգացումները, որոնց շարժառիթն է լեռնական գեղեցիկ բնութիւնը իր ամպամած լեռներով, և անդնդախոր ճորերով («Նախերգանք»), Աէրը նոյնպէս շարժառիթ է նրա մի քանի երգերի («Խմաէրը», «Կարոտ», «Ուրու», «Խմ երգը»), Անցած եր-

յանկութիւնը և տխուր ներկան, կեանքի ծանր հոգ-սերը, յուսահատութիւնը—այս բոլորը ներկայացրւած է «Երկար զիշերների» մէջ:

Ազգային վիճակը ևս հոգս է պատճառում բանաստեղծին: Մի քանի ստանաւորներում նա ողբում է ազգի թշւառութիւնը կոտորած, աւեր, պանդիտութիւն, անտէրութիւն («Տրամութեան սալմոններից», «Տէր, մինչեւ Երբ», «Մեր նախորդներին»):

Միայն մի քանի ստանաւորների մէջ պօէտը, թողնելով անհատական զգացումը, աշխատում է թափանցել տիեզերքի գաղտնիքը («Ա՛խ, ես երանի») կամ հակագրել մարդկային վաղանցիկ կեանքը բնութեան յաւերժ կեանքին («Է՞յ, աստղեր, աստղեր»):

Թումանեանը գրել է և լեզենդներ: «Լուսաւորչի կանթեղը» մի գեղեցիկ նմուշ է: Կանթեղը, որ վերագրում են լուսաւորչին, առանց պարանի կախւած է երկնքից և կէս զիշերին լոյս է տալիս Արագածի կատարին: Կանթեղի մէջ իւղի տեղ սուրբի մաքուր արցունքներ են, որ երբէք չէ հատնում: Մարդկային ձեռք չի հասնի կանթեղին, ամենասասատիկ քամին չէ կարող հանգնել նրա լոյսը: Այդ կանթեղը կարող է տեսնել միայն նա, ով անմեղ է: Կանթեղը հայերի սիրոյ և յուսոյ սիմոնն է: Շատ գեղեցիկ է «Աղթամարը», որի նիւթը, որքան մեզ յայտնի է, տւել է բանաստեղծին ուսուցիչ Փիրումեանը: Նա կամենում է բացատրել Աղթամարի անւան ծագումը: Ահա լեզենդայի բովանդակութիւնը:

Աղթամարը ծագում է «Ա՛խ, թամար» բառերից: Թամարը եղել է մի սիրուն աղջիկ, որ ապրում էր Վանայ ծովի կղզում: Մի գեղջուկ տղայ ամեն գիշեր լող տալով ծովում և աչքը դէպի կղզում վառող կրակը յառած՝ դիմում է ուղիղ դէպի ե-

գերքը: Այնտեղ տեսակցում է սիրունու հետ, գրկախառնում, համբուրուում են և մի քանի երջանիկ ժամեր անց կացնելով միասին, սիրահարը կրկին լողալով վերագանում է: Բայց մի անգամ, երբ ծովումն եր, չարակամ մարդիկ կրակը հանգցրին, և նա, կըռւելով ալիքների հետ, վերջապէս յաղթւում է և խորասուցում ծովի յատակը: Խեղդւելիս նա գոչում է: «Ա՛խ, թամար...» Այստեղից էլ ծագում է կղզու անունը: Սէրը այն կրակն է, որ վառում է թամարը: Նա ոյժ է ուալիս պատահու բազուկներին: Առանց այդ կրակի կամ թամարի սիրոյ, բազուկները թուլանում են, և նա խեղդւում է:

Վերին աստիճանի յաջող է «Շունն ու կատուն»: Այլրանութիւնը շատ պարզ է և ոչ կարօտ լուսաբանութեան: Առակը զրւած է շատ սրամիտ ոճով: Նա ծանօթ է զրեթէ տմեն մի մանուկ աշակերտի:

Մի առանձին սերիա կազմում են հետեւել աւ Աւանդուանդութիւնները՝ «Անբախտ վաճառական», «Անիծած թիւնն հարսը», «Պօղոս-Պետրոս», «Փարւանա»:

Արանց մէջ կատարւում են զարմանալի կերպարանափոխութիւններ: Մարդիկ դառնում են թուչուններ: «Անբախտ վաճառականի» մէջ մէկը դառնում է չղջիկ, միւսը ճայ: «Անիծած հարսը» դառնում է յափող, Պօղոս և Պետրոսը փոքրիկ որբեր են, դառնում են թուչուն: Փարւանա թագաւորի աղջիկը և սիրահարը դառնում են թիւններ: Այս տեսակնիւթ մշակել է Փափազեանը իր մի պատկերի մէջ, ուր քրդերից սպանւած Սհակի կինը դառնում է թուչուն և շարունակ իր ամուսնու անունն է տալիս: «Սհակ, Սհակ»:

Այդպիսի աւանդութիւնները բացառապէս հայերին չեն յատուկ: Յունաց դիցաբանութիւնը ամ-

բողջապէս լի է այդպիսի առասպելներով, նոյնպէս և չոռմայեցոց: Օւկիսիս նազօնը, որ գրել է բազմաթիւ այդպիսի աւանդութիւններ, նրանց անւանում է մետամօրփօղ (կերպարանափոխութիւն): Օրինակ, Ապօլօնը Դափնի յաւերժահարսին դարձնում է դափնի ծառ: Պատանի նարգիսը ծաղիկ է դառնում:

Պարզ է ուրեմն, որ Թումանեանի գրի առած աւանդութիւնները ունեցել են հնագոյն ծագում, անդրապատմական ժամանակներում: Թումանեանը այս առասպելները դարձրել է գեղարւեստական գրւածքներ, ինչպէս Օւկիսուր:

Թումանեանի պօէմանների թագ ու պսակը, գլուխ-դործոցն է «Անուշը»: Գործողութեան վայըը հեղինակի հարենիքն է, Լուին իր բարձրաբերձ լեռներով, խորունկ ձորերով, կանաչ հովիտներով և անմատչելի առապարներով և մանաւանդ անուշահոս ծաղկունքով:

Ահա համառօտ բովանդակութիւնը: Մեր առաջ հանդէս են գալիս երկու սիրահարներ, մէկը միւսից գեղեցիկ: Սիրուն Անուշը կուժը ուսած՝ աղբիւր է գնում: Հանդիպում է Սարօնին, և տեղի է ունենում գաղտնի տեսակցութիւն: Աղջկայ ուշ վերադառնալը կասկած է զարթեցնում մօր սրտում: Գալիս է Համբարձման տօնը, և ջահիլ աղջիկները սարերում «ջանգիւլում» ասելով վիճակ են հանում: Խեղճ Անուշի վիճակը գուշակում է գժբաղդութիւն, որ և տեղի է ունենում շուտով: Գիւղում հարսանիք էր: Անուշի եղբայր Մօսին և Սարօն կպչում են իրար հետ: Ընդունւած սովորութեամբ, ընկերն ընկերին գետին չը պիտի զարկէր: Բայց Սարօն, Անուշի աչքերից դիւթած, զարկում է նրան գետին և վրան չոքում: Մօսին կատաղում է և վճռում է վրէժ առնել ճնա-

մարդ» ընկերից: Ամենից առաջ, նրա սիրտը դաղելու համար, ստիպում է իր քրոջը հրաժարւել սիրականից: Սարօն մի գեղեցիկ օր փախցնում է Վնուշին: Նախկին ընկերները դառնում են ոխերիմ թշնամիներ: Անուշը քիչ յետոյ վերադառնում է տուն: Այն միջոցին, երբ հայրը անիծում էր սեերես աղջկան, և հարեան կանալը անիծում էին և մրոտում, Մօսին իր որսի ետեղից էր ընկած: Վերջապէս, նա հանում է վրէժը և սիրտը հովացնում: Գնդակով սպանում է իր ոխերիմ թշնամուն: Սարօն սպանութեան գոյժը հասնում է դիւղին, և ջահէները խումբ խումբ դիմում են դէպի ձորը: Եւ ինչ են տեսնում — Սարօն ընկած է արեան լճակում: Ամեն տեղ բարձրանում է սուգ ու շիւան: Անուշն էլ հօ կենդանի մեռած էր: Նրա դառն արցունքներին, որ թափում էր սիրածի գերեզմանի վրա, նրա յուսահատ հառաչներին, որ լցնում էր ձորը, կարող էր վերջ աւալ միայն Դերեար: Անուշը իր հանգիստը գտնում է գետի յատակում:

«Անուշը» ներկայացնում է մի գեղարւեստական ամբողջութիւն: Գեղեցիկ է և իր մանրամասնութիւնների մէջ: Վերին աստիճանի վարպետութեամբ է նկարագրւած սիրահարների առաջին տեսութիւնը ձորում՝ աղբիւրի մօտ: Իսկ բնութիւնը սքանչելի է բանաստեղծի նկարագրութեան մէջ: Շատ յաջող է և համբարձման տօնի նկարագիրը և յիշեցնում է Պոօշեանի «Սօս և Վարդիթերի» մէջ դուրս բերւած տօնը: Պօէմայի գաղափարը կայանում է սիրոյ զօրութեան մէջ: Ի հարկէ, դա հին թեմա է: Բայց Թումանեանի տաղանդը երեսում է հէնց նրա մէջ, որ այդ գաղափարը գեղարւեստօրէն մարմնացնում է երկու չքնաղ հոգիների մէջ: Ժողովուրդը իս դուրս է բերւած շատ յաջող և օժտւած

հումօրը Գօդօլի հումօրը չէ, այլ կըում է զուտ
անձնական բնաւորութիւն։ Ուստի երկար կանգ առ-
նել նրա վրա չարժէ։

Դաւիթ

Այդ գրւածքի նիւթը վերցրւած է զիւցազներ-
կութիւնից։ «Դաւիթ և Մհերը» մեր ժողովրդի
ստեղծագործութեան ամենանշանաւոր արտադրու-
թիւնն է։ Նա պատկերացնում է իր մէջ ժողովրդի
գարաւոր կեանքը, նրա լաւագոյն իդէսները, մարմ-
նացած Դաւիթի անձնաւորութեան մէջ։ Մենք շատ
երախտապարտ ենք Սրբանձտեան վարդապետին, որ
ժողովրդի մէջ թագնւած այս գանձը լոյս աշխարհ
հանեց «Գրոց – Բրոցի» մէջ։ Պրօֆեսօր Ք. Պատկա-
նեանը իր ժամանակին թարգմանեց ուռւսերէն։ Այ-
նուհետեւ նրան հետևեցին և ուրիշ բանասէրներ։ Մ.
Արեգեանը տեսց «Դաւիթ և Մհերի» մի նոր վա-
րեանար, կցելով և նրա ուսումնասիրութիւնը։ Նա
այդ զիւցազներգութեան մէջ զտնում է ակնարկ-
ներ այս կամ այն պատմական անձի կամ անցքի
մասին և որոշում է նրանց ժամանակը։ Բայց, ի-
նարկէ, զրանք գեռ առաջին փորձեր են, և սխալն
ու ճշմարիտը խառնուում են իրար հետ։ Արեգեանից
յետոյ երեացել են նոր վարեանտներ (Գարեգին սար-
կաւագի, Խալաթեանի, Կանայեանի և այլն)։ Դրա
հետ միասին սկսեց վարեանտների համեմատական
ուսումնասիրութիւն։ (Արեգեան, Քանայեան, Լէօ և
այլն)։ Երբ է ստեղծւել, այդ ինչ երեկի հերոս էր
Դաւիթը, որ գարձաւ ժողովրդի իդէալը, աշուղնե-
րին ոգեսրող — այսպիսի և շատ ուրիշ հարցեր զբա-
զեցնում էին բանասէրներին։ Հում նիւթը կարօտ
է բանաստեղծների հետազոտութեան և մշակութեան։
Հաւանական է, որ «Դաւիթ և Մհերը» հասել է
մեզ ոչ իր նախնական ձևով, այլ փոփոխւած զանա-
զան ժամանակներում, որոնք իրանց դրոշմը դրել են

Մարտ է լեռնականի բոլոր առանձնայատկութիւններով։
«Մարօի» մէջ ներկայացւած է այն չարիքը,
որ առաջ է գալիս անչափահաս աղջկան հասակն ա-
ռած մարդու հետ պսակելուց։ Ներկայ դէպքում Մա-
րօն 9 տարեկան հասակում նշանւած է մի աժդահա
մարդու հետ։

Մաքո «Մաքօն» այնքան էլ յաջող չէ։ Մաքօն սարերի
չօբան է, հսկայահասակ, աւագակների սարսափը,
բայց չարքի երկիւղից սարսափում է։ Զէ որ եր-
կար տարիներ նա եղել է հովիւ և արդէն ընտելա-
ցած պիտի լինէր սար ու ձորի անվանու լինելուն։
Բացի այդ, «Մաքօն» ձգձգւած է։

**Դէպի ան-
հուն** «Դէպի անհունը» մի փիլիսոփայական խորհր-
դածութիւն է։ Առաջին տողերից արդէն երկում է,
որ Թումանեանը դուրս է եկել իր հարազատ միջա-
վայրից, որ նրա մուսան ճանապարհից շեղւել և ըն-
կել է մի անձանօթ և խորթ աշխարհ։ Բանաստեղ-
ծին կեանքը թւում է երազ և երազը կեանք։ Նրան
պաշարել են կեանքի և մահւուն խնդիրներ, նրա
միտքը ձգտում է գէպի անհունը, գէպի յաւիտենա-
կանը։ Անհունի մէջ նա պիտի ձուլւի իր սիրած
էակի հետ։ Անհունի մէջ չկայ մահ և անջատում,
այլ միայն սէր, անվերջ և անհատում սէր։ Ուտա-
նաւորը տոգորւած է բօմանափեական ողով և յիշե-
ցնում է ժուկօվսկու «Տօնք և Էշխինք» բանաստեղ-
ծնութիւնը։

Պօէտն ու «Պօէտն ու մուսան» պօէմայի վաս կողմը նրա
մուսան անձնական աստանն է։ Բանաստեղծը շարունակ զբաղ-
ւած է իր անձով։ Միենայն ժամանակ զբւածքը
պարսաւագրի տպաւորութիւն է գործում և կան
պարզ, թափանցիկ ակնարկներ այս կամ այն խմբա-
գրի վրա։ Թէև գրւածքը լի է հումօրով, բայց այդ

նրա վրա։ Ասում են, որ «Դաւիթ և Մհերը» ունի
40 վարեանտ։ Դա թերևս ժողովրդի սիրած վիպա-
կան թիւն է, բայց ցոյց է տալիս, որ ժողովրդի մէջ
եղել է մի ահագին էպօպէս՝ ցրւած զանազան գա-
ւառներում։ Այս դիւցազներգութիւնը ունի յունաց
հոչակաւոր էպօպէի գլխաւոր յատկութիւնները։ Ինչ-
պէս «Իլիականը» և «Ողիսականը» տարածւած են
եղել ժողովրդի մէջ առանձին երգերով և նրանց
հաւաքողը եղել է Պիոլիստրատ տիրաննը, նոյնպէս և
մեր վարեանաները եղել են մի էպօպէի առանձին
երգեր՝ ցիր ու ցան եղած զանազան տեղերում։ Կա-
րելի է թոյլ տալ և հակառակ կարծիք, այսինքն, որ
եղել են առանձին երգեր, բայց հաւաքող չէ եղել,
և նրանք հասել են մեզ աղճաւած ձեւվ։

Մեզնում մի քանի փորձեր են եղել հում նիւթը
մշակելու և դարձնելու մի նոր գեղարւեստական
գործ։ Այդպիսի փորձ արել է և Թումանեանը, նոյն-
պէս և տողերիս գրողը, միայն գրամատիկական ձե-
ւով։ Թումանեանի «Դաւիթ Սասունցին» արժանա-
պէս գնահատելու համար, հարկաւոր է համեմատել
նրա ձեռքի տակ ունեցած վարեանաների հետ։ Ո՞ր-
շափ հեղինակը հաւատարիմ է մնացել նիւթին, որ-
շափ շեղել է բնագրից, ի՞նչ է վերցրել վարեան-
տից և ի՞նչ ինքը ստեղծել։ Հետևել է արգեօք բնա-
գրին և ո՞լ չափով։ Թումանեանը, ըստ երեսյթին,
ցանկացել է ժողովրդի ձեռքով կառուցւած շէնքը
նորոգել և զարդարել պճրանքով։ Հեղինակը քայլ առ-
քայլ հետեւել է բնագրին նոյն իսկ մանրամասնու-
թիւնների մէջ, և հետեանքը եղել է այն, որ նրա
քերթւածը գրեթէ ազատ թարգմանութիւն է։

Ահա մի օրինակ.

Բ Ն Ա Գ Ի Ր Ա

Զէնով Յովան խաղաւ,
Դնաց գոմի տիւռ երաց,
Չեռ ետու վար սւտակ ձիու
քամկին.

Սւտակ ձին փոր ետու գետին,
Ասաց. սւտակ ձի, յիփ ձի կը
տանես,
Դաւթի կուռն խասցնես:
Զին ասաց. «Զուր խլիսուն»։

Թումանեանը

Էլաւ Օհան, գոմը մտաւ,
Զուրկեց ձերմակ ձիու մէջքին.
— Եյ, ձերմակ ձի, մինչ ե՞րբ,
ասա,
կը հասցնես ինձ Դաւթի կուբին։
— Մինչեւ լուսը կը հասցնեմ.
Ու ձին ալւաւ փորը գետին։
Կամ հետեւել հասւածը.

Որ դու կարաս քե վար իմ քամ-
կին բռնես,
Ոտդ թլես զանգուն,
Զուր մէկէլ ոտդ շուռ տաս, մէ-
կէլ զանգուն
Ես քեզ կը հասցնեմ Դաւթի կըու-
ւուն։

Թումանեանը

Եթէ ամուր մէջքիս նստես,
Ոտըդ դընես ասպանդակին

Մինչև մէկէլ ոսդ շուռ տաս,
Կը հասցընիմ Դաւթի կուին:

Պարզ է, որ Թումանեանի հասւածը զբեթէ
լոկ թարգմանութիւն է: Եւ այսպիսի հասւածներ
կարելի է բերել շատ:

Սրանով մենք չենք դատապարտում բանա-
տեղծին. նա իր նպատակին համում է: Սակայն
կան և հասւածներ, որոնց արժէքը շատ բարձր է.
օրինակ, Մորամելիքի ըմբշամարտը Դաւթի հետ:

Սա մի գեղարւեսատական նկարագրութիւն է,
կատարւած տաղանդով և բոլորովին ինքնուրոյն:
Այդ կոււը թէն կայ վարեանտի մէջ, բայց այնքան
ընդարձակ չէ և ոչ այնքան գեղեցիկ:

ԹՄԲԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

Պօէմայի հիմքում դրւած է մի պատմական տ-
ւանդութիւն, որ բանաստեղծը մշակել է և դարձրել
մի հոյակապ շենք: «Անուշից» յետոյ, «Թմբկաբերդը»
առաջին տեղն է բունում նրա ամբողջ պօէզիայի
մէջ: Բերդի և նազր շահի նկարագրը, նրա խրոխ-
տանքը, տիրունու գեղեցկութիւնը, նրա գլարթ, կեն-
սուրախ բնոյթը, նրա սքանչելի պարը — այդ բոլորը
դուրս է բերւած մէծ վարպետութեամբ: Նոյնպէս
յաջողւած են աշուղի երգը, Թաթուլ իշխանի քաջա-
գործութիւնները և խնջոյքը:

Անա համառօտ բովանդակութիւնը:

Նազիր շահը պաշարել է Թմբկաբերդը: Իմանա-
լով, որ բերդում կայ մի տիրունի սքանչելի գեղեց-
կութեամբ, նա ուղարկում է աշուղին դգեակը, որ-
պէս զի իր երգով գրաւէ տիրունուն դէպի շահը:

Բայց Թաթուլը կարող էր թոյլ տալ մի այդպիսի
յանդկնութիւն թշնամու կողմից: Ուստի իր զօրքով
յարձակւում է նազր շահի զօրքի վրա, ջարդում և
հալածում: Այդ յաղթութեան առիթով նա պատրաս-
տում է ճոխ խնջոյք և հրաւիրում իր բոլոր զօրք-
վարներին: Այնքան հարբում են, որ բոլորը քնում
են մեռելի պէս: Օգտելով այդ յարմար վայրկեա-
նից, Նազիր շահը զրոն է տալիս բերդի վրա. դոնե-
րը բացում են նրա առաջ, հայերի մէջ սկսում է
սարսափելի կոտորած: Բոլորը սպանում են, նոյն
իսկ ինքը Թաթուլ իշխանը: Գերի է ընկնում տի-
րունին: Երբ շահը հարցնում է, թէ ով է աւելի քաջ,
ինքը թէ Թաթուլը, տիրունին պատասխանում է, թէ
Թաթուլը աւելի քաջ է: Կատաղած շահը սարսափելի
վրէժ է առնում նրանից: Նրան ձգում են անդունդ
բարձր ժայռի գագաթից, և նահատակ տիրունին
դառնում է կերակուր գտամններին և անդգններին:

Թումանեանը զբաղել է և թարգմանութիւն-
ներով. օրինակ, նա թարգմանել է Բայրնի «Շիլիօնի
կալանաւորը», Լերմոնտովի «Մծիրի», Պուշկինի
«Ալեգը», «Ջրահեղձը», Նադոնի, Շիլկերի, Կալցօւի,
Ֆրդուսիի երկերը: «Շիլիօնի կալանաւորը», որ
թորգմանւած է ոռւսերէնից և համեմատւած բնագրի
հետ, չէ տալիս բնագրի ողին: Նոյնը կարելի է ա-
սել և «Մծիրիի» մասին: Սակայն շատ յաջող են
«Ալեգը երգը» և «Ջրահեղձը»:

Թումանեանը աւելի ուժեղ է վիպական բա-
նաստեղծութեան մէջ, քան քնարական: Նրա գլու-
ւածքների ամենամեծ մասը կազմում են այն եր-
կերը, որոնք վերաբերում են վիպական բանաստեղ-
ծութեան: Նրան յաջողւում է աւելի պատմել և նը-
կարագրել, քան թէ արտայայտել իր զգացումները:

Սակայն բացառութիւն է կազմում նրա մի բանաստեղծութիւնը, որ ունի և հիանալի եղանակ.

«Ինձ մի խնդրիք. ես չեմ երգիլ.

Շատ է ախուր իմ երգը.

Նորա ձայնից կը խորտակւի

Քնքոյշ սրտի բերկրանքը:

Ես երգեցի կէս գիշերին,

Եւ ասագերը իմ երգից

Գունաւեցին, դողողացին

Եւ թափւեցին երկնքից:

Ես երգեցի սարի վերա,

Եւ չորացան խոտ ու վարդ,

Անապատ է այնտեղ հիմա,

Խուլ, ամայի անապատ:

Հառաչանքից այրւած սարում

Էլ ծաղիկ չէ դալարում.

Բոյր ու գեփիւռ ես կուզէի

Եւ արշալոյս ոսկեվառ,

Որ մի պայծառ երգ հիւսէի

Եւ երգէի քեզ համար»:

Սա Թումանեանի քնարական բանաստեղծութեան գլուխ գործոցն է, երգւում է ամեն տեղ և մեծ հաճոյք է պատճառում:

Թումանեանի գրւածքները և նրանց բովանդակութիւնը պատւում են գլխաւորապէս նրա հայրենի բնութեան շուրջը: Լոսին իր բարձրաբերձ լեռներով, երկնահուպ գագաթներով, խոր ձորերը, ծաղկաբոյր հովիտները—այս բոլորը գտել է իր արժանի երգիչը յանձին Թումանեանի: Նոյնպէս և լեռնական ժողովուրդը իր առանձնայատկութիւններով, իր նիստ ու կացով, վարք ու բարքով, իր ուրսին լեզով՝ ամենայն հարազատութեամբ ցոլացել է նրա

բանաստեղծութիւնների մէջ: Նրա զրական լեզուն գեղեցիկ է, պատկերաւոր և յանգերով հարուստ: Ոճը ճոխ, տաղաչափական ձեւը սահուն: Իր տաղանդի շնորհիւ, Յովհաննէս Թումանեանը մեր զրականութեան պատմութեան մէջ զրաւել է պատւաւոր տեղ:

λεπτός παρθένος την οίκη της μετατρέπει σε ανθρώπινη γυναικεία σημασία. Τον πρώτο πόλεμο της Αθηναϊκής Δημοκρατίας με την Σπάρτη, η οποία είχε διατηρήσει την παραδοσιακή της κοινωνία, η οποία ήταν αρκετά διαφορετική από την αριστοκρατική αρχαία Αθηναϊκή κοινωνία, η οποία ήταν αρκετά διαφορετική από την αριστοκρατική αρχαία Αθηναϊκή κοινωνία.



σ u s n h p b y i

‘ԵՐԱ ԿԼԻԱՆԿՐ

Ալէքսանդր Ծասուրեանի մասին տեղեկութիւններ քաղել եմ նրա ինքնակենսագրութիւնից, որ տըպւած է «Բնտիր հատւածների» մէջ:

Ծատուրեանի ծըննդեան թւականը որոշ յայտնի չէ: Հաւանական է, ինչպէս նա ինքը ասում է, որ ծնւած լինի 1864 թ., իսկ նրա ծննդավայրն է Գա-

քաթալան։ Հայրը իր ընտանիքի օրւայ պարէնը հայթայթում էր ձկնորսութեամբ։ Երեք տարեկան՝ նազրկում է հօրից, որը թողնում է ընտանիքը անտէր և յետին չքաւորութեան մէջ։

«Մօրս հետ, զբում է Ծատուրեանը, ապրում էինք քաղաքի յետ ընկած, ամենախուլ փողոցներից մէջ կում, մի կիսախարխուլ տնակում։ Շաբաթը մի անգամ՝ միայն կրակի երես էինք տեսնում։ Ման էի դալիս ոտարոբիկ, տաք կերակուր միայն կիրակի օրերն էինք ուտում։ Միակ լուսաւոր շերտը իմ մանկական կեանքում մօրս անօրինակ, բուռն սէրն էր գէպի ինձ։ Մայրս կար ու լայք անելով էր ինձ պահում և ինքը՝ անզրագէտ լինելով, զարմանալի բընազդով ջերմ փափագում էր, որ ես անպատճառ ուսում ստանամ։ Սկզբնական ուսումը ստանում է մի կոյսի մօտ։ Այնուհետև մայրը նրան տալիս է ծխական գպրոցը, որ աւարտելուց յետոյ մանում է քաղաքային երեքդասեան գպրոցը։ Հազիւ երկու ամիս մնացած մինչեւ գպրոցն աւարտելլ, զրկում է նաև մօրից։ Մայրը հալ ու մաշ է լինում չարքաշ կեանքից, հիւծւած, քայքայւած ծայրայել աշխատանքից, անպէրջ հոգսերից և տառապանքներից։ Որդին մընում է միանգամայն որբ։

Մի կերպ աւարտելով քաղաքային գպրոցը, 1881 թ. գնում է Թիֆլիս ուսումն շարունակելու: Բայց այստեղ ևս նաև հալածում է չար բախտից: Երան չէ յաջողում մտնել ոչ Ուսուցչական ինստիտուտ, ոչ Ներսիսեան դպրոցը: Այստեղ ևս սկսւմ են քաղցածութեան օրեր: Ապրում էր 5 մանէթով, որ ամսէ ամիս ստանում էր Հայոց Բարեգործական ընկերութիւնից: Վերջապէս, մի կերպ յաջողում է մտնել Միքայէլեան արհեստաւորաց դպրոցը: Մակայն կրծ-

Քի թուլութեան պատճառով, բժշկի խորհրդով, ստիպւած էր թողնել դպրոցը։ Այնուհետև «հացի խնդիրն» նրան նետում է հիւսիսային խորքերը՝ Նիժնի-Նօւգօրոդի մօտ մի գիւղ։ Այնտեղից էլ Մոսկվա, ուր նա ավրում է մինչև օրս։ Երկու տարի առաջ կատարեց նրա 25-ամեայ գրական գործունէութեան յօբելեանը։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ

Մինչդեռ միւս բանաստեղծների գրական գէմքերը պարզ և որոշ են, Ծատուրեանի մասին չէ կարելի նոյնն ասել։ Նա չունի մի ուրոյն, զուտ Ծատուրեանական պօէզիա։ Նրա պօէզիայի մէջ ինչ որի խառնուրդ է նկատում։ Նա չունի մի ժանր, որի մէջ աւելի ուժեղ լինի։ Նա չունի մի առանձին պաշտամունքի առարկայ, ինչպէս օրինակ, Թումանեանի համար ոգեսրութեան գլխաւոր աղբիւրը մայրենի բնութիւնն է և ժողովուրդը, Խոահակեանի համար սէրը։ Նա հաւասարապէս երգում է և սէր, և վիշտ, և բնութիւն, և առաքեալ, և ազգ, և մարդկութիւն։ Նա զործ է ածում էլեգիա, ներբողական, երգիծաբանութիւն։

Ահա մի ոտանաւոր, որ բնորոշում է Ծատուրեանի պօէզեան։

«Ես պիտի երգեմ և ջատագովեմ
Անաշառ մարդկանց մեծաշուրջ գործեր.
Ես պիտի երգեմ և փառաբանեմ
Սիրոյ քաղցրութեան և կուսի պատկեր.
Ես պիտի երգեմ անկաշառ ձայնով
Սուրբ ճշմարտութիւն դրօշակը ձեռքիս։

Ես պիտի երգեմ, թէկուզ այս երգով
Հայածանք միայն վասակեմ անձիս։
Իսահակեանը այսպէս է բնորոշում իր պօէզիան։
Նա զարկում է սրտի լարերին, և նրանք կտրում են։ մնում է միայն սիրոյ լարը։

«Մենակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրոյ երգը շողաց
Կեանքիս անհուն ծալքերում»։

Սկսենք նախ այն ոտանաւորներից որոնց մէջ Ծատուրեանը յայտնում է իր կարծիքը բանաստեղծի կոչման մասին։

Երբ Ծատուրեանը դեռ ևս երիտասարդ էր և լաւ չէր ճանաչում աշխարհի չարն ու բարին և իրան երևակայում էր մի արծիւ, արհամարանքով էր վերաբերում գէպի խուժանը, ամբոխը։ «Ամբոխը» վերնագրով ոտանաւորի մէջ նա շանթեր է արձակում «կատաղի խուժանի» վրա, որին համարում է «չարանենգ ոսոխ», «կրքից կուրացած», որ հալածում է բանաստեղծին, պահանջելով, որ նա գրի ամբոխի համար։ Բայց բանաստեղծը նրան համարում է ստրուկ, թշւառ, խաւարասէր և բոնաւորների ոտքը լիզող։ Զգալով իր սիսալը, այժմ սկսում է խօսել ուրիշ լեզուվ։ 1898 թ. գրած մի ոտանաւորում առում է.

«Պօէտ, դու հպարտ, սէգ արծւի նման,
Բարձրից մի նայիր տգէտ ամբոխին
Եւ կծու լեզով մի ծաղրիր նորան,
Շանթեր մի թափիր խղճուկի գլխին։

* *

Ինչու է, ասա, ամբոխն յանցաւոր,
Որ խորթ են նորան քո հոգու ձայներ։

Բանաստեղծի
կոչում

Դու վարդ ես երգում, պօէտ բաղդաւոր,
Երբ նորա կեանքին պատած են փշեր»:

Սիրոյ երգեր Ծատուրեանի բանաստեղծութիւնները կարելի է բաժանել մի քանի սերեաների: Առաջին տեղը բրո-նում է սէրը: Այսուեղ կարելի է դանել բօմանտի-կական սէր լուսնկայ գիշերով և սիրոյ կորուստ («Երկու գիշեր»), մաքուր երջանիկ սէր («Նորա ալ-բօմում»), խարւած սէր («Երգ և մետաղ»): Ծատու-րեանը, հակառակ Յովհաննէսեանի, չէ նկարագրում կոյսի արտաքին կերպարանքը, այլ բաւականանում է անւանելով նրան «գեղեցիկ», «չքնաղ», «նազելի»: Սիրային ոտանաւորների մէջ ամենայաջողն է «Բըլ-բուլը», որի սիրուն եղանակը յօրինել է շնորհալի երաժշտագէտ Բաղդասարեանը:

Ոտանաւորը բերում ենք ամբողջովին.

«Մի լար, բլեմւ, քեզ մի տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ
Վարդդ սիրուն, վարդդ կարմիր
Թփից պոկեց ու տարաւ:

* *

Կանցնեն օրեր, կրդայ կրկին
Մի նոր գարուն վարդաբեր.
Կը մոռանաս գու վիշտդ հին,
Նորից կը երգես վարդի սէր:

* *

Բայց վայ կեանքի այն հէդ երգչին,
Որ վաղաժամ որբացած՝
Իր սիրելի խօսուն վարդին
Ցուրտ հողին է նա յանձնած:

* *

Երգչի համար գարուն չի գայ,
Ոչ նա նոր վարդ կըսիրէ.

Նա պէտք է լայ, պէտք է սգայ,
Մինչ յաւիտեան կը լոէ:»

Մի շարք ոտանաւորների մէջ Ծատուրեանը եր- Հայրե-
գում է հայրենիքը՝ «Միրելի ես՝ դու, նւիրական իմ՝ նիքի
քաղցր հայրենիք», «Սոխակին», «Մայսիսի մէկը», երգեր
«Էլ մի խնդրիր», «Տնը ձեռքդ, ընկեր» և այն: Այդ
տեսակ ոտանաւորների շարքում ամենայաջողն է
«Վերջին հրաժեշտը», որ սկսում է հետեւալ տո-
ղերով.

«Մնան բարեաւ, իմ՝ հայրենիք,
Իմ՝ մանկութեան օրօրան.

Քեզ պաշտել եմ ես վառ սրտով
Եւ կը պաշտեմ յաւիտեան:»

Մի շարք ոտանաւորների մօտիւնիքը կազմում Համա-
են բանաստեղծի համամարդկային խոհերը և գաղա- մարդկա-
փարները: «Ճշմարտութեան գաղափար» վերնագրով յին սէր
ոտանաւորի մէջ Ծատուրեանը յայտնում է, որ ին-
քը «զօրավիր է ճշմարտութեան», որի համար պատ-
րաստ է զոհել իր կեանքը: Նա չէ նախանձում հա-
րուստ մեծատուններին, այլ իր կեանքը դրել է
թշւառների պաշտպանութեան համար («Յապանա-
գիր»): Նա յորդորում է մարդկանց չը վհատել և
կեանքի խաչը տանել համարձակ («Կեանքի խաչը»):
Նրա իդէալն է մարդ-Աստւածը, որ՝ գրդւած անհուն
սիրուց գէտի մարդը և մարդկութիւնը՝ մեղքից փըր-
կելու համար, խաչ բարձրացաւ («Աստւած նահա-
տակ»): Նա վառաբանում է այնպիսի մարդկանց,
որոնք քարոզելով ճշմարտութիւն և անխնայ հարւա-
ծելով չար գործեր՝ ընկնում են կեանքի կուսում,
բայց մեռնելով՝ անմահանում են («Առաքեալ»):

«Խօսիր, առաքեալ վեհ ճշմարտութեան,
Քանի չեն վակւել քո սուրբ շրթունքներ

Անարգիր եսը գոռող մարդկութեան,
Հարւածիր անխնայ նորա չար գործեր»:
 Ներբող- Մի առանձին սերեա կազմում են այն ոտա-
կան գոր- նաւորները, որոնց մէջ բանաստեղծը յայտնում է
ծիչներին իր պատկառանքը գրական գործիչներին: Ռ. Պատ-
կանեանի մահւան առիթով զրում է մի ուղերձ
(«Անմոռաց երգ»), որի մէջ որոշում է նրա նշանա-
կութիւնը հայ գրականութեան մէջ: 1901 թ. 23
սեպտ. Նոր Նախիջեանի ս. Խաչ վաճքում՝ Գ. Քա-
թիպայի մահարձանի բացման հանդէսին Ծատու-
րեանը, իրեւ պատգամաւոր Մօսկայի հայ գաղութի
և ուսանողութեան կողմից, կարդաց. «Ուր ես, բըլ-
րուլ» բանաստեղծութիւնը: Ս. Շահազիզեանի եր-
կու յօբելեանների (1887 և 1892 թ.) առիթով զրեց
ներբողական «բանաստեղծ Ս. Շահազիզեանին», «Հայ
երգին»: Հայր Ղևոնդ Ալիշանի մահւան (1901 թ.)
առիթով զրեց «Ալիշանի մահը» վերնագրով ներբող:
 Բնութեան Միւս բանաստեղծների համան, Ծատուրեանը ևս
սէր սիրել է բնութիւնը, որին նւիրել է շատ ոտանաւոր-
ներ: Տարւայ բոլոր եղանակները գտել են իրանց նկա-
րագրով յանձին Ծատուրեանի: Նկարագրելով բնու-
թիւնը, նա միենայն ժամանակ տալիս է նրա գործած
տպաւորութիւնը: Այդպիսի ոտանաւորներ են՝ «Գա-
րուն», «10 ապրիլի», «Աշնան վերջը», «Զմեռային
գիշեր»: «Խըմի այլբօմում» վերնագրի տակ նկարա-
գրւած է Սև ծովը իր գանազան երևոյթներով: Բնու-
թիւնը յարուցանում է բանաստեղծի հոգում խոհեր և
խորհրդածութիւններ՝ («Առաջին համբոյր», «Գիշեր»):
Զմեռայ բուշը պատկերացնում է նրա առաջայն բոլոր
թշւառներին, որոնք մի տաք անկիւն չունին ցըտից
պատսպարւելու («Զմեռային գիշեր»): Գարնան բոլոր
պչրանքը՝ ծաղիկների բոյրը, սոխակների երգը միայն

մի վայրկեան են յափշտակում բանաստեղծին: Կեան-
քի հակապատկերը — բոնութիւն, կապանք՝ դառնաց-
նում են նրա սիրողը՝ («Բնութեան գրկում»): Յուղ-
ւած ծովը վշտացնում է նրան իր անտարբերու-
թեամբ («Ալեկոծ ծով»): Սոխակի երգը յիշեցնում
է նրան անցած երջանկութիւնը («Ելեզիա»): Եւ
այսպէս բնութեան ամեն մի երկոյթը ծնեցնում է
բանաստեղծի հոգում որ և է արամագրութիւն:

Նկարագրութեան մէջ Ծատուրեանը ցոյց չէ տա-
լիս այն հմտութիւնը, որ յատուկ է թումանեանին:
Նրա «Համերգը», որ բազկացած է ընդամենը երեք
տունից, ինքն ըստ ինքեան բնութեան մի սքանչելի
պատկեր է, որից տաղանդաւոր նկարիչը կարող է
ստեղծել մի հրաշալի անտառային պէյզաժ իր առւա-
կի խոխոջիւնով, ծառերի սոսափիւնով և քարաժայռի
մատախոհութեամբ: Ծատուրեանը շատ է ընկնում
մանրամասնութիւնների ետելից: Փոխանակ տալու
բնութեան էական գծերը, ինչպէս, օրինակ, «Աշնան
վերջը» ոտանաւորը: Սակայն չէ կարելի ժխտել, որ
երբեմն յաջողւում են բնութեան սիրուն նկարագրու-
թիւններ:

Ահա մի տուն «Գետակ» ոտանաւորից.
«Քիչ էլ լացիր, դետակ վճիտ, կարկաջուն,
Անկեանք ձմբան սառցէ կապանք կրելով,
Քիչ էլ սպա, և ուր որ է քեզ գարուն
Նոր կեանք կը տայ, քո լաց-սուզին վերջ
տալով»:

Բուն ժողովուրդը շատ չէ զբաղեցրել Ծատու-
րեանին: Մի քանի ոտանաւորներում նա յայտնում
է իր համակրանքը գէպի ժողովուրդը («Վաստակ»),
«Երկրի մշակներ»): Փորձեր է արել գրել և աշու-
ղական երգեր, բայց անյաջող: Նա հսահակեանի

հետեւող է: Ինչ որ վերջինիս մէջ բնական է և անկեղծ, Ծատուրեանի ոսանաւորի մէջ շինծու է և արհեստական:

Մի քանի ոսանաւորներից երեսում է, որ Ծատուրեանը ջերմեռանդ հաւատացող է: Երբ նա վհատում է, դիմում է Աստծուն և ծնկաչոք, արտասւալից մխիթարութիւն է աղերսում («Աղօթք»): Նայորդում է և ուրիշներին աղօթել, որովհետեւ հաւատում է աղօթքի զօրութեան (Աղօթիր).

«Աղօթքի մէջ, հաւատան ինձ, դու կը գտնես ցանկալի Անդորրութիւն, քաղցր հանգիստ յուղւած սրտի ու մտքի»:

Աքանչանալով բնութեան գեղեցկութիւններով, բանաստեղծը լցում է ջերմեռանդութեամբ և անհուն երախտիքով. փառաբանում է Արարչին, որ ստեղծել է տիեզերքը, օրհնում է կեանք և սէր, գարուն և վարդ, երկինք և ծով և լուսին (Բնութեան գրկում», «Առաջին համբոյր», «Գիշեր»):

1901թ. Ծատուրեանը հրատարակեց մի ժողովածու «Գրչի հանաքներ» վերնագրով, ժողովածու, որի մէջ տպւած էին մի շարք երգիծական ոտանաւորներ: Այսուղ հեղինակը ծաղրում է զանազան արատներ՝ խմբագիրների կրքոտութիւնը, իդէալիստներին, տգէտ քահանային, սուտ ազգասէրին, մամոնայի երկրագուներին, պճնասէր կանանց, անհաշտ ամուսիններին, հասարակական գործիչներին և այն:

Բերում ենք մի նմուշ այդ ժողովածուից, որի վերնագրին է «Ժողով»:

«Հաւաքւել էինք բազմաթիւ հայեր Մի շատ կարևոր, մեծ գործի համար: Ժողովում կիրքը մեզ նախագահ էր,

Ուշունցը հոետօր, սիր քարտուղար: Եւ ակնթարթում մենք իրար անցանք, Տեղ տւինք նոյն իսկ տուր ու դմիոցին: Վերջն էլ ժողովը թողինք, հեռացանք, Մազի չափ մի շահ չը բերած գործին. Միայն դուրս գալիս՝ դուան մօտ անձայն Տեսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած. Որդարութիւնն էր այդ հալածական, Որին նախագահն ժողով չէր թողած.

Մի ուրիշ երգիծաբանութեան մէջ դուրս է բերւած մի իդէալիստ, որը, երբ ուսանող էր համալսարանում, ասում էր. առանց իդէալի կեանքն է անապատ, մարդը խղճալի. բայց երբ մտնում է կեանքի դպրոցը, դաւաճանում է իդէալին և կսոջ փողով հարստանում:

Ծատուրեանը յայսնի է իր թարգմանութիւններով ուսւաց և եւրոպական հեղինակներից: Սխալ կարծիք է կազմել Ծատուրեանի մասին, որ նա իրը լաւ թարգմանիչ է, այն ինչ նա աւելի շնորհալի է իր ինքնուրոյն զրւածքների մէջ: Մեր կարծիքով, արժէ թարգմանել միայն բնագրից, իսկ ոռւսերէնից կատարւած թարգմանութիւնը կորցնում է իր արժեքը, որովհետեւ ոռւս թարգմանիչները սովորաբար շեղում են բնագրից, ինչպէս անում էր նոյն իսկ տաղանդաւոր ժուկովսկին: Բայց նա զոնէ պահպանում էր բնագրի ոգին: Նոյն իսկ ոռւսերէնից կատարւած թարգմանութիւնները այնքան էլ յաջող չեն, մի քանիսը մինչև անգամ վատ: Դա առաջ է դպիս մասամբ նրանից, որ Ծատուրեանը երբեմն սխալ է հասկանում այս կամ այն բառը: Օրինակ, Պուշկինի «Մարգարէ» վերնագրով բանաստեղծութեան մէջ «горній ангеловъ полетъ» թարգմանել է «հրեշ-

տակների թոփչքը լեռներում», մինչդեռ «горній», «нշանակում է «եթերային», «վերին»: Ծատուրեանի բանաստեղծութիւնների մէջ չէ պահպանում բնագրի ողին: Բաւական է համեմատել Լերմօնտովի «Աղօթքը» (Молитва) հայերէնի հետ.

„Въ минуту жизни трудную
Тѣснится ль въ сердцѣ грусть.
Одну молитву чудную
Твержу я наизусть..”

Հայերէնը՝


«Կեանիքս դժւար, ծանր բոպէին
Թէ լուռ թախիծն է ճնշում իմ հոգին,
Ես ազօթում եմ միայն սրբազն,
Աքանչելի աղօթք մըմնջում բերան»:

Այսեղ աւելորդ են՝ «ծանր», «լուռ», «սրբազն», «սքանչելի», և անհրաժեշտ է աւելացնել «մըմնջում» բառից յետոյ «է»: Բայց դա մի վանկ աւելացնում է և ոտանաւորը խանգալուուժ, ուստի հեղինակը մեղմնչում է քերականութեան կանոնի դէմ ազատելու համար «է» տառից: Մինչդեռ Լերմօնտովի բանաստեղծութիւնը ամբողջապէս լսոր, անկեղծ զգացմունք է և թեթեասահ, առևի լսոխոջը: Ծատուրեանի թարգմանութիւնը ծանր է քարի պէս, շնչու, արւեստական և տգեղ: Նրա մէջ չկայ ոռւս բանաստեղծի «Աղօթքի» նշոյին անգամ:

Յաջող թարգմանութիւններ շատ սակաւ են: Յաջողներից մէկն է, օրինակ, Լերմօնտովի «Ժայռը»: Ծատուրեանի թարգմանութիւններից պէտք է յիշել Տուրգենևի «Արձակը բանաստեղծութիւնները»: Ծատուրեանը վերջերս հրատարակել է իր թարգմանութիւնները երկու հատորով, որոնց մէջ մանում են ոռւսաց բանաստեղծների ոտանաւորներից շատերը:

Ծատուրեանը պատկանում է այն վարդապետութեան, որի լօղունգն է «գեղարւեսակեանքի համար»: նուր համաստեղծական մօտիւների կողմից նա բազմակողմանի է, որովհետեւ իր գրւածքների մէջ շօշափում է բազմաթիւ խնդիրներ: թէ և Ծատուրեանը աչքի ընկնող տաղմաղներից չէ, բայց և այնպէս մի որոշ հետք թողել է ետնից:

Նրա շատ ոտանաւորները մտել են դասագրքերի մէջ, և բազմաթիւ աշակերտներ անգիր գիտեն: Իսկ «Բլբուլը» սքանչելի է թէ իր բովանդակութեամբ թէ եղանակով և ամեն տեղ երգւում է և հաճութեամբ լսւում: Ինչպէս պէտք է եպրակացնել իմ վերոյիշեալ կարծիքներից, Ծատուրեանը աւելի մեծ ձիրք է ցոյց տալիս ինքնուրոյն բանաստեղծութիւնների մէջ, քան թէ թարգմանական: Ես չեմ ժխտում նրա թարգմանած բազմաթիւ բանաստեղծութիւնների նշանակութիւնը: Նրա շնորհիւ է, որ ոռւսաց և եւրօպական հեղինակների հետ քիչ թէ շատ ծանօթացել են այն տեսակ ընթերցողներ, որոնք օտար լեզուներ չդիտեն: Ծատուրեանի լեզուն և ոճը գեղեցիկ են, ոտանաւորը սահուն,



Ս Ս Ո Ւ Ե Լ Ե Ա Ն

Խմ կեանքը եւ զբական գործունէովինը

Ես ծնւել եմ 1864 թ. դեկտ. 3 (մօրս ասելով՝ նոյեմբ. 22) Ներքին Ազուլիսում։ Իմ հայրը, Գէորգ, պարապում էր վաճառականութեամբ։ Գիւղի հարուստներից մէկն էր։ Կազմւածքով առողջ և ուժեղ մարդ էր։ Թէև առանձին ուսում չուներ, բայց գրագէտ էր։ ստանում էր ժամանակակից պարբերական թերթերը։ «Հիւափափայլ», «Կոռնկ» և այլն։

Սկզբնական ուսում ստացայ գիւղի դպրոցում,

Աստւածատուք Տէր-Աստւածատուքեանի (այժմ քահանայ) և Եփրեմ Թաւթեանի մօտ։ Առաջինը աւանդում էր հայերէն, երկրորդը՝ ուսուերէն։ Հայերէնից անցնում էին ժամագիրք, սաղմոս, հին կտակարան, Զամշեանի քերականութիւն, որից ոչինչ չէինք հասկանում։ Հայրս դժգոհ այդպիսի խղճակի ուսումով, ինձ ուղարկեց վերին Ազուլիս, որտեղ ուսումնարանը բարեկարգ գրութեան մէջ էր։ Բաւական է տաել, որ այն ժամանակ ուսուցիչների թւում կար և Ռաֆֆին և, բացի հայերէնից և ոսուերէնից, անցնում էին նաև ֆրանսերէն։ Ես ապրում էի մեր մօտ ազգականների տանը (Հայրապետ Քալանթարեան)։ Երկու տարի մնացի ուսումնարանում, յետոյ վերադարձայ ծննդափայրս։ Այնուհետև մի քանի տարի դարձեալ նւիրուցի մանկական անմեղ խաղերին և զւարճութիւններին։ Ես բոլորովին անկախ, ազատ էի, թուշունի պէս, թրվում էի բնութեան ծացում։ Հայրս առետրական գործերով գնում էր Պարսկաստան, Անդրկովկասի զանազան քաղաքները, Մօսկով, իսկ մայրս՝ զբագւած լինելով տնային գործերով։ Ժամանակ չուներ ինձ վրա հսկելու։ Դա տւելի լաւ էր։ ապաստութիւնը բնութեան, գրկում իմ մէջ զարգացրեց ինքնուրոյնութիւն։ Ես իրնէ աշխոյժ, ուրախ, գւարթ, չարաձճի մանուկ էի։ Լաւ լողացող էի, սիրում էի ճի նստել։

Սակայն, մի գժբախտ դէպքի պատճառով, իմ մէջ տեղի ունեցաւ յեղաշրջում։ Նախկին ուրախ մանուկը դարձաւ անձանաչելի։ Այժմ նա մոռյը, տխուր էր, մելամաղձոտ և սակաւախօս։ Դրա պատճառը հետեւեալն էր։ Մեր տանը մկրտութիւն կար։ Վերին Ազուլիսից մեզ մօտ եկել էին մի քանի հիւրեր։ Ես նստեցի նրանցից մէկի ձին, մի քիչ տեղ ան-

ցայ, նորից յետ եկայ: Զիու տիրոջ ծառան, որ հարբած էր, ինձ ուզեց վեր բերել, բայց նա հաղիւ իրան պահում էր, և ես, փոխանակ նրա գիրկն ընկնելու, ընկայ մեր դարպասի առաջ եղած սալաքարի վրա աջ երեսով: Ինձ արիւնլւայ և ուշաթափ տանում են սենեակ և պառկեցնում: Կամաց կամաց վերքը լաւանում է, և ծնողներս միամտում են: Բայց նրանք չգիտէին, որ երեսի արտաքինը լաւանալը խաբուսիկ է: Ներսից ջարդւած ոսկոռը կամաց կամաց իր գործը տեսնում էր: Ծնողներս շուտով նկատում են, որ իմ այտը հետզհետէ մեծանում է, և վերջիվերջոյ այնքան մեծացաւ, որ աչքու համարեա խուփ եկաւ: Ոսկոռի աճումը կարող էր անյնել դէպի գլխիս ոսկոռը. այն ժամանակ կեանքս վտանգի մէջ կրինէր: Հայրս շտապեց ուղարկել ինձ մօրս հետ Թիֆլիս: Այնտեղ բժիշկների խորհուրդը վճռեց ապերացիա անել, որ և աեղի ունեցաւ: Խօրօֆօրմը բոլորովին անզօր էր: Մի ամբողջ ժամ կրում էի գժոխային տանջանքներ, որովհետեւ երեսիս վրա դարկւում էր մուրճը, և ոսկոռը կտոր կտոր հանւում: Ապերացիայից յետոյ մինչև գիշեր ես անզգայ դրութեան մէջ եմ մնացել: Չորս ամիս ոլառկած մնալուց յետոյ, երբ վերքը բոլորովին լաւացաւ, մօրս հետ վերապարձանք հայրենիք: Ամբան վերջում հայրս ինձ ուզարկեց Թիֆլիս ուսումն շարունակելու:

9 ամիս պատրաստեցի գիմնազիայի բարձր գասարանի աշակերտի մօտ և օգոստոսի վերջում քննութիւն տւի Տէր-Յակոբեանի պանսիօնում և ընդունեցի կասիկական բաժնի լ դասարանը: Այնտեղ ես գիշերօթիկ էի: Այն գիմնազիստը, որ ինձ 9 ամսում պատրաստեց, նոյն իսկ լատիներէնից,

լ դասատան համար, այժմ Թիֆլիսի յայտնի բըժիշկ կ. Ստեփանեանն է:

Երկու տարուց յետոյ ես քննութիւն տւի և գիմնազիայում և ընդունեցի IV դասարանը: Աւարտեցի գիմնազիան 1886 թ. լաւ վկայականով, որի շնորհիւ ես արժանացայ կովկասեան ստիպենդիայի, որով ապրում և ուսանում էի Մօսկովյայում:

Ես մտայ պատմական-լեզւագիտական ֆակուլտեալ և լուսմ էի այն ժամանակւայ յայտնի պրօֆեսորների դասախոսութիւնները՝ Ստորօժենիօ, Ալէքսէյ Վեսելուսկի, Կիւչէնակի և այլն: Համալսարանն աւարտեցի 1889 թ., բայց, հիւանդութեան պատճառով, պետական քննութիւններս տւի 1890 թ. աշնան: Վերադարձայ Թիֆլիս հոկտեմբերին:

Մեր ընտանիքը Ազուլիսից տեղափոխւել էր Թիֆլիս: Հայրս մի քանի տարի առաջ վախճանւել էր: Մայրս վերցնում է որդոց և բերում է քաղաք ուսումնական տալու: Երբ եկայ, արդէն անցել էր մօտ 2 ամիս, ուստի տեղ գտնելլը գժւար էր: Բարեբախտաբար, ես գտայ մի քանի դասեր, որի շնորհիւ մեր ընտանիքի գրութիւնը լաւացաւ:

Հետեւ տարւայ սեպտեմբերից ես ուսուցիչ էի Գէորգեան ճեմարանում, ուր աւանդում էի ուսուսաց լեզու և գրականութեան պատմութիւն դասարաններում, իսկ լսարաններում դասախոսում էի ընդհանուր գրականութեան պատմութիւն:

Ճեմարանում մնացի երեք տարի: Դա ճեմարանի լաւագոյն շրջաններից մէկն էր, որովհետեւ դանուում էր տեղակալ Երեմիա արքեպիսկոպոսի և Քեկտօր Սեղբակեան եպիսկոպոսի աշալուրջ հսկողութեան տակ: Բացի այդ, ուսուցչական խումբը կազմւած էր նորաւարտ, երիտասարդ ոյժերից, որոնք ե-

ուանդով աշխատում էին։ Միևնույն ժամանակ աշակերտութեան և ուսուցիչների մէջ ընկերական յարաբերութիւններ էին և փոխադարձ սէր ու յարդանք։

Դժբախտաբար, երկար չտևեց ուսուցչական կազմի օգտաւէտ գործունէութիւնը։ Երբ նորընտիր Մկրտիչ կաթողիկոսը եկաւ էջմիածին, յայտաբարեց, որ ուսումնական տարւայ մէրջում տեսչից սկսած մինչեւ վերջին պաշտօնեան՝ ազատ կլինեն։ Այդպէս էլ եղաւ։ Նախկին ուսուցիչներից մնացին միայն մի քանիսը։ Հետեւալ ուսումնական տարւայ համար տեսուչ ընարեց կ. Կոստանեանը, որ նոր ուսուցիչներ հրաւիրեց։

Ես իմ ընտանիքով ամբողջ ամառը անցեկաց ըինք Վաղարշապատում։ Այդ ժամանակ էլ տմունացայ տեղական դպրոցի վարժուհու հետ։ Ինձ հրաւիրում էին աւագ ուսուցչութեան համար Վերին Սպուլիս, իսկ Շուշայ թեմական դպրոցի տեսուչ պ. Լ. Մարգսեանը հրաւիրում էր Շուշի։ Ես ընտրեցի Շուշին, չնայած, որ ինձ յայտնի էր, թէ ինչ լարւած դրութեան մէջ էին գտնւում, մի կողմից՝ տեսուչը ուսուցչական խմբի և հոգաբարձութեան հետ միացած, միւս կողմից՝ առաջնորդ եղ։ Այդպեանը դուրս արւած եօթ աշակերաների ծնողների և նրանց բարեկամների հետ միացած։ Բոլոր խնդիրը նրանումն էր, որ մանկավարժական ժողովի վճռով հեռացւած էին 7 վատ վարքի տէր և թոյլ աշակերտներ, իսկ առաջնորդը պահանջում էր նորից ընդունել։ Երկու կողմից էլ դիմում էին կաթողիկոսին։ Հարցը դեռ լուծւած չէր։ Ես, իբրև դեռ ևս անծանօթ հայոց դպրոցների մէջ տիրող կարգ ու կանոնին, անփոր-

ձութեան շնորհիւ, ընդունեցի պ. Լ. Մարգսեանի առաջարկը։

Ամբողջ ընտանիքով գնացինք Շուշի և մի կերպ տեղաւորւթիւնը։ Մի ամսից աւելի ժամանակ անցաւ բանակցութիւնների մէջ։ Երկու կողմն էլ յամառում էին։ Երբ առաջնորդը կոնդակ ձեռք բերեց որոշ լիազօրութեամբ, սաեղծւեց անել դրութիւն։ Ուրիշ բան չէր մնում, եթէ ոչ հրաժարւել ամբողջ կազմով տեսչի հետ միասին։ Ես, թէ և ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել երկարատև պայքարի մէջ, չուզեցի բացառութիւն կազմել։ Ես ևս հրաժարւեցի։ Հազիւ էինք դժւար ճանապարհորդութիւնից մի փոքր հանգստացել, ահա նոր հոգսեր, նոր չարչարանք։ Աշնան ցրտերին մենք ստիպւած էինք ահազին պօստի ճանապարհ կարել, բաւական տեղ էլ գնացքով անցնել, մինչեւ կհասնէինք Թիֆլիս։ Ընտանիքիս բաղկից, շատ շուտով վեց դաս ազատւեց Ներսիսեան դպրոցում, որ ինձ յանձնեցին։ Թիշ յետոյ ինձ տւին այնքան դաս, որ մեզ համար հնարաւոր եղաւ համեստ ապրել։ Երրորդ տարին էր, որ ես պաշտօնավարում էի Ներսիսեան դպրոցում, երբ եկաւ առաջադրութիւն հեռացնել ինձ դպրոցից։ Ես ինձ զգում էի բոլորովին անմեղ։ Բայց ոչինչ չէր կարելի անել։ Մարտին, ամենավատ ժամանակ, ես այլևս ուսուցիչ չէի։

1897 թ. աշնան ինձ հրաւիրեցին Բագու, որտեղ ինձ նշանակեցին Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարանի կառավարիչ՝ գրադարանապետ՝ բաւարար ոռմիկով։ Բացի այդ, ես ունեի գուսեր հարուստ աներում և ստանում էի առատ վարձատրութիւն, այնպէս որ մեր ընտանիքի դրութիւնը գգալի կերպով բարւոքւեց։ Գրադարանում ես պաշտօնավարում էի

1898 թւականից մինչև 1903 թ., երբ պարապետում տեղի ունեցած խառնակութեան պատճառով, մի առժամանակ փակւեց:

Այսուհետեւ ես պարապում էի դարձեալ դասերով և արական գիմնազիայում եղած հանրակրթական կուրսերում աւանդում էի ուսուաց և լատիներէն լեզու:

1905 թւականին թուրք-հայկական կոտորածից յետոյ գնացինք Ղարաքլիսա և այնտեղ մնացինք ամբողջ ամառը: Օգոստոսին ինձ հրաւիրեցին Ալեքսանդրապոլի Առևտրական գլուխ ուսուցչի պաշտօնով, որտեղ աւանդում էի ուսուաց և հայոց գրականութեան պատմութիւն և ընդհանուր պատմութիւն, իսկ վերջին տարին նոյնպէս ուսուաց պատմութիւն:

Այժմ կը խօսեմ իմ գրական գործունէութեան մասին:

Բանաստեղծութեան սէրը իմ մէջ ծագել է 10-12 տարեկան հասակումս: Առաջին երգը, որ երգել եմ «Հայրենիք սրբազնն» էր և Ալամդարեանի «Գորունը» («Յամսավերջն ապրիլի»): Հարանիքներում զուռնաչիները նւազում էին նոյն հեղինակի «Յերկուձեռին երկու մոմ»: Այդ երկու երգերն էլ տպւած էին «Քնար հայկական» վերնագրով երգարանի մէջ: Դա առաջին գիրքն է, որ ես սիրով կարդում էի: Համբարձման տօներին, երբ մեզ մօտ հաւաքւում էին աղջկերք և վիճակ հանում, ես էի կարդում «Ճանդիւլումը»: Բացի այդ, մեր տանը, ինչպէս վերև առացի, կային «Հիւսիսափայլի» համարները: Մէկի մէջ տպւած էր «Խիլիպպոս II» ողբերգութիւնը: Դօն Կարլոսի մենախօսութիւնը անգիր գիտէի և սիրում էի արտասահել զգացմունքով և շեշտով:

Թատրոնի սէրը ծնունդ առաւ իմ մէջ դարձեալ

իմ հայրենիքում: Աւսուցիչները երբեմն տալիս էին ներկայացումներ: Մի ներկայացման ինձ տարան թատրոն, որի բեմը շինել էին մի մասնաւոր տան: Ես յիշում եմ միայն մի տեսարան, որ մեծ ապաւորութիւն գործեց ինձ վրա: Դա Արաքսն էր, որի ափերում էին ծառեր: Պիեսը Գ. Բարխուդարեանի ողբերգութիւնն էր «Մէր կամ մահ» վերնագրով: Աղուլիսում ներկայացրել են և «Շուշանիկ»: Սատանայի մի կարմիր զգեստ ընկել էր իմ ընկերներից մէկի ձեռքը: Մենք մի ներկայացում տվինք, որի մէջ մեզնից մէկը դուրս եկաւ բեմ՝ (տախտերից շինուած) սատանայի զգեստով և սկսեց ծամածութիւններ անել, մկմկալ, ծւծւալ, որ մեծ զւարճութիւնն էր պատճառում մանուկներին: Ես ինքս մեր տանը սարքում էի բեմ և ընկերներիս հետ ներկայացում տալիս: Մի անգամ ներկայացրինք «Մէր կամ մահ», բայց միայն մի տեսարան: Այսուհետեւ մեր ծննդավայրում սովորութիւն դարձաւ ներկայացում տալը, բայց ոչ մանկական: Երբ ամառը հաւաքւում էինք Թիֆլիսում սովորող ընկերներս, ամեն ամառ տալիս էինք մի կամ երկու ներկայացում: Մի ամառ էլ ներկայացրինք «Բոնի ամուսնութիւն»:

Դրամատիկական բանաստեղծութեան սէրը աւելի զարգացաւ իմ մէջ մի դէպքի պատճառով: Իմ մեծ եղբայրը, որ ուսումն աւարտելուց յետոյ, եկել էր Թիֆլիս, ինձ պատմեց «Լիր թագաւորի» բովանդակութիւնը, որ մեծ ազգեցութիւն գործեց ինձ վրա: Չորրորդ գասարանի գիմնազիստ էի: Պատմութիւնը լսելուց յետոյ՝ իսկոյն գնացի զրադարանից վերցրի Շէքսպիրի այն հատորը, որի մէջ կար նաև «Լիր թագաւորը»: Ես մեծ յափշտակութեամբ կարդացի և այսուհետեւ սկսեցի մէկը միւսից կարդալ Շէքս-

պիրի բոլոր արագէդեաները և կօմեղեաները։ Կարդում էի միհնոյն ժամանակ նաև Շէքսպիրի մասին եղած քննադատութիւնները, այնպէս որ վերջ իւլերջոյ ևս գերազանց ծանօթացայ անզլիական հանճարի տրագէդիաների բովանդակութեան, հերոսների և գաղափարների հետ։ Շէքսպիրը դարձաւ իմ պաշտելի կուռքը։ Նրանից աւելի մեծ բանաստեղծ—դրամատուրգ չկար ինձ համար, ինչպէս և այժմ մնում եմ նոյն կարծիքին, մանաւանդ երբ կարգացի Տօլստոյի հեղնական, մանրակրկիտ, կրքոտ քննադատութիւնը։

Շէքսպիրի գօրեղ ագդեցութիւնը անզբագարձաւ իմ առաջին փորձերի վրա։ Ես՝ լի ոգեսրութեամբ և եռանգով՝ սկսեցի զրել սղբերգութիւններ Շէքսպիրի հետևողութեամբ։ Հինգ գործողութիւն բազմաթիւ պատկերներով, արիւնայեղ տեսարաններ, անյանդ ուսանաւոր—այս բոլորը իմ իդէալական դրամատուրգի դրոշն էր կրում իր վրա։ Գիտագիտում՝ XIV դասարանից սկսած՝ ես զրեցի մի շարք այդպիսի դրամաներ՝ «Մարդասեաց», «Հայրասպան», «Իդէալներ և իրականութիւն», «Արտաւագութ» և այլն։ Այդ փորձերի շարքում ամենից յաջողն էր «Տիգրանուհին», որ ես մի քանի անզամ մշակել եմ նաև ուսանողական տարիներում։ Այդ ողբերգութիւնը տպւեց «Մուրճի» 1891 թ. համարներում։

Իմ զրական գործունէութեան ամբողջ ընթացքում իմ մէջ գերակշռել է զրամանութեան թւականներին ես զրում էի բանաստեղծութիւններ, վէտ («Խորասկւած կեանք»), պատմւածք («Չալարիների արշաւանքը»), քննադատութիւններ, բեցենդիաներ և այլն։ Բայց նոյն այդ թւականներին էր, որ ես տւի «Դիագորաս Մելոսացին» (այժմ «Փոթորիկ»),

«Գալիլէյ և Միլտոն», «Սողոմոնի աղբիւրը», իսկ հետևեալ դարի սկզբումն՝ «Դէպի վեր» և «Դաւիթ Սասունցին» դրամատիկական ձեռվ։

Իսկական դրամաներ ես սկսեցի գրել XX դ. առաջին տասնամեակում։

1900 թ. լոյս տեսաւ «Դօկտօր Բօշայեան», որ առաջին անգամներկայացրւեց Աստրախանում։ Դրան հետևեց «Նէարիչ Թաշճեանը», որ առաջին անգամներ կայացրւեց Բագւում, յետոյ «Վերածնւածը» Ալեքսանդրապում, «Դէպի վերը» Բագւում, վերջապէս «Մագդան» Բագւում։


Այդ բոլոր դրամաների նիւթը ինձ տւել է Բագում, իր ուրոյն կեանքով և արտակարգ դէպքերով։

Իմ զրական գործունէութեան հետևեալ շրջանի վայրը Ալեքսանդրապոլին է։ Առաջին տարիներում ես գրում էի բազմաթիւ նոր բանաստեղծութիւններ, որոնց ժողովածուն լոյս տեսաւ 1907 թ. Այսաեղ մըտել են, բացի նոր բանաստեղծութիւններից, նաև այնպիսինները, որոնք թէկ գրւած են վաղուց, բայց չէին մտել առաջին հատորի մէջ (1899 թ.), օրինակ, «Միրաժ», «Անիի աւերակների վրա», «Գողթան երգիչներին»։ և այլն։ Նոր հատորի մէջ զետեղւած էին նաև թարգմանութիւններ, որոնք կատարւած էին Ալեքսանդրապում։ Շիլերի բալլագները՝ «Իբիկոսի կուռնկները», «Երաշլայք», «Լուղորդ», Պուշկինի «Մարգարէն», Գէօթէի, Հայնէի, Լօնգֆելտօի բանաստեղծութիւնները և Տեննիսօնի պօէման «Գոգիւա» վերնագրով։ Այսաեղ մտել է և «Փոթորիկը» (նախկին «Դիագորաս Մելոսացին»)։

Ալեքսանդրապում նոյնպէս զրեցի ամենախոշոր աշխատութիւնս՝ «Մուսահայ զրականութեան

պատմութիւն»։ Դրա նիւթերը մեծ մասամբ հաւաքել էի Բագւում, երբ Հայոց Մարդասիրական ընկերութեան գրադարան – ընթերցարանի գրադարանապետի պաշտօն էի վարում։ Իմ տրամադրութեան տակ կային հագւագիւտ լրագիրներ, գրքեր, որոնց թերթերով զրի էի առնում հարկաւոր նիւթերը։ Այդ նիւթերը ես կարգի բերեցի Ալեքսանդրապոլում, այստեղ էլ սկսեցի զրել։ Պակասող նիւթերի համար ես յատկապես էջմիածին եմ գնացել, քրքրել ճեմարանի և էջմիածնի մայր գրադարանը։ Ահագին դժւարութեամբ ես գտայ Պօլսի «Մեղւի» այն համարը, որտեղ ապւած էր Նալբանդեանի իմաստալից յօդւածը ազգային թատրոնի մասին, որ նա զրել էր Պօլսում եղած ժամանակ մի ներկայացման առիթով։ Այդ նպատակով ես գիմել եմ նաև կ. Կոստանեանին և ուրիշներին։ «Թուսահայ գրականութեան պատմութիւնը» սկսեցի լոյս ընծայել սրակներով։ Առաջին որակը լոյս տեսաւ 1909 թ., երկրորդը 1910 թ. երրորդը 1911 թ.

«Թուսահայ գրականութեան պատմութիւնը, իբրև դասագիրք, հաստատւած է Կովկասեան ուսումնական շրջանի պարոն հոգաբարձուից և ընդունւած է շատ միջնակարգ դպրոցներում՝ թէ ոռւսաց և թէ հայոց։



Իշխան Ակելյան *)

Նրա կեսներ

Աւետիք Խսահակեանը ծնվել է 1875 թ. հոկտ. 18 Ալեքսանդրապոլում։ Սկզբնական ուսումն ստացաւ ծիսական դպրոցում, յետոյ Գեորգեան ճեմարանում։ 1891 թ. աշակերտական անկարգութիւնների պատճառով, ստիպւած էր հեռանալ ճեմարանից։ Այսուհետեւ նա զնում է Վիեննա, ուր սովորում է գեր-

*) Օգտւում եմ Թոփչեանի գրած կենսագրութիւնից՝ որ տպւած է «Բնտիք հատւածների» մէջ։

մաներէն և լսում մարդաբանական դասախոսութիւններ. միաժամանակ աշխատում էր մարդաբանական մուլէօնում: Յետոյ լսում էր դասախոսութիւններ մարդաբանութեան և ազգագրութեան մասին Աչյաղցիդի համալսարանում:

1896 թ. Իսահակեանը վերադարձաւ հայրենիք: Այստեղ նա կրում է մի շարք ձախորդութիւններ և ստանում է նեարդային հիւանդութիւն: 1900 թ. նա նորից գնում է արտասահման գրականութիւն ուսումնասիրելու նպատակով. բայց հիւանդութեան պատճառով վերադառնում է հայրենիք:

Իսահակեանը սկսել է գրել ոտանաւորներ 12 տարեկան հասակում: Բայց նա յայտնեց 90-ական թւականների երկրորդ կիսում: 1898 թ. լոյս տեսաւնրա առաջին ժողովածուն «Երգեր և վերքեր» վերնագրով, որ անմիջապէս ամենքի ուշագրութիւնը գըրաւեց: Նրա մասին գովասանական քննադատութիւն գրեց Աղքալեան «Մուրճ» ամսագրում: 1903 թ. հըրատարակւեց նրա երկրորդ՝ լիակատար ժողովածուն: Վերջումը նա տւել է մի պօէմա «Աբու-Ալի-Մահարա» վերնագրով:

ԲՍՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսահակեանը իր երգերի մօտիւներով և լեզով, Յ. Թումանեանի նման, մօտ է կանգնած ժողովրդին: Նա ևս ժողովրդի հարազատ զաւակն է և օգտում է ժողովրդական բանաստեղծութեան յըստակ աղբիւրներից. բայց և այնպէս մեծ տարբերութիւն կայ նրանց մէջ: Թումանեանը ուժեղ է վիպական բանաստեղծութեան մէջ, Իսահակեանը՝ զուտ քնարերգակ է, դասարիւն լիրիկ: Թումանեանը վարպետ է պատմելու և նկարագրելու մէջ, Իսահա-

կեանը՝ զգացմունքներ արտայայտելու մէջ: Առաջինի մուսան ունի իր առանձին միջավայրը. դա զգացմունքների աշխարհն է: Նա ևս սիրում է բնութիւնը, բայց այնքան, որքան նա համապատասխանում է բանաստեղծի հոգու տրամադրութեան և խոհերին: Նրանց լեզուն էլ տարբեր է: Թումանեանը գործ է ածում գրական լեզու ժողովրդականի խառնուրդով, Իսահակեանը՝ Աղքանդրապօլի բարբառը, բայց ազնւացրած և զտած:

Մտնենք այն զգացումների աշխարհը, ուր մեզ տանկում է Իսահակեանը:

Ինչպէս շատ բանաստեղծներ, նոյնպէս և Իսահակեանը, ունեցել է իր սիրոյ առարկան: Դա Շուշանն է կամ Շուշիկը, որին նւյիրել է բազմաթիւ ոտանաւորներ: Իսահակեանը ինքը խոստովանում է, որ իր քնարի հզօրագոյն և միակ լարը սիրոյ լարն էր: «Գիշերն եկաւ, զով հոգի ընկաւ, Աստղունք լումնին ձէն տւին.

Լումնակն ելաւ, մով հոգի ընկաւ,

Հաւքերն ինձի ձէն տւին:

Ես վեր ելայ հոգի առած,

Զարկի սրտիս լարերին.

Սիրոս խնդաց, կուրծքս թնդաց,

Ու լարերը կարւեցին:

—Մենակ սիրոյ լարը մնաց

Սրտիս անհուն խորքերում.

Ու սուրբ սիրոյ երգը մնաց

Կեանքի ամեն ծալքերում»:

Բազմաթիւ սիրային երգերի մէջ բանաստեղծը տալիս է իր սիրոյ պատմութիւնը: Դա եղել է անսահման, բուռն սէր, որը յափշտակել կլանել է նըրառ ուշ միտքը և հոգին: Նա պատրաստ է իր

եարի ստներն ընկնել, նրա ստրուկը գտնալ: Նրա համար կդառնայ վշտի ցօղ, գիշերւայ հով, վարդ, երկինք, ծով, արե, լուսին, մի խօսքով, այն, ինչ որ սիրուհին կուզէր («Կուզես լինեմ վշտի ցողեր»): Սիրուհուն գրաւելու համար, նա թւում է իր հոգու բոլոր գանձերը, հաւասարյնելով, որ ինքը տիեզերքի «պերճ հիւսւածքն» է, որ իր հոգում «Երկինքն է երգում», որ իր սրտում բռնկում է «սիրոյ հրդեհը» և աղմկում «վշտի հեղեղը» («Տիեզերքի պերճ հիւսածքն եմ»):

Բայց ինչ օգուտ մի այդպիսի սիրուց, եթէ նա մի անբուժելի վէրք պիտի բանար սիրահար սրտի մէջ և անվերջ տանջանքներ պատճառէր: Աւաղ. անդին ընկերը չհասկացաւ և չգնահատեց նրան, նրա բարձր սէրը և վսեմ հոգին, և թողեց նորան մենակ («Տանջւած սիրու»): Ինչու մռուցաւ խռառումը, ինչու ծաղրեց նրա սէրը: Դա ուրեմն սուտ սէր էր, աղջիկը անզգայ, ժէս սրտի տէր արարած: Նա լալիս, հեկեկում է, երբ տանում են նրա եարին.

«Եարիս տարան, ջանիս տարան.

Հոնդուր հոնդուր կուլում ես: »(Դարդս
«լացէք»):

Վիրաւորւած երգիչը պատրաստ է մինչեւ անգամ թուլը կապել, ձեւ նստել, համել հարսն ու փեսային և «նամարդ տղի» հետ կռւելով՝ սպանել, արիւնը խմել և այսպէս սիրաը հովացնել («Էս ճամբէն ոլոր մոլոր»): Երբ կրքի բռնկումն անցնում է, երգչի սրտում եղած վէրքը մնում է յաւիտեան անըոյժ: Նա չէ կարողանում մռուանալ եարին: Շատ լաց լինելուց նրա սիրաը դառնում է «մեծ ծով»: Պօէտի հոգեկան կեանքի մէջ մեծ գեր է կատարել նրա մայրը, որին նւիրւած են մի քանի շատ

սիրուն և զգայուն երգեր: 1903 թ. հրատարակւած «Բանաստեղծութիւնները» նա նւիրել է իր «անգին մօրը»: Միայն մայրը կարող է հասկանալ որդու դարդը, սրտի վէրքը: Մօրից է ստացել նա իր հոգու քնչութիւնը, մայրն է սովորեցրել նրան սիրել բարին և ազնիւը, կռւել չարի դէմ («Գուցէ իմ հեծեծանք»): Օտարութեան մէջ նա «ազիզ» մօրն է յիշում և կարօտում է նրա տեսութեան և գուրգուրանքին («Մայրիկիս»).

«Երբ քունդ գայ, լոյս գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյը տամ,
Սրտիդ կլնեմ վառ կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...»

Նրան մռուանում և թողնում են ընկերները, եարը, բայց մայրը—երբէք: Երբ նա շատ տարիների պանդխոտութիւնից յետոյ վերադառնում է հայրենիք, նրան ոչոք չէ կամենում ճանաչել՝ աղքատ էր և փոշու: միայն մայրն է խկոյն ճանաչում և որդու վզովն ընկնում ու լալիս («Դարդը սրտիս, աղքատ ու խեղճ»): Երբ որդին գժբախտութեան մէջ է, ով է աշքը անկած նրա ազատութեան սպասում, եթէ ոչ մայրը («Կոռնկները շարան-շարան»): Միակ անձը, որ կարողանում է մեղմացնել երգչի վիշտը և միսիթարել, դա նրա մայրն է: Նա կուզէր հեռու երկրում մեռնել, որպէս զի մայրը որդու դարդը և մահը չիմանար:

Ընկերական սէրը նոյնապէս թելադրել է բանաւ ընկերաստեղծին զրել մի քանի ոտանաւորներ: Նա սիրում է կան սէր իր պէս տանջւած ընկերին «(Ընկեր»): Երբ ազիզ լիները մեռնում է, նա մեծ կարօտով է յիշում նըրան և դառը ողբում նրա վաղաժամ մահը («Ընկերիս յիշատակին»):

Բնութիւն Մի շարք ստանաւորների մէջ բանաստեղծն արտայայտում է իր սէրը դէպի գեղեցիկ բնութիւնը: Բնութիւնը նրան գրաւում է ոչ միայն գեղեցկութեամբ, այլ և այն բարերար ազգեցութեամբ, որ զործում է բնութիւնը մարդու հոգու վրա: Իսահակեանը չէ սիրում նկարագրել բնութիւնը՝ միայն նկարագրելու համար: Բնութիւնը նրա մէջ ծնեցնում է զանազան խոհեր և զգացումներ: Բնութիւնը նըրա աչքում շնչաւոր, զգայուն էակ է, որ գիտէ սիրել, վշարնալ, քնել, արթնանալ: Երկինքն իր աստղերով, անապատը իր թախիծով և լուսութեամբ, գիշերւայ անդորրութիւնը, ձմեռւայ սառնամանիքը, անտառը, հովը, ճահիճը, մի խօսքով, բնութեան ամեն մի առարկայ և երկոյթ բանաստեղծի մէջ յարուցանում են զգացմունքներ և խոհեր: Անապատի գիշերային խորհրդաւոր լուսութիւնը անդորրութիւն է բերում պօէտի հոգուն, որ հուլւում է «վեհ լուսութեան մէջ» («Կեանքի ժխորից»):

Քամին երգում է գաղտնի երգեր, նրա միտքն էլ սլանում է հեռու, ծանր խշում է լացող ուսին, և նրա սիրաը տխուր հեռում է («Պայծառ լուսնեակ»): Բնութիւնը պօէտի սիրաը լցնում է անուշ թախիծով, միտքը թաղում անուրջի մէջ և աչքերին քուն բերում:

«Շգարշ ամպեր երկիրն առան,
Լուսնեակն ազօտ կշողայ.
Լոփիկ ճահճում հանդարտմարմանդ
Նուրբ եղեգնը կը գողայ.
Արագիլը մենակ ու լուռ՝
Եղեգնի մօտ կը քայլէ,
Կը մըտորէ՝ խոր ու տխուր,
Ճահիճն նւազ կը փայլէ»:

Մոայլ ափին մենակ նստած՝
Սիրոտ անուշ կը թախծի.
Ու անուրջում միտքս թաղւած՝
Քունն աչքերիս կը հանգչի:

Այսպիսի անուրջ և ինքնամոռացում պարզեռում է պօէտի խոնջացած հոգուն հանգտութիւն: Հանգտացնում են նրան և անտառը իր թովիչ սօսափիւնով, և առւի խոխոջիւնը, և ծառերի ստերը («Յողնած եմ, անտառ»): Նա կուզեր թաղւել բնութեան գրկում՝ Ալագեազի լանջերում («Ես որ մեռնեմ...»)

Երկնքի վառ աստղերը, որոնք անվերջ թափառում են անհունութեան մէջ, ազատասիրական մըտքեր են յարուցանում և ասում են պօէտին:

Ի՞նչպէս կարող է վեհ, վսեմ հոգին
կապւի, շղթայւի
Իր ստրուկների և տէրերի հետ.
Ել, և թափառիր, ով ազատ ողի»...

Իսահակեանի բանաստեղծութիւնների մէջ բնութիւնը յաճախ ներդաշնակ կապւած է լինում նրա հոգու հետ, օր. «Պարզկայ գիշեր»: Մի ուրիշ տեղ երկնքից վառ աստղերը ընկնում են, և վարդ ու շուշանը թառամում, որովհետև պօէտի կեանքը կը տոր կտոր վշրւել է («Մութը գրկած գետ ու գետին»): Ալագեազը ծածկւել է մառախուղով, որովհետեւ պօէտի սիրան էլ մառախուղ է պատել («Աև, մութ ամպեր»)

Բնութիւնը երբեմն անտարբեր է լինում դէպի բանաստեղծը և մինչեւ անգամ նրա արամագրութեան հակառակ: Մինչդեռ գարնան բնութիւնը պճնուռում է զարդերով և սար ու ձոր ծագկում ու կանաչում են, պօէտը «զարիր, հիւանդ ճամբորդ է», «աշխարհից կարօտ և սիրոյ կարօտ» (Էյ, կանաչ ախպէր):

իսկ երբ մի անգամ ծարաւից պապակւած կամեցաւ զուլու աղբիւրից ջուր խմել, աղբիւրը ցամաքեց, քար դարձաւ։ Այստեղ բնութիւնը նոյն իսկ ներհակ է դէպի բանաստեղծը։

Այսպէս ուրեմն սէրը իր լայն մաքով մեծ տեղ է բռնում իսահակեանի բանաստեղծութեան մէջ՝ սէր դէպի կոյս, դէպի մայր, դէպի ընկեր, դէպի բնութիւն։

Բացի սիրային մօտիւներից, Իսահակեանի պօէզիայի մէջ մենք գտնում ենք և ուրիշ մօտիւներ։ Դա պօէտի անձնական վիշտը, հիասթափութիւնն է, նրա ներքին աշխարհը։ Այդպիսի ոտանաւորների մէջ նա յոռետես է։ Բանաստեղծի բաժինը տանջանքն է, բայց այդ ոչինչ, եթէ միայն չմարի հաւատը դէպի իր միաքը և իր անձը։ Նա ունէր և հաւատ և յոյս և սէր, բայց մարդիկ կաժան են, և նրա սիրար խորտակեցին։ Մարել է նրա եռանդը և ոգեսրութիւնը, հաւատը հանդել է («Հաւատս հանգաւ»)։ Աշխարհը լի էր վառ երազներով, այժմ աչքից ընկել է, ամենքը նրան օտար են («Աշխարհը վառ էր»)։ Զահէլութիւնը անցել է, սիրար ամայացել («Տիուր, զիսակոր»)։ Սիրտը սառել, մեռել է ծանր դարդից («Սիրտս մեռել է»)։ Դարդը ուրուրի պէս կերել է նրա սիրար («Մշուշն եկաւ»)։ Կեանքի տաղտուկից յոզնել է նրա հոգին։ Նա շատ է տանջել մարդկանց ձեռքից։ Մարդիկ սիրտ չունին։ Աշխարհը նամարդ օձ է։ Անցաւոր է ցաւի բընակավայր, անսիրա և ունայն։ Եւ չարժէ ապրել։ Եթէ աշխարհի տէր էլ գառնանք, վերջը ճիճուների կերակուր ենք («Օրս արաւում»)։ Եթէ երգը չլինէր, ի՞նչ կլինէր մարդու կեանքը, երգն է, որ միսիթարում է։

Ո՞րտեղից է այս մոայլ հայեացքը կեանքի և աշխարհի վրա։ Մեզ յայտնի է սիրային երգերից, որ սէրը նրա սրտի վէրքը խորն է բաց արել, նրա ծանր դարդը հէնց խաբւած սէրն է։ Մեզ յայտնի է նոյնպէս, որ նրան վշտացըել են ընկերները։ Մի անգամ նա հիւանդ, անյոյս ընկած էր, և ընկերները նրան թողին մենակ երեսի վրա և հեռացան («Եւ ես կեանք մտայ»)։ Մի անգամ էլ ծովի ափին ընկած էր նա վիրաւոր, ընկերները ուրախ ժպտալով անցան մօտիվը, և ոչ մէկը նրան ձայն չտւեց։

«Երազիս տեսայ, որ ծովի ափին ես ընկած էի՝ խոր վէրքը սրտիս,

Եւ ալիքները մեղմ երգում էին,

Անուշ օրօրով ինձ անդորր տալիս։

Երազիս տեսայ, որ ընկերներս

Ռւրախ և ժպտուն անցան ծովափով,

Բայց ախ, ոչ մէկը ինձ ձայն չըտւեց,

իսկ ես լուռ էի մահւան խոր վշտով։

Ահա բոլորը, ինչ որ կրել է բանաստեղծը, ինչ որ դառնացըել է նրա սիրար։

Այս վշտի և հիասթափութեան երգերի մէջ դիսնանս են կազմում նրա հոգու հպարտութեան և և անձնամոլութեան երգերը։ Այստեղ բանաստեղծը իրան համարում է մարդկութեան տուածնորդ, մարդկարէ։ Այսպիսի ոգով առգորւած են նրա մի քանի տանսաւորները։

Այդ ոգին նրա մէջ դրել է նիտչէն, նորագոյն ժամանակների նշանաւոր պօէտ ։ Փիլիսօփաններից մէկը, որ զօրեղ ազդեցութիւն ունեցաւ եւրօպական գրականութեան և մաքերի վրա։ Միւս կողմից, իսահակեանի վրա ազդել է նաև ժամանակակից սիմ-

ւոլիստական ուղղութիւնը։ Նիտչէն անհատականութեան ջատագով էր։ Նրա նպատակն էր մարդուն բարձրացնել ամբոխի վրա։

Անհատականութիւնը նրա իդէալն էր։ Ապագայ իդէալական մարդը գերմարդն է (Übermensch)։ Նա ասում է. «Այն բոլորը, ինչ որ դուք համարում էք բարի, ազնիւ, առաքինի, ճշմարիտ, սուտ է. դուք ստեղծել էք ձեզ համար յայտնի բարոյական գաղափարների մի կախարդական շրջան, որից գէնը անցնել չէք համարձակում։ Ձեր թերը, ձեր ազատ թոփչքը կաշկանդել էք քարացած հասկացողութիւններով»։

Նիտչէն համարւում է գերմանացոց լաւագոյն ոճաբաններից, որի գեղեցիկ, բանաստեղծական ոճը, մտքերի հզօր թափը հմայիչ ոյժ ունէր։ Ժամանակակից վիպասանները և բանաստեղծները իրանց վրա զգացել են Նիտչէի զօրեղ ազգեցութիւնը։

Գերմարդը դարձաւ և նրանց իդէալը։ Իրանց դրւածքների մէջ նրանք մտցնում էին նիտչէականութիւն։ Նիտչէականութիւնն ազգեց և հայոց գրականութեան վրա։ Նրա ազգեցութեան ենթարկւեցին հայ գրողներից երկուաը՝ Փափագեան և Իսահակեան։

Մի ամբողջ շարք բանաստեղծութիւններ տողորւած եննետչէական ոգով։ Բանաստեղծի հոգին թափառում է անհունութեան մէջ, թռչում է աստղերից աստղ «հեռու վայրերում», նրա սրտի մէջ տիեզերքի վերքերն են։ Նա տիեզերքի պերճ հիւսւածքն է։

Նիտչէականութիւնը ամենասուժեղ կերպով սրտայայտւել է «Տիեզերական զանգ» ստանաւորի մէջ։ Ողջ տիեզերքը մի մեծ, անհուն զանգ է, իսկ պօէտի հոգին նրա լեզւակը։

«Եւ ես ապատում և անապատում

Լուռ թափառում եմ հոգիս ծանրացած։ Ողջ տիեզերքը մի մէկ, անհուն զանգ եւ հոգիս նրա լեզւակը վըսեմ»։

Զանգը զողանջում է անհունութեան, ճշմարտութեան և գեղեցկութեան երգը։ Դա նրա հոգին է զողանջում։ Նա մարդարէ է։ Նա մտնում է ամբոխի մէջ նոր պատգամներով, նա խայթում, քարոզում է։ Բայց նա օտար է ամբոխին։ Նրան հայածում են և ծաղրում։ Իսկ նա ականջ չէ զնում ծաղրին։ Նա ոտը գրել է մարդարէի ճամբան և երգել է ազատութեան և վեհութեան երգեր—և տանջանքի պատկ ունի ճակատին։ Նրա նպատակն է—աստղոտ, վսեմ ապագան («Փշէ պսակը»)։ Նա որոնում է, նա կամենում է գտնել ճշմարտութիւնը, որպէս զի նրա լոյսը աւետէ խաւար աշխարհին և մուլար մարդկութեան վեհ կեանք տայ («Զայնս հնչում է»)։ Նա իրան կարող է զգում այսպիսի դերի համար։ Նրա սիրող երկինք է, սիրո կտայ կոյսին, կեանք կտայ անապատին և ամայի սրտին («Սիրտս երկինք է»)։ Նա տիեզերքի պերճ հիւսւածքն է, նրա մէջ երկինքն է երգում, նրա սէրը հրդեհ է, նրա վիշտը հեղեղ, նրա երգերը ճոխ են։ Նրա սիրոյ մի կայծը բաւական է, որ կոյսը բուռն յոյզերով այլուի («Տիեզերքի պերճ հիւսւածքն եմ են»)։ Նրա վէրքերը մէծ տիեզերքի հսկայ վէրքերի կաթիներն են, նրա խօսքը հրդեհ, նա վշշում է մարդկանց սրտերը («Մայրիկ, հիւանդ եմ») Զնայած, որ նա կամենում է վերաստեղծել մարդկութիւնը, բայց խուսափում է մարդկութիւնից։ Ամբոխը նիւթապաշտ է, քամում է երգից հաց և հաճոյք։

Նրա հոգին փոքը է և ստոր, ամբոխի մէջ նա մենակ է և տխուր, ինչպէս արմաւենին անապատում։

Նա կամենում է ապրել ոչ թէ ամբոխի մէջ, այլ ամբոխի վրա, անհունութեան մէջ և միայն իր ստերը փոել ամբոխի վրա, («Ընկերս»): Նա գնում է դէպի արև և գիտէ, որ ամբոխը պիտի հետևէ նրան, որովհետեւ ամբոխը նրա ստերն է («Եւ այն մռայլ»)... Նրա երգը կեանքն է, բայց տեղ չունի աշխարհում, չոր սրբատերի մէջ («Իմ երգին»): Մինչև անգամ՝ ընկերները նրան չեն հասկանում. նա ծաղրում է նրանց սրբութիւնը. նրա հոգին չար է, չարիքն է պաշտում. նա մռայլ, մենակ է, անյաղթ, հզօր և միտքը հպարտ («Այս վեհ կնճիւներն»): Ահա ինչու պօէտը կամենում է հեռանալ երկրից դէպի վեր, տիեզերքի խորքելում նոր կեանքի պատգամներ խլել, իր կամքը դարձնել օրէնք («Թափ կուտամ թեերս»): Նրա հոգին կամենում է թափառել տիեզերքի հեռու եզերքում, հպարտ և մենակ արտասւել, խորհել լրիկ և յաւերժ խոկալ: Նա իր վեհ երգերը երգում է հեռու վայրերում ազատ և մենակ և շաղ է տալիս աստղերի պէս: Նրա հոգին կուզէր վայրի բաղի պէս լինել մենակ, անսէր և թուշել հեռու և լուռ վայրերում՝ ծովի քարափին նստել և երգել («Ծովի ծոցից»): Այսպէս ահա պօէտի հոգին գեզերում է անորոշ և հակասական տրամադրութիւնների մէջ: Մերթ երկրից կտրւած, մարդկանցից զգւած՝ ձգտում է դէպի երկինք և աստղերը, դէպի անհունը, տիեզերքի ծայրերը, իսկ երկրում դէպի անապատ, ծովի հեռու ափերը, ուր նա կարող է վայելել անուշ անդրութիւն, զմայլանք, ուր կարող է երգել իր վեհ երգերը: Մերթ նոր պատգամներով մտնում է ամբոխի մէջ խայթելու և քարոզելու, առաջնորդելու դէպի վսեմ ապագան:

Անձնապաշտութիւնը այստեղ միանում է մարդասիրութեան հետ: Այդ հակասութիւնը հասկա-

նալի է: Պօէտը կամենում է միաժամանակ երկու հոգու դեր կատարել՝ նիտչէի և մարգարէի: Մի կողմից, բացի իր հպարտ, հզօր, ազատ անհատից, ոչինչ չճանաչել կամ ամենաշատը իր «ստերը» միայն փոել ամբոխի վրա. միւս կողմից, ճշմարտութեան լոյսը աւետել աշխարհին և մոլար մարդկութեան վեհ կեանք ներշնչել:

Որոնք են սակայն բանաստեղծի նոր պատգամները, ինչպէս է հասկանում նա «աստղոտ, վսեմ ապագան», ինչպէս կարելի է ապրել հեռու վայրերում և միւնոյն ժամանակ մարդկանց աւետել ճշմարտութեան լոյսը, զրա պատասխանը չէք կարող գտնեք նրա նիտչէական երգերի և մարդկարէական բոնաստեղծութիւնների երկար շարքի մէջ:

Իսահակեանը վերտանում է երկնքից գարձեալ իր հարազատ միջավայրը, երբ ոկտում է խօսել ժողովրդի արակց: Այդպիսի զրւածքներում կոյր հետեւողութեան նշոյլ անգամ չկայ: Այստեղ նա բոլորովին ինքնուրոյն է: Այստեղ նա այնքան անկեղծ է, հայրենի բնութեան և գեղջուկի կեանքի մի քանի գծերը ներկայանում են այնպիսի վառ գոյներով և այնպէս խոր զգացւած, ինչպէս կարող է միայն Իսահակեանը: Մրգան գեղեցիկ են, օրինակ, Շիրակի բալլագները: «Իմ փերին» զարթեցնում է նոյն տրամադրութիւնը, ինչ որ հայնէի «Լորելէյլ». երկուսի մէջ էլ համարեան նոյն պատկերն է նկարագրւած՝ գետ, չքնաղ փերի, զմայլւած երիտասարդ: Հիանալի է «Բինգեօլը», այն զբախտավայրը, որտեղ չնկանկալով հովի է փշուժ սարի լանջերից, քչքչալով առուն հոսում ձորերում, ծաղկանց ծովում բուրում են բոյր և երգեր, ծփում են սէզ ու արօտ, որտեղ բիւրեղ լճի ծոցում լոյսանում է հիւրին՝ անընկեր, այնքան դիւթիչ, որ նոյն խիկ

հրեշտակը երկնքից վայր է ընկնում Բինգեօլը հիւրիի
հետ միասին ապրելու համար։ Նոյնպիսի հիացմամբ
խօսում է պօէտը Ալագեազի բնութեան մասին.
«Ես որ մեռնեմ, ինձի թաղեցէք,
Ալագեազի լանջերում,
Որ Մանթաշից հովերը գան,
Վերաս հևան ու երթան։
Գերեզմանիս չորս դին փուխն
Վայրի դաշտից ծփծփան
Եւ ուսերին էլ մազերն արձակ
Վրաս ընկնեն, ամռուշ ջան։
Եւ այսպէս հայրենի բնութեան բոլոր գեղեց-
կութիւնը՝ Ալագեազ, Բինգեօլ, Արփաչայ, Արագ—
միշտ գրաւել են բանաստեղծին, որ ճոխ բառերով և ժո-
ղովրդական ոգով գովում է նրանց. ալւան ալւան
ծաղիկներ, նշխուն հաւքեր, մարմանդ հովեր, առ-
նուշ քամի, փէրուղ երկինք, զմբուխտ սարեր—ահա
ինշպիսի գոյներով է նկարում իր մայրեին բը-
նութիւնը։ Նոյնքան մեծ հմտութեամբ նկարագրում
է նա գեղջկուհուն, պատմում է նրա դարդ ու ցա-
ւերի և դառը դադած մի կտոր հացի մասին։
«Խեղձ աղքատի հոգին դուրս գայ,
Քարից—հողից հաց քամէ,
Բեռով հայը հարստին տայ,
Հարուստն իշխէ, վայելէ։

ԱԲՈՒԻՆ-ԱԼԱ-ՄԱՀԱՐԻ *)

Խսահակեանի վերջին տարիների աշքի ընկնող
երկն է «Աբուլ-լլա Մահարին»։ Դա բանաստեղծի առա-
ջին խոշոր գործն է։ Բանաստեղծութիւնը ամբողջա-

պէս տոգորւած է յոռետեսութեամբ։ Մարգարէն
գնում է անապատում ուղտերի քարւանի հետ։ Զան-
գերի միալար հնչիւնը միակ ձայնն է, որ խանգա-
րում է անապատային լոռութիւնը։ Աբու-Ալա-Մահա-
րին քայլերն ուղղում է դէպի Արևելք, դէպի պայ-
ծառ արևը։ Նա ձգտում է հասնել արևին։ Նրան պա-
տել են խորհրդածութիւններ կեանքի մասին։ Ոչինչ
աշխարհում չկայ մնայուն։ Բոլորը դատապարտւած
է կորստի։ Նա զատապարտում է մարդկութիւնը,
նրա հաւատալիքը, նրա պիղծ կենցաղը և բարք ու
վարքը։ Չկայ անկեղծութելին, ամեն տեղ սուտ և
կեղծիք։ Ոչինչ մխիթարական չկայ նրա շուրջ։ Սմեն
ինչ վհատեցուցիչ։ Թէկ նա գնում է անապատով
արևին հասնելու, այսինքն՝ կատարելութեան, բայց
ներքուստ հաւատացած է, որ արևին երբէք—չի
հասնի։

Բանաստեղծութեան գլխաւոր արժանիքը նրա
գեղեցիկ նկարագրութիւնն է։ Անապատը իր խորին
լոռութեամբ, որ խանգարւում է միայն զանգերի զօ-
ղանջիւնով, անծայր անապատը իր խորհրդաւորու-
թեամբ, Աբուլ-Ալա-Մահարին իր յոռետես մտքերով
—այս բոլորը կազմում են նրա բոլոր գեղեցկութիւնը։
Տաղաչափութիւնը ընդունել է վիպական ձև, գրւած
է 20-ոտնեայ վանկերով և համապատասխանում է
քարւանի գանգաղարժ ընթացքին։

Ինչ վերաբերում է ներքին իմաստին, նա ա-
ռանձին կարևորութիւն չէ ներկայացնում։ Վիշտը,
թախիծը, հիասթափութիւնը երգել են համաշխար-
հային վշտի բանաստեղծները՝ սկսած յոյն դրամա-
տուրդ եւրիպէդից մինչև Բայընը և նրանից յետոյ։
Սակայն ժողովրդի մէջ պէտք է ոչ թէ հանգնուլ
հաւատը, յոյսերը, բարի գործը, այլ ընդհակատակը,

*) Բաղդադի հաչակաւոր բանաստեղծը։

զարգացնել նրա մէջ մարդասիրութիւն, ազնիւ ձըգտումներ, իդէալներ:

Հսդհանուր հայեացք Իսահակեանի տաղանդը արտայայտւել է զվարապէս քնարական բանաստեղծութեան մէջ: Նրա սիրած միջավայրն է զգացմունքների աշխարհը: Նրա պօէզիայի մէջ տիրապետող մօտիւն է սէրը իր ամենաաշխարձակ մտքով՝ սէր դէպի մայր, սէր դէպի ընկեր, սէր դէպի բնութիւն: Մայրենի բնութիւնը բաւականին մեծ տեղ է բռնում նրա ոտանաւորների մէջ: Բազմաթիւ ոտանաւորների մէջ նա արտայատում է իր անհատական զգացումները՝ սէր, ուրախութիւն, վիշտ, թախիծ, մտորումներ և այլն: Երբեմն, նիշշէի ազդեցութեան տակ, նա հանդէս է գալիս գերմարդու դերում, բարձրից է նայում ամբոխի վրա, խարազանում է նրա պակասութիւնները: Նա մեծ կարծիք ունի իր մասին՝ հպարտ է, մարդարէ է, խուժանը նրա «ստերն է միայն»: Բայց նիշշէական ոգով տոգորւած բանաստեղծութիւնները քիչ արժէք ունին: Նրանց մէջ ամենաբնորոշն է «Տիեզերական զանգը»: Իսահակեանը սակայն իր փառքը ձեռք է բերել իր ուրիշ ընդունակութիւններով: Նա հանդիսանում է իրոք ժողովրդական ցաւերի և ուժախութեան երգիչ, նա միակ բանաստեղծն է, որի երգերը ամբողջովին տոգորւած են ժողովրդական ոգով: Նրա տասնեակ ոտանաւորները դարձան երգեր, աարածւեցին նոյն իսկ ամենախուլ անկիւններում, ժողովուրդը զմայլանքով ականջ էր դնում նրա երգերի տիրուր հնչիւններին՝ «Դարդու դնում նրա երգերի տիրուր հնչիւններին», «Մաճկալ», «Որուլացէք», «Սիրեցի», եարս աարան», «Մաճկալ», «Որուկան ախպէր» և այլն: Նրա լեզուն թէև Ալեքսանդրապոլի լեզուն է յիշեցնում, բայց նրա գոեհկական բարձրերից, կոպտութիւնից միանգամայն զուրկ է և

բոլորովին մաքրւած և զտւած է, շնորհիւ իսահակեանի: Տաղաչափականը նոյնպէս սիրուն է, կարճ, թեթևասահ:

Իսահակեանը իր ինքնուրոյն բանաստեղծութիւնների մէջ, մեր զբականութեան պատմութեան նորագոյն շրջանում, եղակի երևոյթ է: Նրանից առաջ և յետոյ չէ եղել ոչ մի բանաստեղծ—երգիչ, որ յիշեցնէր իսահակեանին:

ՄԻՒՍ ԲԱՆԱՏԵՂԾՆԵՐԸ

90-ական թւականների հայկական պօէզիայի գլխաւոր ներկայացուցիչները եղան վերոյիշեալ բանաստեղծները:

Նոյն այդ թւականներին գրական ասպարիզում երևացին մի քանի ուրիշ բանաստեղծներ՝ Յակոբ Յակոբեան, Յարութիւն Թումանեան, Դերենիկ Դեմիքեան, Վահան Միրաքեան և այն։ Մինչև XIX դարի վերջը նրանք գրում էին իրանց անդրանիկ ոտանաւորները։ Իրաքանչիւրը հրատարակեց իր բանաստեղծութիւնների ժողովածուն փոքրիկ գրքոյկներով։ Նրանց մէջ տպւած ոտանաւորները առանձնապէս ոչինչ չէին ներկայացնում, նրանց մէջ աչքի ընկնող ոչինչ չկար։ Միայն ոտանաւորների արտաքին ձերից, լեզւից և մի քանի յաջող բանաստեղծութիւններից կարելի էր եզրակացնել, որ գրանք յուսատու գրողներ են։ Բայց քանի որ նրանք 90-ական թւականների ընթացքում չտւին առանձին արժեք ունեցող գրւածքներ, ուստի նրանք տեղ չեն կարող ունենալ այդ գարեշընում։

Յիրաւի, այդ յուսատու հեղինակները մասամբ արդարացրին իրանց վրա դրւած յոյսերը, և իրաքանչիւրը տւեց մի քանի յաջող, երբեմն և շատ յաջող գործեր։ Բայց այդ գործունէութիւնը վերաբերում է հետեւեալ դարի առաջին տասնամեակին, որ գուրս է իմ ծրագրից։ Իմ նպատակն է առայժմ տալ XIX դ. ոռսահայ գրականութեան ամփոփ

պատմութիւնը։ Ուստի այդ նոր շըջանի բանաստեղծների գնահատութեան վրա կանգ առնել չեմ կարող։ Միայն այսքանս կասեմ, որ վերոյիշեալ հեղինակները հետեւեալ դարի տասնամեակին դարձան աւելի բեղմնաւոր և աւելի յաջող։ Երբ V պրակը (90-թւականների վիպագրութիւնը) լոյս կտեսնի, հաւանական է, որ ես շարունակեմ ներկայ աշխատութիւնը XX դարի առաջին տասնամեակի վերաբերեալ։ Այն ժամանակ ես կանգ կատնեմ և այն հեղինակների գնահատութեան վրա, որոնց վերելիշեցի։ Կիսուեմ և այն յուսատու սկսնակների մասին, որ գրական ասպարէզ են մտել XX դ. առաջին տասնամեակում, այն է՝ բանաստեղծունի կուրդինեան, Տէրեան և Միքայէլ Մանուէլեան։

ԹԱՏՐՈՒՆ

90-ական թւականներին կենդանացաւ և թատրոնը: Թատրոնը վերականգնելու համար, դերասաննեանը առաջարկում է կազմել «դրամատիկական կօմիտեա», որին կը յանձնաբարւի ժողովել, նւյիրատւութեան միջոցով, 2500 ը., որով կապահովվի թատրոնի գոյութիւնը մի տարով, 1891—92 թ.: Երբ այդ գումարը ժողովեց, յուլիսի 11-ին գումարւեց ժողով մասնակցութեամբ մօտ 40 թատերասէրների: Վճռեց պահել մի խումբ այդ սեզոնի ընթացքում և մինչև մեծ պասը ամիսը չորս ներկայացում տալ: Թատրոնական մասնաժողովի անդամներից ընարեցին՝ իշխան Ն. Ամատունի, Ալ. Թարխանեան, Յ. Յովհաննիսեան, տ. իշխանունի Մ. Բէքթարէգեան, Տէրնիկողոսեան, Կոնստ. Հէջուրեան և Շիրւանզադէ: Դրանցից հինգը ճանաչւեցին մասնաժողովի անդամներ, իսկ երկու վերջինը՝ փոխանդամներ: Անդամներից իշխան Ամատունին հրաժարւեց, իսկ նրա տեղը բռնեց Հէջուրեանը:

Հայոց թատրոնը, երբ սկսւեցին ներկայացումները, ընդհանրապէս բաւարար մուտք էր տալիս: Սկզբում բեմ հանւեցին՝ Ռոբիէլ Ակոստա, Թանդածօջախ, Օրւայ չարիք, Հբէուհի, Արշակ II Գալֆայեանի, Պարոն դը Պուրսօնեակ Մօլիկերի: Խմբի մէջ կար և Սիրանոյշը, որ աւելի և աւելի բարձրանում էր հասարակութեան աշքում: Խմբի մէջ էին՝ Աբէլեանը, որ առաջին անդամից սկսեց իր վրա գրաւել

հասարակութեան ուշադրութիւնը, Պետրոսեանը, որ արդէն յայտնի էր: Թատրոնական սեզոնի վերջում ընդհանուր մուտքը և ծախսը կազմում է 18764 ը. 94 կ.

1892—93 թ. թատրոնական գործը գտնւում էր իշխ. Ն. Ամատունու ձեռքում. նորընտիր կօմիտեար, որ կազմւած էր իշխ. Ամատունու ցանկացած անձեռից (դրամատէր Յ. Թումանեանց, Ստ. Սուլիանեանց, Ն. Տէրնիկողոսեանց, ա) իր գէմ լարեց հասարակութեան մի մասը, որի ձեռքումն էր 1881—92 թ. թատրոնը: Թատրոնը, նոր դեկավարների օրով, զուրկ լինելով նիւթական և բարոյական աջակցութիւնից, յաջողութիւն չունեցաւ: Սեզոնի սկզբից արդէն ներկայացումները սկսեցին տալ դիմիցիտ, չնայած, որ խմբի մէջ կային այնպիսի դերասանն—դերասանունիներ, որպէս Հրաչեա, Պետրոսեան, Աբէլեան և այն:

Նոյն այդ տարում մի այլ խումբ տալիս էր ներկայացումներ Բագւում: Խմբի անդամներն էին՝ օր. Վարդիթեր, օր. Մարի—Հրանոյշ և Ալէքսանեան—ալուսեցիք, իսկ անդամներից՝ տ. Փուռանձէմ, պլ. Ստֆրագեան, Վրոյը, Աւետեան, Մանուէլեան Միքայէլ, որ նոր էր ու դրել բեմական ասպարէզը:

1894 թ. թատրոնը ոչ մի կենդանութիւն չէր ցոյց տալիս: Շարունակում էին մամնաւոր անտրապենեօնների ձեռնարկած անյաջող և անհետաքըրքրական ներկայացումները:

Թատրոնը վերականգնեց 1895—96 թւականի սեզոնում, որ տեսց մինչև բարեկենդան: Խումբը կազմւած էր ընկերական հիմքի վրա և Աբէլեանի դեկավարութեամբ: Դա դերասանական առաջին հայ ընկերութիւնն էր, որի լոգունդն էր՝ par inter pares բոլորը հաւասար:

Սեզոնի սկզբում այդ ընկերութեան գործը դեռ

ևս կաղում էր: Բայց հետզհետէ ներկայացումները դառնում էին աւելի հետաքրքրական, որի շնորհիւ թատրոնի յաճախորդների թիւն էլ մեծանում էր: Խումբը տալիս էր կանոնաւոր ներկայացումներ: Բէմ էին համեստում «Դօկտօր Շտօկման», «Սնանկութիւն», «Օթէլլօ», «Երևանդ Ա», «Բաղդասար աղբար», «Աղասի», «Մեծապատիւ մուրացկաններ», «Ղարաբաղի աստղագէտը», «Դօն-Դրիգօրիօ» և այլն:

Մամուլի մէջ տպւում էին բեցենզիաներ: «Մուրձի» բեցենզենան էր տողերիս գրողը: Այս թատերաշրջանը նշանաւոր է նրանով, որ մի տարւայ ընթացքում մէկը միւսի ետևից բեմ հանեցին նոր, ինքնուրոյն պիեսներ՝ Պարոնեանի «Բաղդասար աղբար», «Մեծապատիւ մուրացկաններ» և փոխադրութիւններ «Աղասի» («Վէրք Հայաստանի» վեպից), «Ղարաբաղի աստղագէտը», (Զուբովի ուռւերէն վեպից):

Սեզօնը վերջանալուց յետոյ դերասանները փոքրիկ խմբերով թափառում էին Անդրկովկասի զանազան քաղաքներում՝ Բագու, Ալէքսանդրապոլ, Ղարս, Շուշի, Սղնախ, Թէլաւ, Ախալցխա, Ախալքալաք, Դիլիջան:

Այդ տարի մեռաւ թատրոնի երկարամեայ յուշաբար Կ. մատինեանը:

1897 թ. սկսած՝ մինչև հետևեալ տարի սկզբները Բագուն դարձաւ հայոց թատրոնի կենտրոն: Գործի գլուխ անցաւ հարուստ Հ. Մելիքեանը: Կազմւեցին թատրոնական վարչութիւն և բեպերտուարական մասնաժողով:

Դերասանական խմբի անդամներն էին՝ տիկնայք Սիրանոյշ, Մայսուրեան, Մելիքեան, Աւետեան, օրիորդներ՝ Վարդիթեր, Մարի-Հրանոյշ, Վարդուհի:

Դերասաններ՝ Արէլեան, Պետրոսեան, Աւետեան, Թուլեան, Ալէքսանեան, Վրոյր, Օհանեան, Յարութիւնեան, Արագսեան, Ստեփանեան և այլն:

Սեզօնը բացւեց 1897 թ. հոկտ. 15 «Հոգով աղքատներ» դրամայով: 1897—98 թատերաշրջանի ընթացքում ներկայացւեցին՝ Պատիւ, Արդիւնաւոր պաշտօն, Ժօրժ Դանդէն, Պէտրոս, Անանձի սանձահարումը, Զաւակ, Սամէլ, Խանում, Ամուսիններ, Տարտիւֆ, Ակապէնի արարքները, Անպատիւ չեն ծնւում, կամելիազարդ տիկին, Քոյլ Թէրէզա, Դարբնապետ, Երկրորդ երիտասարդութիւն և այլն:

Դերասանական խմբի բեժիսեօրն էր տ. Հրաշեա, որ 4 ներկայացումից յետոյ հրաժարւեց: Յետոյ առ ժամանակ այդ պաշտօնը կատարեց Պետրոսեանը, որին փոխարինեց Ալլավերդեանը: Քանի որ թատրոնական գործի գլուխ կանգնած էին հարուստ դասակարգի անձինք, օրինակ՝ Հ. Մելիքեան, միւս կողմից, խումբը կազմւած էր յայտնի արտիստներից, որոնց մէջ կային և առաջնակարգ գերասանուհիներ, ուստի ներկայացումները անցնում էին մեծ մասամբ լցւած գահիճի առաջ: Այդ յաջողութիւնը դրգեց թատրոնական վարիչներին շարունակելի իրանց գործունէութիւնը և հետևեալ տարին: Նրանք աշխատում էին մի քանի բարեփոխութիւն մացնել թատրոնական գործում—ընտրել հմուտ բեժիսօր, պահանջել, որ թարգմանութիւնների լեզուն լինի կանոնաւոր և մաքուր, լրացնել բեպերտուարի մեծ թերութիւնը—ինքնուրոյն պիեսների բացակայութիւնը:

Երկրորդ թատերաշրջանը վերջանալուց յետոյ, դերասանները խմբերով ներկայացումներ էին տալիս գաւառներում: Դա վաղուց սովորութիւն էր

դարձել։ Բագւի խումբը մի մեծ կորուստ ունեցաւ։ Օգոստոսի 20-ին կաթւածից մեռաւ Թուրքեանը, տաղանդաւոր կօմիկը՝ 30-ամեայ բեմական գործունէութիւնից յետոյ։

1898—99 թ. թատերաշրջանի գերասանական խմբի մէջ աւելացել էին տ. Ազնիւ, Փառանձէմ, օր. Գարագաշ, իսկ տ. Աւետեանը չկար խմբում։ Դերասաններից աւելացել էին Աղայեան, Տէր-Դաւթեան, Ռէժիսօր նշանակւած էր Ս. Հախումեան։

Բագւի գերասանական խումբը դարձեալ երկու տարի պահպանեց իր գոյութիւնը։ Երբ Թիֆլիսում իշխանուհի Մ. Թումանեանի ձեռներէցութեամբ հիմնեց Դրամատիկական ընկերութիւնը, թատրոնական կենտրոն դարձաւ կրկին Թիֆլիս։ Ընկերութիւնը շարունակում է իր գործունէութիւնը մինչև այժմ։ Սակայն այդ գործունէութեան մասին ես չեմ խօսի ներկայ պրակում, որովհետեւ դա վերաբերում է հետեւեալ դարի տասնամեակին։

Ց Ա Ն Կ

Էջ.

1. 80-ական թւականները։ Ամլութեան տարիներ.	5— 28
2. Աղայեան	29— 48
3. Յառաջադիմական շրջան և գրականութեան բարգաւաճում։ Մամուլ։ Մուրճ ամսագիր։ Միւս լրագիրները.	49— 62
4. Բանաստեղծութիւն։ Յովհաննէսեան	63— 76
5. Թումանեան	77— 91
6. Ծատուրեան	92—103
7. Մանուկեան	104—114
8. Իսահակեան	115—131
9. Միւս բանաստեղծները	132—133
10. Թատրոն	134—138

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տիգրանուհի (սպառւած)	.	.	.	—	50	կ.
Զալարիների արշաւանքը (սպառւած)	.	.	—	10	»	
Խորտակւած կեանք (սպառւած)	.	.	1 ր.	—		
Բանաստեղծութիւններ և պօէմաներ I (սպառւած)	.	.	.	—	50	»
Դոկտօր Բօշայեան	.	.	.	—	50	»
Նկարիչ Թաշճեան (սպառւած)	.	.	—	35	»	
Վերածնւածը (սպառւած)	.	.	—	35	»	
Դէպի վեր (սպառւած)	.	.	—	10	»	
Բանաստեղծութիւններ և պօէմաներ II	—	40	»			
Ռուսահայ գրականութեան պատմութիւն I	—	40	»			
Ռուսահայ գրականութեան պատմութիւն II	—	40	»			
Ռուսահայ գրական պատմութիւն III	—	50	»			



Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր *

Տպաժր

Էջ. տող

32	26	1667	.	.	.	1867
40	16	հաւերժահարսներով	յաւերժահարս-			ներով
44	1	իր ետեկից կանչելով	առջին	—		
56	19	80	.	.	.	90
61	23	ամբողջապէս	.	.	.	ամբողջապէս
67	10	արծաթի	.	.	.	արծաթէ
75	26	լերիկ	.	.	.	լերիկ
93	24	քաղաքային	.	.	.	քաղաքային
95	2	վասակեմ	.	.	.	վասակեմ
102	22	—	.	.	.	լինչպէս
103	21	սահուն,	.	.	.	սահուն:
127	25	Հանէի	.	.	.	Հայնէի.

*.) Հարկաւոր է առաջ ուղղել վրիպակները, յետոյ կարդալ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0373282

46. Հայոց գրականութեան պատմութիւն Վ. Փա-
փաղեանի 1 50
47. Երիտասարդութեան մեղքեր, Համբանդի, թ.
Արայ Արայեան 1 —
48. Շարլ Մ. Հիգրա, գրամա, թ. Վ. Փա-
փաղեանի 50
49. Դասագիրք Ընդհ. պատմութեան, Վինօգրա-
դովի, Հին-գար, թ. Գ. Խաժակ 1 25
50. Հասարակական գաղափարները և Պատկանեա-
նի և Ս Շահագիշի բանաստեղծութիւնների
մէջ, Բ. Իշխանեանը 1 —
51. Կենսագրութիւն «Գուռոտենքիրգի» 40
52. Հայերէն գրադիտութիւն ուսուցանելու բա-
նաւոր նախապատրաստութեան մասին ու-
սուցիչների համար Ա. Աղայեանի 10
53. Աղա-Նեգրի, Բանաստեղծութիւններ, թարգ.
Յ. Յակոբեանի երկու հոտոր 50
- 54-55. Դասընկեր, Ռաշմաճեաննի Զիլինգարեանի
Ա. մաս 40 կ. Բ. մաս 50
- 56-57. Հայ գրողներ Ա. մաս, կազմ. Ահարոնեան,
Աղայեան, Թաւմանեան և Փափաղեան 2 —
Բ. մաս 2 —
58. Պալէնց, Գիւղացի Եիւանէրը, թարգ.
Ս. Թապացիանց 1 25
59. Բէն Հուր, թարգ. Տիբայը վարդ. 1 —
60. Դ. Աւետեան. թատրոնական գրադարան I 1 —
61. Տէրն ու բանւորը, Տօլստոյի, Խան-Ազատ 20
62. Հայոց Պատմութիւն, մասն. ա. Խանազատի
և Վարդանեանի 50
63. Գ. Աւետեան. թատրոնական գրադարան II 1 —
64. П. Меликесьть-Бековъ. Родство грузинъ съ
испанцами 25
65. Դասընկեր III ա. 60
66. Арм. древности въ Аккерманѣ. Л. Мел.-Бекъ — 25
67. Կարգ Առողութպաշտութեան Գ. Աղանեանց
ա. ք. VII տպ. 50
68. П. Толстой. Живой трупъ 25
69. Լ. Մանելիան. Խուսահայ գրականութեան
պատմութիւն Գ. 50

Դիմել՝

Тифлисъ Книжный магазинъ „Гуттенбергъ“.

Գիւն է  Կ.